Այժմ հնդկական կառավարությունը հաստիվ աշխատանք է ծավալում գյուղացիական մասը անտեսությունները արտագրական, մասնավարումն ու սպառողական կուլիբրատիվներում միավորակ ուղղությունը և նրանց ֆինանսական ու տեխնիկական օգնություն է ցույց տալիս: Իրականացվում են սժամայրների զարգացման ծրագիրը և սեղգային զարգացմանը նպաստելու ծրագիրը՝ անունները կրող միջոցառումները նորաստեղծ գյուղական համայնքներ իրենց միջոցներով կառուցում են ոտոզման շրանցքներ, յուրացնում հողային նոր տարածություններ, կառուցում զարդոցներ, բամբակյաններ, լավացնում ճանապարհները: Հնդկաստանում սկսել են սակզովել նաև ցուցադրական տիպի պետական գյուղատնտեսական ձևերակալությունները: Այդ բոլոր միջոցառումներին նպաստակ է նետամնաց գյուղատնտեսական երկիրը վերածել սննդիսի երկիր, որը կարողանա արտադրել բավարար բաշանկուլլամը սննդում իր 436 միլիոնանոց բնակչության համար և գյուղատնտեսական հումք: զարգացող թեթև ու սերնդի արդյունաբերության համար:

Հնդկաստանի գյուղատնտեսությունը մեջ շատ կարևոր դեր է խաղում երկրագործությունը: Նա ապրիս է գյուղատնտեսական արտադրանքի շրտ հնդկերրող մասը: Դա հնդկիի սննդի հիմնական բամբին է, բանի որ հնդիկը ամենից շատ սնվում է բուսական կերակուրով:

Հնդկաստանի կլիմայական պայմանները հնարավորություն են ստեղծում ամբողջ արրի գրազովել երկրագործությամբ: Տարվա որ եղանակին էլ թուշուս լինենը Հնդկաստանի վրայով, ամեն ժամանակ կտեսներ զաշտերում աշխատող մարդկանց, որովհետև աշատող կլիման տաք է, ձյուն երբևք չի գալիս և ցրտեր չեն լինում (բացառությամբ Հիմալայաներից):

Հնդկաստանի գյուղատնտեսական աշխատանքի ժամանակամիջոցը զգալի շահով արուում են մուսոնային անձրևները: Նրանց հետ են հարմարեցվում ցանքն ու բերրահավաքը: Մուսոնների կանոնավոր հերթափոխումը Հնդկաստանում սակզովել է մեկը մյուսից տարրեր երկրագործական երկու ժամանակաշրջան՝ աշտյան կուլված ամառային ցանքի և ձմեռային ցանքի ժամանակաշրջաններ: Ամառային ցանքի ժամանակաշրջանը, որ Հնդկաստանում խարիֆ է կուլվում, սկսվում է մայիսի կեսերին՝ մուսոնային անձրևներից երկու շաբաթ առաջ: Խարիֆից հետո հնդիկ գյուղացին սպասում է անձրևի: Նա այդ ժամանակ ազանապալի վիճակում է և շարունակ ինքն իրեն հաջոց է տալիս՝ մուսոնը ժամանակին կրտ, թե՛ կուշանա: Իհարկե, նա անհանգստանալու պատճառ ունի, որովհետև համար է մուսոնը ուշանում և երաշտ է լինում: Ամառային ցանքի ժամանակաշրջանում մշակվում են գյուղատնտեսական բույսերի ութսուն տակոսը, այդ թվում լրինեք, կոլտպացրները, շտարերկղը, բամբակը և շուրթ:

Ձմեռային ցանքի ժամանակաշրջանը, որը ասրի է կուլվում, սկսվում է հոկտեմբերից և հասնում մարտ-ապրիլ ամիսները: Այդ ժամանակ են մշակում ցորենը, գարին, կորեկը և յուրատու բույսերը:

Ինչպես տեսնում ենք, Հնդկաստանում առատ բերրի ստացումը մեծապես կախված է մուսոնային անձրևները ժամանակին սեղալու հետ, որի ուշանալու դեպքում երկրին սով է պահանում: Ահա թե ինչու և՛ սեղալում, և՛ ներկայումս այդքան կարևոր է շրանցքների կառուցումը: Դա հնարավոր է գործնում բազմաթիվ գետերի շտրք ուղղել դեպի ծարալած դաշտերը:

Հնդկաստանի համար կարևոր խնդիր է նաև էլեկտրականների կառուցումը: Սեղ հայտնի է, որ ներկայումս մոզովրդական տնտեսության սապարեղում մեծ հեղաշրուում է առաջ բերել էլեկտրական էներգիան: Ինչպես գիտենք, սեղալու շարում մարդկության պատմության մեջ մեծ հեղաշրուում առաջացրեց շոգենեթենայի գյուտը: Սակայն ժամանակի ընթացքում շոգին իր գարը սապրեց, տեղը դիջեղով էլեկտրական

Անբողիային: Քանի որ չկեկտրան՝ ներգրայի օտազործումը երկրի արտադրողական ուժերի զարգացման լավագույն շահանքներից մեկն է, բնական է, որ Հնդկաստանն էլ արտադրության այդ ճյուղին պետք է կարճար տեղ տա:

Նորակառույց հիդրոէլեկտրակայաններից առավել նշանավորներն են Բհակրա-Նանգալիքը՝ Ստալեջ գետի վրա (Հյուսիսային Հնդկաստան) և Գամոդարինը՝ Մախանդի գետի վրա (Արևելյան Հնդկաստան): Սրանք համահնդկական նշանակություն ունեն: Գրանցիչ Բհակրա-Նանգալիքը ընդգրկում է Բհակրայի ամբարտակը՝ գյուղ հիդրոէլեկտրակայաններով և Նանգալի մագիստրալային շրանցքը, ոտագման մի քանի էլեկտրակայաններով:

Տասնչորս տարի առաջ, երբ Հնդկաստանը անկախ երկիր դարձավ, հնդիկ ժողովուրդը շատ բաներ ստիպված եղավ սկսել հենց այն տեղից, որտեղ կանգ էր առել երկու հարյուր տարի առաջ: Հասկանալի է, որ տասնչորս տարին կարճ ժամանակաշրջան է, որպեսզի վերացվի երկու հարյուր տարվա զաղուժային ժառանգությունը: Չգիտք է մոռանալ նաև այն, որ քի տարբերություն զաղուժաբարներից զաղատագրված այլ երկրների, ինչպեսին է, օրինակ, Չինական ժողովրդական անդրապետությունը, Հնդկաստանում տիրապետում են կապիտալիստական և նույնիսկ ֆեոդալական հարաբերությունները, որոնք խիստ կասեցնում են նրա նախնական աճաչքնալը:



Հնդկաստանում փնջարյան մեր ճանապարհորդությունների ժամանակ այնպիսիքն են Տիլպար գյուղը, որը գտնվում է Գեյից մոտ բառասուն կիլոմետր հեռու: Այդ գյուղի շատ բնակիչներ, կարբից գրգված, բացի երկրագործությունից, ընտրում են նաև մի այլ օժանդակ գրագումը, իսկ ոմանք էլ շատ հետաքրքիր գործով են զբաղվում՝ օձ են կախարդում: Գրանք մեծ մասամբ աղբատ գյուղացիներ են, որոնք դուրս գալով հայրենի գյուղից, թափառում են քաղաքից քաղաք,

լինում են մեծ մասամբ շուկաներում, հյուրանոցների դռները մտա: Այս մարդկանց եկրոպացիները հաճախ ֆակիր են անվանում: Ի զեպ, նրանք բաց օձ հմայելուց, կատարում են նաև դանազան ֆոկլորներ, գուշակություններ, որով վաստակում են, ինչպես սասցիներ, իրենց առօրյա ապրուստի մի շրջանը:

Քանի որ մենք Տիլպար գյուղ էինք գնացել օձ հմայողներին տեսնելու, ուստի նա պատմելու են նրանց մասին: Ֆակիրները, կախարդելու համար, ամենից շատ ընտրում են կորբային (փխապ օձին), որը ավելի աղդեցիկ է իր արտաբերով՝ հաստ վզով ու մեծ աչքերով:

Կորբային Հնդկաստանում անվանում են սկնգուղով հրերն: Չնայած նա թունավոր օձերից ամենատարափելին է, բայց քանի որ ֆակիրի համար ապրուստի միջոց է մտալում, ապա նա խնամում ու կերակրում է կորբային: Իհարկե, շատ ֆակիրներ զոհ էլ են գնում կորբային, բայց, շնաչած դրան, մի կտոր հաց վաստակելու համար մշուսները շարունակում են այդ գործը: Օձ հմայելու տեսարանն ինքիին շատ հետաքրքիր է: Օձ կախարդող՝ ֆակիրը, նստում է մի փոքրիկ մինգարի վրա և սկսում է նվազել իր գլուխն: Զամբյուղի մեջ, շուրջ ծածկված կորբան երաժշտության ձայնից սկսում է շարժվել, գլուխը երկաթացնել և գրավել երաժշտության աղջնույթյան տակ որթմիկ շարժումներ անել: Նա կամացկամաց բարձրացնում է դոմբը և երբեմն այնքան է վեր ձգվում, որ թվում է, թե կորբան պարում է պոլի վրա: Օձ հմայողը ավելի է սղեղրվում և բուրդ ուժերը գործադրում նրան ավելի շատ գերելու համար:

Հաճախ դուռնային ձայնակցում է երկուր ու կյոր դհուր, որի հնչյունների տակ օձերը կատարում են իրենց պարը: Եյսպիսի տեսարաններին վարժված հնդիկները ծիծաղում են, և երբ օտարականը վախենում է, Փորձված կախարդողը հաճախ օձերը փաթաթում է իր վզին, թևերին: Օտարականի անհանդրատանալը նրան ավելի է ոգևորում:

Մեր օձ հմայողը տեսնում է, որ դիտողներից կարելի է շատ բան սպասել, անմիջապես անցնում է երկրորդ գործու-



զույգանք՝ կորչալի և մանգուսայի մենամարտին: Օձ հմալողը նվազում է զուռնան, կողովից բարձրանում է կորրան՝ ուռած վրով և կախարդիչ աչքերով: Հետո նա զուռնան ցած է դնում և մյուս զամբյուղից բաց է քողոնում մանգուսային՝ օձերի սկևերիմ թշնամուն: Չնայած նա շատ փորք է, բայց ճարտիկ ու կատաղի գաղան է: Կորրան, մարդուն աչքքան ա՜տ սարսափ աղշող օձը, փորձում է փախել մանգուսայից, բայց վնդրինս, որ շատ հնարամիտ է, կայծակնային արագությամբ հարձակվում է կորբոյի վրա և ծածրակի մոտ կրծում է նրա ողնաշարը: Այդ ժամանակ կորրան պարավում է, ներկայացումը համարվում է ավարտված: Հենց դրան էլ ձգտում է ֆակիրը:

Նման էկզոտիկան շատ օտարականներ դասում են ինչ-որ խորհրդավոր և անհասկանալի երևույթների թվին: Մինչդեռ դրանք փորթիկ երևույթներ են և հարկ չկա քնդհանրացնելու և դատելու հնդկական սհաշալիքներին շարքին: Դա մի խումբ կարիքավոր մարդկանց զբաղմունքն է և ինքնին վերացող:

Բայց օձի հմայական զագանիքը կղազարի մեղ խորհրդավոր թվալուց, էթն հիշենք, որ երաժշտությունից օձը կախարդվում է: Ընդհանրապես, ֆակիրները աշխատում են այն սպավորությունը ստեղծել, թե օձ հմայելը ինչ-որ գերբնական ու թարգմած ուժի հետ է կապված և կորբոյին կախարդում են իրենց գերբնական զուռնալով: Մինչդեռ կորբոյին գերողը ֆակիրի երաժշտությունն է:

Հնդկաստանում շատ փորձեր են արել օձերին հմայել մարդու քացակալության գեպրում: Վերցրել են մագնիտաֆոնը, ձայնագրել են ֆակիրի երաժշտությունը և վերաբարադրել զամբյուղի մեջ գանձվող կորբոյի մոտ՝ ու երբ օձը լսել է սիր հրամայողի ձայնը՝ դուրսը բարձրացրել է և սկսել է նույն ձևով շարժուններ անել ու պարել:

## ՀԻՄԱԿԱՅՆԵՐՈՒՄ

Հնդկաստանը ինքնին մի ամբողջ աշխարհ է: Այս րանին նպաստել է նրա աշխարհագրական յուրօրինակ սուսնձնացումը և հասկուպես Հիմալայների առկայությունը, որը երկիրը բաժանում է Ասիական մայր ցամաքից:

Հիմալայների երկրագնդի ամենավիթխարի լեռնային սիսանն է, որի զգալի մասը գտնվում է Հնդկաստանի տերիտորիայում: Նա հագվազուտ գեղեցկությունների և զոռոզ գագաթների մի գարնանայի միակցություն է: Հիմալայների բնությունը Հնդկաստանի մյուս մասերից միանգամայն տարբեր է: Եթե հնդիկներից շատերի համար մյուսը իրոր որ տարօրինակ բան է, ապա դա Հիմալայի համար սովորական է: Այսանդ է՝ մյուսն կա, և՛ հավերժական մյուսապատ գագաթներ, և՛ սառցադաշտեր: Այս տեսակետից նրա բնությունը հիշտ հակապոսակերն է հնդկական արևադարձերի: Հենց Հիմալայ անվանումը գալիս է սուսկիրիտերին լիզվից, որը բառացի «ձյունների քնակատեղի» է նշանակում:

Հիմալայների պատենշի նման ձգվում է Հնդկաստանի հյուսիսում և երկիրը բաժանում կենտրոնական Ասիայից: Այս վիթխարի լեռնաշխարհին ժամանակին շատ մակդիրներ են տվել: Սրբեմն նրան «Ասիայի բարե մեծ գտի» են անվանել, կրթմն էլ՝ «Մեր մյուրակի սուպատ»:

Հիմալայների ամբողջ սիրտերը հակալական տարածություն է՝ զբաղեցնում: Նրա երկարությունը հավասար է 2,400

կիրմետրի: Եթև Հիմալայները մի պահ պատկերացնենք Եվրոպայի բարեկեցի վրա, ապա նրա մի ժայռ կլինի Անգլիայում, իսկ մյուսը կհասնի Կասպից ծով: Հիմալայները լայնությունը հասնում է 180—350 կիրմետրի, իսկ բռնած ընդհանուր տարածությունը մոտավորապես 650 հազար քառակուսի կիրմետր է: Այլ խոսքով, Հիմալայների բռնած տարածությունը երկուս ու կես անգամ ավելի է, քան Մեծ Բրիտանիայինը: Հիմալայները հարկի կողմի բացառիկ շափերի հասնող վեր բարձրացած մի հատվածն է, եթև մի պահ պատկերացնենք, որ այդ լեռները կարելի լիներ քաղցել ու փռել աշխարհով մեկ, ապա դրանից երկրագնդի մակերեսը 18—20 մետրով կբարձրանար:

Հիմալայները հին հունական աշխարհագրագետներին հայտնի էին Հիմաուս կամ Հեմոդոս անուններով: Այբրահեզը Մակեդոնացու արշավանքին մասնակցող հույները այդ լեռները անվանել են «Նեղիկանի Կովիստ»:

Հիմալայներով է պայմանավորված երկրի աճադին տարածությունների կլիման: Այդ լեռները պատնեշի նման փակում են Կենտրոնական Ասիայից եկող ցուրտ քամիների ճանապարհը, իսկ հարավից՝ մուսսոնների հոսանքը և խոնավությունը պահում միջին ու հարավային լայնքերում: Այս հսկայական պատնեշը անցնելու համար կան մի քանի լեռնանցքներ, որոնցից առավել հայտնի է Խասյիթը: Այստեղով են Մակեդոնացու բանակները Հնդկաստան մտել: Այստեղով են անցել Լենկթեմուրը, Նադիր շահը:

Միշտ էլ Հիմալայները մարդկանց գրավել է իր վեհուբյշամբ ու գեղեցկությամբ, բայց նրա անմատչելիությունը, ինչպես ասում են նրա անդամապային բարձունքը շատ խորհրդավոր է դարձնում այդ լեռները, որը համարվում էր գերբնական ուժերի ու աստվածների բնակատեղի: Պատահական չէ, որ Հիմալայներին «Նեղիկանի Սլիմպիտ» անունն են տալիս: Հին հնդիկների պատկերացումով Հիմալայները եղել է երկրորդակ աստվածների վայր: Առավել հռչակվել է Կալյասա լեռը, որին հին հնդիկները համարել են Երվա աստծու

բնակատեղը: Կալյասա անունով է կոչվել Էլլորայի ժայռակերտ անձարներից ամենից աշխի ընկնողը:

Հիմալայների հսկայական նշանակությունը ապացուցում է նաև այն փաստը, որ այստեղից են սկիզբ առնում Հնդեկաստանի ջրուտար գետերից շատերը: Հիմալայներում են ծնվում հնդիկների սրբազան Գանգեսը, Բրահմապուտարան, Զաման և Ինդոսի մի քանի վտակներ: Հիմալայները արտադարձ բարձր է: Այստեղ են գտնվում մեր մոլորակի ամենաբարձրագուր գագաթները: Հիմալայներում կան 500 գագաթներ, որոնք մշտապես ձյունապատ են և Եվրոպայի ամենաբարձր սարից՝ Մոնթբլանկը (4810 մ) բարձր են: Քառասուն գագաթ բարձր են 7000 մետրից, իսկ տասը գագաթ էլ ունեն 8000 մետրից ավելի բարձրություն: Դրանց մեջ ամենաբարձրն է Չամոլունգման կամ Ջոմոլունգման (Էվերեստը): Պակաս չեն Կանչենջանգան, Գաուրիգանկարը (որին երկար ժամանակ շփոթել են Էվերեստի հետ), Կամոնգ, Նանգա-Գինն և մյուսները:

Հիմալայների գագաթների լուսապսակն է վեհադանձ Չամոլունգման, որը ոչ միայն Հիմալայների, այլև ամբողջ աշխարհի ամենաբարձր լեռն է. ծովի մակերեկույթից բարձր է 8848 մետրով: Ի զեպ, երկար ժամանակ Չամոլունգմայի բարձրությունը համարվել է քիչ ավելի, այն է՝ 8852 մետր, սակայն վերջին չափումները ավելի ստույգ եղան և ստացվեց 8848 մետր:

Էվերեստ անունը այդ սարին ավել են անգլիացիները, որն ունի այսպիսի պատմություն: Երբ տասնիններորդ դարի կեսերին նրանց կողմից ուժեղացավ Հնդկաստանի երկրաբանական ուսումնասիրությունը, այն գլխավորում էր գեներալ Ջորջ Էվերեստը: Երկրաբանական աշխատողները տարվում էին նաև Հիմալայներում: Ուսումնասիրվում էին նրա գագաթները: Անդլացիներն էլ որոշեցին ի պատիվ Ջորջ Էվերեստի կոչել Հիմալայների ամենաբարձր լեռը: Նրանք հաշվի չառան, որ այդ սարը գեներալը այդ անցյալից ունի իր սեփական շատ սիմվոլիկ անունը՝ Չամոլունգման կամ Ջոմոլունգման, որը նշանակում է «Առաջավորների մայր» և գալիս է հինգի լեզվից:



միշտ է, ներկայումս վերականգնված է նրա վաղեմի անունը, բայց բանի որ մտա մեկ դար այդ սարը հայտնի էր անզիսացիների կողմից արված անունով, զրա համար էլ հաճախ Չոմոլունգվայի հետ միասին զգուժում է նաև էվերեստ, բայց վերջինս անմզում է փակագծի մեջ:

Մարդիկ հաճախ են փորձել նվաճել Չոմոլունգվան, հասնել նրա գագաթին: 32 տարվա ընթացքում շատ արյուհիստների բազմիցս փորձեցին հասնել Չոմոլունգվայի գագաթը: Բայց հասնել գագաթին չէր հաջողվում: Վերջապես, 1953 թվականի մայիսի 29-ին նեպալցի Տենսինգը և նորզելանդացի Հիլլարին բարեճաշող կերպով օդապարհելով իրենց նախորդներին փորձը՝ հասան աշխարհի ամենաբարձր կետին՝ Չոմոլունգվայի գագաթին: Այսպիսով մեր մայրաքաղիկն շնաջողվեց մարդկությանից թաքցնել իր վերջին անմատչելի կետը:

Հիմալայների երկրորդ գագաթը (Չոմոլունգվայից հետո) Կանչենջանգան (այլ կերպ կինչինջունգա) է: Նա գտնվում է Հնդկաստանի և Նեպալի սահմանի վրա, ունի 8585 մետր բարձրություն և Չոմոլունգվային դիցում է 26 մետրով: Հիմալայների գագաթները ընդհանրապես աճել են, բարձրարժև և գիհասարանչ: Նրանցից ամեն մեկը ճանապարհորդներին գրավում է յուրովի: Կանչենջանգայի մասին հիացմունքով է խոսում ավստրիացի աշխարհագրագետ և ալպինիստ կրոյլիկ Կրենկը: «Մեր առջևն է,— գրում է նա,— սևադամների բեռքը», նշանավոր Կանչենջանգան: Եթե հեռագիտակով նայենք, ապա նրա կողմնակի լեռների նիստերը ինքնուրույն լեռներ են թրվում: Սառցե պատերը հասնում են վիթխարի շափերի: Կարեւր է զիտել հակա լանջերը, որոնց վրա սառցազաշտեր կան: Բոլորը այդ պատերի վրա նկատում են սառույցների առաջացրած սկոսներ, որոնք շատ բնորոշ են Հիմալայների սառցապատ գագաթների համար: Եւ շատ անգամ եւ հեռադիտակով ուսումնասիրել իր տեսակի մեջ միակ այս գագաթը: Եւ նրան տեսել եւ՛ ն՛ առաջիտյան, վառ արևով լուսավորված, ե՛ւ՛ մայրամուտի մեղմ շողերի մեջ, ե՛ւ՛ անզամ աղուտ լուսնի փայլի տակ: Եվ ամեն անգամ լեռը ինձ պատկերանում էր խորհրդավոր ու ռ իրական: Այս սարը կարծես մեր աշ-

խարհին չի պատկանում, նա ճախրում է ինչ-որ վերին երկնակամարում: Նա, ինչպես ինձ թվում է, զերսզանցում է գագաթները՝ նվաճելու մարդկային հնարավորություններով:

Հիմալայների գագաթին կլոր տարին նստում է հալվեթական ձյունը: Քիչ ներքևում տարածված են արլյան մարգագետինները, որանց արածում են տեղացիների նախիրների ու հոտերը: Ավելի ցածրում փռված են լայնանիստ ու գեղանախի լեռնահովիտները, որոնց հիշեցնում են հնդկական բլուրիները: Այստեղ արդեն սար է, առատորեն աճում են բրինձ, ցորեն, գանաղան մրգեր ու բանջարեղեն: Այս մասերում արդեն բնակավայրեր կան:

Հիմալայների բնությունն է պատճառ եղել, որ նրա, հապակա հարավային լանջերում, հիմնվել են մեծ թվով կուրորտներ ու հանգստավայրեր՝ Սրինագար, Սիվլա, Զարչիլինգ, Շիլոնգ և արիչներ:

Հիմալայներում են գտնվում Հնդկաստանի երկու նշանավոր նահանգները՝ Քաշմիրը և Ասսամը: Ասսամից զեպի հյուսիս-արևմուտք՝ Հիմալայների խորքերում են գտնվում Բհուտան և Սիկկիմ իշխանությունները: Բակ հարավ-արևմուտքում էլ գտնվում են Մալայուր և Տրիպուրա շրջանները:

Ինչ վերաբերում է Նեպալին, ապա նա ինքնուրույն պետություն է, որի մայրաքաղաքն է Կատմանդուն:

## ՐԱՇԱՄԻՐԻ ՀՈՎՏՈՒՄ

Քաշմիրը Հնդկաստանի ամենահյուսիսային և միաժամանակ իր բնությամբ էլ ամենազեղապանսիլ նահանգն է: Պաշտոնապես նա կրկնակի անուն ունի՝ Ջամու և Քաշմիր, բայց ստորյա խոսակցության ժամանակ և ընդհանրապես նա հայտնի է Քաշմիր անունով: Քաշմիրը գտնվում է Պակիստանի և Չինաստանի (Տիբեթի) միջև:

Քաշմիրը Սովետական Միությանից բաժանվում է Աֆղանստանին պատկանող մի նեղ տերիտորիայով: Իր ժամանակին այդպես են արել անգլիացիները՝ բաղաբական հայտնի գործիչ Չերչիլի ջանքերով: Գրանով նա ուղում էր Հնդկաստանի և Սովետական Միության միջև անջրպես ստեղծել:

Քաշմիրը հարավային մասում բուն Հնդկաստանից բաժանվում է Փիր-Փանջալ շղթայով: Քաշմիրը մեր մոլորակի այն առանձնակի ու հետաքրքիր վայրերից է, որը կախարհում է մարդուն և նրա մոտ առաջացնում սեր ու հաճելի զգացմունք դեպի բնությունը: Այս հիանալի կերբում միահյուսվում են վեհապանծ Հիմալայների զազաթները, կանաչ մարգագետինները, լազոր լճերը, խոր և լայնահատ հովիտները, որոնք գարնանը և ամռանը ծածկվում են թավշյա խոտով: Ահա թե ինչ է գրում Քաշմիրի մասին հնդիկ գրողը. «Եթե բնության մեջ գեղես ապրում է գեղեցկությունը, եթե գուր ջանկանում եք դիտել զրոյառային պատկերներ, ապրել ամե-

նատաղը կլիմայում, զգալ Հիմալայների անկրկնելի կանչը՝ էկեք Քաշմիր: Բերև ձեզանից շատերին այս խոսքերը իրականության հետ առևտրվում չունեցող ազմկող սեկլամենթ բվան: Այն զեպրում աշխատեցեք ամեն ինչ ձեր աչքերով տեսնել»:

Հիմալայները մի շարք տեղերում կարտված է խոր և լայնանիստ հովիտներով, որտեղով հոսում են սառցադաշտալից սկսող շատ գետեր, իրենց ջրերը տանելով դեպի Ինդոս, Գանգես և Բրահմապուտրա: Այդպիսի հովիտների թվին է պատկանում Հիմալայների հյուսիս-արևմտյան մասում գտնված Քաշմիրի հովիտը, որտեղ գտնվում է Սրինագար քաղաքը: Այս հովիտը իր բնության ճարտարությամբ և գույների պայծառությամբ աշխարհի ամենազեղապանսիլ անկյուններից մեկն է: Հովիտը գրվերգել են պարսիկ բանաստեղծները, որոնք նրան սերկրային դրախտ են անվանել: Այս հովիտն ունի մոտ 140 կիլոմետր երկարություն և 40 կիլոմետր լայնություն (իսլայն մասում): Հովիտից հյուսիս և արևելք բարձրանում են Հիմալայան ձյունածածկ զապաթները, որոնց կենտրոնական մասում վեր է խոյանում Ծանգա-Փարթաթը 8126 մետր բարձրությամբ: Հովտով դանդաղ, սյրապատույտ գեպի արևմուտք է հոսում Կենտրոնական Հիմալայներից եկող Զեյամ գետը:

Գեպի Քաշմիր տառաղ դիտարկ ճանապարհը Ջեյամի հովտով անցնող խնուրին է: Քաշմիրի հովիտը գտնվում է ծովի մակերևույթից 1840 մետր բարձրության վրա և իր տեսարանների վեհությամբ մրցակիցներ թիչ ունի և՛ Ասիայում, և՛, գուցե, աշխարհում: Այս նահանգի ոչ միայն բնության գեղեցկություններն են հայտնի, այլև նրա զարմանահարյա սրահասանիքի համարյա ամբողջը է աշխարհով մեկ: Այստեղի վարպետների հմուտ ձեռքերով են պատրաստվում քաշմիրի նշանավոր շալիկը: Ի գեպ, այս շալիկը պատրաստում են «պաշա» կոչվող ցեղական այժերի աղվամազից: Այն շատ նուրբ է և թանկ է գնահատվում: Իր ժամանակին քաշմիրի շալիկը համարվում էին ամենամեծ նվերը:

1 Журнал «Современный Восток», 1960, № 2.



Քաշմիրցի վարդանները նուրբ փորագրողներ են՝ արծա-  
թի, սակու և սանդղալի փայտի վրա: Պակաս հիանալի չեն նաև  
քաշմիրցիների ասեղնագործ կտորները, դարբարյա իրերը,  
զորգերը:

Քաշմիրի ժողովրդի ուսումնասիրությունը հետաքրքիչ  
նշաթ է ստալիս ոչ միայն աշխարհագրադեռին, այլև ազգա-  
դրագիտին: Քաշմիրցիները բնավորությամբ խողազասեր ու  
հյուրասեր մարդիկ են: Եթե այդ երկրի մի ինչ-որ անձանոթ  
վաշրում զուր մուրովներ, կարող եք համոզված լինել, որ ձեզ  
սիրով կպաշտպանեն: Քաշմիրցիները պարզամիտ լեռնցի-  
ներ են, որոնք զբաղվում են փոքրիկ հողակտորներ մշակելով  
կամ անասնապահությամբ: Միայն զբոսաշրջիկների զավու  
ժամանակ, որը տեսւմ է մաշիսից մինչև սեպտեմբեր, եր-  
բանք կարողանում են մի քիչ աշխատել՝ մրգեր, ծաղիկներ  
կամ էլ հիանալի հուշանվերներ վաճառելով:

Քաշմիրի գեղատեսիլ հովտում է գտնվում իշխանություն  
մայրաքաղաք Սրինագարը (Սուրինագար), որը նշանակում է  
«Արևի քաղաք»: Նա կառուցված է Ջելամ գետի ափին՝ քաղ-  
մաթիվ կղզիների վրա, որոնք իրար են միացված յոթ կամուր-  
ջով: Սրինագարյն իրավամբ «Արևելքի Վենետիկ» են անվա-  
նում:

Սրինագարը ունի մոտ 250 հազար բնակիչ և գտնվում է  
ծովի մակարդակից 1600 մետր բարձրություն վրա: Քաղաքում  
կան մեծաքսոսործական և բրդյա գործվածքների ֆաբրիկա-  
ներ: Սակայն Սրինագարում յայն առարձում ունի արհեստը  
Այս քաղաքում հատուկ թանգարան կա, որտեղ կարելի է տես-  
նել Քաշմիրի վարդանների հիանալի ստեղծագործություն-  
ները:

Սրինագարը նաև Քաշմիրի մշակութային կենտրոնն է,  
իբ համալսարանով և այլ բարձրագույն հաստատություննե-  
րով:

Սրինագարից ոչ հեռու գտնվում է Գալ լիճը, որն ունի 8  
կիլոմետր երկարություն և 5 կիլոմետր լայնություն:

Այս գեղատեսիլ լիճը զբոսաշրջիկների նախընտրելի

վայրն է: Նրա վրա լողում են հատուկ նավակներ, որոնք  
հանգստյան տների զեբ են կատարում:

Քաշմիրում Մեծ Մոգոլների ժամանակաշրջանից շատ  
հուշարձաններ են մնացել, որոնց մեջ առանձնակի ուշադրու-  
թյան են արժանանում նրանց որոշ անկամ այգիները: Քաշմի-  
րի գեղեցիկ բնությունն ու զովասուն կլիման իր ժամանակին  
գրավել է Ազրալում և Գլխիում հաստատված արքաներին և  
իշխաններին, որոնք շողից պաշտպանվում էին զովասուն  
Վաշմիրում և հանգստանում այս շքեղ այգիներում, որոնք  
հայտնի էին «Մեծ Մոգոլներին» այգիներ անվան տուկ և հիմա  
էլ պահվում են խնամքով:

## ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԱՆՉՐԵՎՈՏ ՎԱՅՐՈՒՄ

Ննդկաստանի ծայր հյուսիս-արևելքում է գտնվում Ասամի նահանգը, որը հարում է Տիրեթին և Բիրմային: Հարավում Ասամը սահմանակից է Արևելյան Պակիստանին: Ասամի տարածությունը 220 հազար քառակուսի կիլոմետր է, բնակչությունը մոտ 10 միլիոն մարդ: Նրանք մեծամասամբ բնեզայացիներ և ասամցիներ են, կան նաև այլ ցեղեր: Ասամի բնակչության տարրեր գանգվածները գտնվում են դարգաման տարրեր մակարդակի վրա:

Բնեզայացիների և արևելա-բիրմական ցեղերի (նազա, դարո և այլն) միջև եղած տարբերությունները միշտ չէ, որ դրանց եկողի համար նկատելի են: Այդ անտեղյակությունը բխում է նրանից, որ Ասամը բնի է ուսումնասիրված Ասամի գլխավոր քաղաքներից են Գաուհատին, Ծիլլոնգը: Վերջինս Ասամի մայրաքաղաքն է և գտնվում է ժողի մակերևութային 1500 մետր բարձրության վրա: Բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա, Բահմապուտրայի հովտում, կազմում է 250 մարդ, իսկ լեռնային շրջաններում՝ 50 մարդ:

Կալվաթայի շոգից ու ազմուկից հետո Ասամը հանգստի բացառիկ հնարավորություններ ունի: Ասամը եկողը կարող է անզորություն գտնել եղևնու անտառներում, իսկ զրոսաշրջիկը, կարող է որոնել տարրեր ցեղերի կնդրոսիկ գանձեր: Ով որս է սիրում, կարող է առկնույթա անել շունչլիները, որտեղ գնա

Քափառում են վազրեր, հովազներ, սև արջեր, բիզոններ, վայրի գոմեշներ, փղեր և այլն:

Ասամի բնության դարձրեց է Բահմապուտրա (Բահմի դրի) գետը, որը անձրևի ժամանակ վարարում է, իր սուլորական մակարդակից բարձրանում 10 մետրով ու ծածկում հակառական տարածություններ: Այս բնական ոռոգման հետեվանքով առատ է լինում ջուլին ու բրինձը: Բայց Բահմապուտրան նաև հանախակի ափերումների պատճառ է լինում:

Ասամը հյուսիսից փակված է Հիմալայներով, հարավարևելքից՝ Բիրմական լեռներով, իսկ հարավ-արևմուտքից նա բաց է զեպի Բենգալյան գաղաթավայրը: Այգլիսի դիրքն էլ պատճառ է այն բանի, որ Ասամը շատ ավելի մեծ աստիճանով է ենթարկվում հարավ-արևմտյան ամառային մուսսոնների ազդեցությանը, քան Նեղիսասանի մնացած մասերը: Սովորաբար հունիսի կեսերին ամառային մուսսոնը արգեն հասնում է Ասամ և օվկիանոսից այստեղ է բերում մեծ քանակությամբ անձրև: Իդրո չէ, որ Ասամի ծայր արևմտյան մասում գտնվող Չեռապուներա բնակավայրը աշխարհի ամենաանձրևոտ վայրի հռչակն է վայելում: Չեռապուներա գրանցվում է Ծիլլոնգից հարավ՝ նրանից 50 կիլոմետր հեռավորության վրա: Չեռապուներայում տարեկան միջին հաշվով մինչև 12.000 միլիմետր մթնոլորտային տեղումներ են թափվում: Ի զեպ, Կրեմեն ալդ քանակը ավելի շատ է լինում:

Փորձենք Չեռապուներայի մթնոլորտային տեղումները համեմատել Երևանի տեղումների հետ: Բայց, նախքան այդ, վերհիշենք զայրոցական աշխարհագրությունից հետևյալը, որ աշխարհագրության մեջ գիտական լեզվով անձրևը, ձյունը, կարկուտը, ցողը, եղյամբ կոչվում են մթնոլորտային տեղումներ: Օգիբեութարանական կայաններում զրված են անձրեվաչափեր կամ տեղումնաչափեր, որոնցով չափում են տեղումների քանակը: Կայանի աշխատողները ամեն անձրևից հետո նրա պարունակությունը զտաարկում են մի շափոզ բաժակի մեջ, որը միլիմետրային բաժանում ունի, ապա մասնաձևում գրանցում ջրաչափերի բարձրությունը: Եթե ձյուն է զալիս, ապա զնում են ասք տեղ, որ ձյունը հալվում և հետո



լցնում են շափող բաժակի մէջ Տարվա վերջին այդ թվերը գումարում են և ստանում տեղումների ընդհանուր բանակը միլիոնտերով: Հաջած է, որ Երևանում տարեկան մոտ 320 միլիոն տեղումներ են թափվում: Համեմատելով Երևանի միջին տարեկան տեղումները Չեռապոլսիչայի հետ, կտասցվի ահեղի տարբերություն: Ստացվում է, որ Չեռապոլսիչայում մեկ տարում այնքան տեղումներ են լինում, որքան Երևանում 37 տարվա ընթացքում: Պատահական չէ, որ այս քաղաքին է արվում անճրեկ համարումներ՝ այնքան ուղիղորդ:

Աստամի բուսական մածկը կողմված է մշտադալար արևադարձային անտառներից: Աստամի թափումներում են պահպանվել Հնդկաստանում եղած առավել տիպական ու հետաքրքիր կենդանիներից շատերը:

Աստամի ջունդյիններում պատահող վայրի կենդանիներից և թռչուններից շատերին մարդն արգիս բուսեացրել է. դրանցից են՝ փիղը, գոմեշը, զերուն, հափը և շատ ուրիշներ: Սպայն, քանի որ փիղը բազմանում է միայն ոչ ընտանի պայմաններում, հետևապես նրանց ընտանի կենդանիների թվին չեն դասում:

Կար ժամանակ, երբ հնդկական անտառներում ամենուրեք կարելի էր փղերի հանդիպել՝ սկսած Հինալայների հարավից մինչև Հինդուստան թերակղզու մայր հարավը: Բայց ասինքն սրբ ժամանակի ընթացքում հասցրեց այն բանին, որ նրանք պահպանվեցին մուսուսային անտառների առավել վայրի, կուտական մասերում, զիտվորապես Աստամի, Ռասար-Պրազնի, Բենդալայի, Օրիտայի, Մազրաթի, Մայսուրի և Քերալայի նահանգների լեռնային ջունդյիններում:

Վայրի փեմուտմ փղերը թափառում են հասերով, որոնց սովորաբար առաջնորդում է մայր փիղը: Նրանք համարյա ամբողջ օրը ուտում են, բայց չուր խմում են օրը երկու անգամ՝ լուսարարցին և մարմատուրին: Փղերը սնվում են զբլիտավորապես կոշտ կերով՝ բամբուկով, շաքարիզեղով, ծառերի տերևներով: Օրվա ընթացքում մեկ փղի օգտագործած կերի ընդհանուր քաշը հասնում է մինչև 15 փթի: Փիղը օրվա մեջ քիչ է հանգստանում, այն էլ միայն կեռօրվա շօգին: Նա

լնում է սովորաբար կենդանիներին մոտ, կողքին պահած վիճակում: Իսկ եթե հանկարձ քուն է մտնում կանգնած վիճակում, ապա զա նշան է, որ փիղը վատառող է: Փղի կատարողածքն այնպիսին է, որ նրա համար նատեղը շատ անհարմար է, դրա համար էլ նա նստել չի սիրում:

Փեր ու արտասովոր ծանրաշարժ փիղը իրականում շատ ճարպիկ, ուժեղ կենդանի է: Խելացի՝ է արդյուր փիղը, Այս հարցին պատասխանենք մի գիտնականի խոսքերով, որը երկար տարիներ եղել է Նյու-Յորքի կենդանաբանական այգու գլխավոր և բազմակողմանի ուսումնասիրել է տարբեր կենդանիների վարքը: Այս գիտնականը իր ցուցակում նշած տասը առավել խելացի կենդանիների շարքում հնդկական փղին գրանցել է երրորդ տեղը, նրանից առաջ թվելով շինպանդն և օրանդուտան կապիկներին. փղից հետո հաջորդաբար գալիս են ձին, կուրքը, առյուծը, գրիլլին, գորշ արջը, քարայծու և շունը: Փղի խելացիությունը ամենից շատ օգտակար է լինում անտառներում, որտեղ նրան վարժեցնում են ծառերի հասարակար բաշխելու, զորեղու կամ հավաքելու և իբրև վրա գործելու մեջ: Փիղը օգտագործվում է նաև որպես բնականի անտառ՝ ծանրությունների տեղափոխելու համար և կարող է խոս ջունդյին կամ հանճուտի միջով դնել բոլորովին ճանապարհադուրսի տեղերով:

Փղերը կենդանական աշխարհի հսկաներից են, իսկ ցամաքային կենդանիների մեջ՝ ամենամեծը: Ասիական կամ հնդկական փղերը իրենց մեծությունը գիշում են աֆրիկյան փղերին: Հնդկական փղի բարձրագույն հասնում է մինչև 3 մետրի, իսկ մերեն քաշը մինչև չորս տոննայի (համարյա 55 անգամ ավելի, քան միջին մարդու քաշը):

Փղի մորթը հաստ է, գորշավուն և տեղ-տեղ ծածկված մազմզովներով: Վերին շրթները ձգվել և առաջացրել է կրճեթի, որը նրա համար ձեռքի զոր է կատարում: Փղից նստ ցանկություն կարող է մերթ կարճացնել, մերթ երկարացնել իր կնճիթը: Կնճիթի փղի համար հստատության և շոշափելիքի զգայության է նաև իսկ երբ փիղը ցանկանում է շուր խմել, ապա նա քիթածակով ներս է բաշտում, և կնճիթում

բաժնական հերոսի վերջնելուց հետո, բարձրացնում և դասարկում է կոկորդի մեջ:

Փղի վերին ծնոտից զուրս են ջյցվում երկու հսկա աատմ-ներ՝ ժանիքներ: Ընեց յոչ ժանիքներն են, որ փղոսկր են կոչվում: Դրանց երկուսուսուրը հասնում է մինչև երկու մետրի, իսկ բանը էլ 50-ից մինչև 90 կիրոգրամի: Ընդիկ հմուտ վարպետները փղոսկրից զմայլելի ու նուրբ զեղարվեստական իրեր են փորագրում: Սակայն հնդկական ոչ բոլոր փղերն են, որ ունեն ժանիք՝ կան այնպիսիները (սեմուկնա»), որոնք ժանիք չունեն:

Փղերը բնտանի պայմաններում հազվագույն են բազմա-նում: Ի զոհ, այգրպիսի գեպերից մեկը Մոսկվայի կենդա-նաբանական այգում 1952 թվականին տեղի ունեցած փղի ծնունդն էր, որին անվանեցին «Մոսկվիչ»:

Փղերի որսը շատ զովար գործ է և պահանջում է մեծ վարպետություն: Ընդիկները կանխապես չունգլիներում մի մեծ տարածություն են ընտրում և հաստ դերաններով ցան-կապատում: Դրանից հետո փղերին դանդաղան ձեռքով գայ-թակզեցնում, գեպի ցանկապատած վայրն են ըջում և ապա փակում են դուռը: Վայրի փղերի հետագա վարժեցումը և սորոտն ենթարկելը արզին կատարում են նրանց ընտելոց-ված կղբայրների միջոցով: Շատ կարճ ժամանակում վայրի փղերը ընտելանում և սկսում է սոսակար աշխատանք կա-տարել: Մովորարար ընտելացնում են փոքր հասակի փղե-րին՝ 2—15 տարեկաններին: Մեծահասակ փղերը զովար բն-տելացվելու պատանուով ծուղակն ընկնելուց հետո սովորա-բար ազատ են արձակվում:

Աստամի չունգլիների փնտրավոր աշխարհի ներկայացու-ցիչներից հետաքրքիր են վայրի հավիրը, որոնք հանդիսանում են մեր ներկա բնտանի հավիրի նախնիները:

Հավիրի հարյրները Հարավային Ասիան է: Մարդը նրանց առաջին անգամ ընտելացրել է Ընդկաստանում: Այստե-ղից նա անցել է Չինաստան, Եգիպտոս, որտեղից էլ Եվրո-պա և ապա օտարածվել աշխարհով մեկ: Ի զոհ, թուրքներին բնտելացումը մարդու կրօնից ավելի ուշ ժամանակաշրջանում է

է կատարվել, րան անասուններինը: Քեական է, որ հավերն էլ Եվրոպա են բերվել համեմատաբար ուշ ժամանակներում: Ընդկաստանի անասուններում մինչև հիմա էլ զոն վայրի վի-ճակում է մնում բանկիվյան կամ կարմիր արագազը: Նա մեր այսօրվա կենդանի դարբուցիչի նախահայրն է:

Երբեմն մարդու մոտ հարց է առաջ գալիս, թե ինչն է արագազը այդպես անժամանակ կանչում: Քանից պարզվում է, որ մեր ներկա արագազների պատկերը լինելով հասարակա-ծային երկրների «բնակիչ»՝ հարմարվել են տեղի բնությանը և նրանց բնազն էլ վարժվել է պան: Հասարակածային շրջ-ջաններում կլոր տարին գիշերը և ցերեկը հավասար են, այ-սինքն՝ տևում են 12-ական ժամ. արևը ծագում է ժամը 6-ին և մայր է մտնում ժամը 18-ին: Հետևապես մեզ համար արա-գազի անժամանակ արթնանալը հեռուանք է իր պայպերից մտացած գարավոր բնազդի: Երբ արագազը մեզ մոտ կեպի-չերին կանչում է, ապա այդ ժամանակ իր հայրենիքում ար-զին լուսաբայ է:

Թե Աստամի և թե ընդհանրապես Ընդկաստանի կեն-դանական աշխարհի ներկայացուցիչներին կարելի է հանդի-պել աշխարհի համարյա բոլոր կենդանաբանական այգիներ-ում, այդ թվում նաև մեզ մոտ, Երևանի կենդանաբանական այգում:

Ասամում ջունգլիներից ազատված տարածություննե-րում մշակում են բլեյ, բրինձ, ջուժի և այլ կուլտուրաներ: Հաս-կանայի է, որ այդտեղ արհեստական ոռոգման կարիք չի ըզ-գացվում: Նշված կուլտուրաներից ամենից կարևորը թխն է, որը Ընդկաստանի արտահանման մեջ կարևոր դեր է խաղում: Ասաա տեղումները, ջերմությունը և կարմրահողը լավ պայ-մաններ են ստեղծում թխնի մշակման համար:

Մինչև տասնութերորդ դարը ամբողջ աշխարհին Չինաս-տանն էր թեյի մատակարարում: Սակայն տասնիններորդ դա-րի սկզբներին Չինաստանից թեյը Ընդկաստան են բերում: Այդ ժամանակվանից Ընդկաստանում թեյի մշակումը հասուկ ուշադրության է արժանանում և կարևորություն ստանում:

Հարար ութնաշյուր բաաները թվականից թեյի մշակումը սկսվում է նաև Ասամում: Մեկ տասնամյակ հետո հնդկական



Քիչը սկսում են արտահանել Անդրիա: Քեյի շահավետությու-  
նը նկատի ունենալով՝ անգլիացիները Հնդկաստանում կազ-  
մակերպում են մի շարք ընկերություններ և ընդարձակում  
Քեյի պլանտացիաները, որոնք այսօր էլ զարգարում են Արև-  
մուջյան Հիմալայների՝ Ասսամին հարող ստորոտները:

ժամանակի ընթացքում Քեյի մշակումը տարածվում է  
յուև Հարավային Հնդկաստանում, Սակայն, նրա տեսակարար  
կշիռը Հնդկաստանում մշակվող Քեյի ամբողջ արտադրանքում  
մեծ չի և կազմում է ընդամենը 21 տոկոս:

Քեյի կուլտուրան Հնդկաստանի անաեսուրբյան մեջ շատ  
կարևոր դեր է խաղում: Նա արտահանվող կարևորագույն  
սպրանքներից մեկն է: Հնդկաստանի Քեյի հավաքը 1960—61  
թվականներին կազմել է 350 հազար տոնն, որի 60 տոկոսը  
բաժին է ընկել Ասսամին: Ասսամը աշխարհի Քեյի մշակման  
Հիմնական կենտրոններից մեկն է: Ասսամի շերտնիվ է, որ  
Հնդկաստանը Քեյի մշակումով առաջին տեղն է կրավում: Աս-  
սամի Քեյի պլանտացիաների ընդհանուր տարածությունը  
կազմում է 150 հազար հեկտար: զա Հնդկաստանում եղած  
Քեյի պլանտացիաների ընդհանուր տարածություն կենս է  
կազմում:

Ասսամի բաղադրների ուսումնասիրությունը շատ ժամա-  
նակ չի խլում: Ասամիև նշանավոր բաղադրներից են Եիլունդը,  
որը Ասսամի մայրաքաղաքն է և Գաուհատին, որը Ասսամի  
երկաթուղղգծի վերին կետն է:

Մի քանի խոտը Եիլունդի մասին. ինչպես ասացինք նա  
զանվում է 1500 մետր բարձրության վրա: Հնդկաստանի գե-  
ղեցիկ վայրերից է. նշանավոր կուրորտ է: Եիլունդի շուրջը  
կան բազմաթիվ գեղատիպի բլուրներ, հովիտներ: Բայց գրո-  
ուաշրջիկների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում  
Նեապոլեոնը, որը գտնվում է Եիլունդից հարավ-արևմուտք:

Ասսամի հարավային մասում գտնվում են Հնդկական  
հանրապետության երկու տերիտորիաները՝ Տրիպուրան և  
Մանիպուրը:

Առաջինը՝ Տրիպուրան, ընկած է Ասսամի և Արևելյան  
Քափիստանի միջև, խիկ երկրորդը՝ Մանիպուրը ընկած է Բիր-  
մայի և Ասսամի միջև:

## ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Մինդճիա և Սաուդուրա լեռները, Նարբազա և Տապոի  
դեղերը Հյուսիսային և Հարավային Հնդկաստանի միջև եղած  
սահմանաբաժան գիծն են: Այդ լեռների և գետերի հետ միա-  
պին հյուսիսից եկող նվաճողներին արդեւք են հանդիսացել  
յան խիտ և անանցանելի անտառները: Եարժվելով Գեկանի  
սարահարթից հարավ մենք կմտնենք տաժիկների երկիրը՝  
Տամիլնադ և Մայսուր: Իսկ դրանից ավելի հարավ ընկած է  
Քերալան: Հարավը ունի իր բովանական ուրույն պատմությունը:  
Նրա բնակիչները պատկանում են դրավիդյան խմբին և սաեռ-  
ծել են համապատասխան քաղաքակրթություն: Հարավային  
Հնդկաստանը ավելի շատ է զարմանք պատճառում, քան  
Հյուսիսայինը: Հնդկական կյանքի անցած շրջանի շատ  
ստանձնահատկությունները լավ են պահպանվել: Հարավում  
Հայտնի է, որ Հյուսիսային Հնդկաստան ներխուժած Տրոսակ-  
ները շատ հաճախ մինչև Հարավ չեն հասել: Չէ՞ որ Ալեքսանդր  
Մակեդոնացու արշավանքները, արաբական ու մոնղոլական  
ներխուժումները կատարվել են միայն Հյուսիսային Հնդկաս-  
տանում: Այս բոլորը նպաստել է, որ Հարավը մեն ավելի  
շատ հնդկական էլ հենց Հարավն էլ, ինչպես ասում են,  
մնաց որպես Հնդկական օրթոդոքսություն հնարարն:

Հարավում բնակվում են դրավիդյան չորս ժողովուրդ՝  
կաննարա, տելուգու, տամիլի և մալայոլի: Նրանք կազմում  
են Հարավի բնակչության 80 տոկոսը: Կաննարա ժողովուրդ

տարածման շրջանը Մայսուրի նահանգն է, նրանց թիվը հասնում է 15 միլիոնի: Տնտեսու կամ անզոր սոցիալիզմը կազմում է Անգլո-Պարսի նահանգի հիմնական բնակչությունը: Անգլո-Պարսի սոցիալիզմը մոտ 33 միլիոն է:

Մոլայայի սոցիալիզմը բնակվում է Քերակղզու հարավ-արևմտյան մասում, Մայսուրյան ափին՝ Քերակա նահանգում, նրանց թիվը կազմում է 13 միլիոն: Իսկ ամառիկները ապրում են Մադրասի նահանգում, որը գտնվում է Քերակղզու հարավ-արևելյան մասում: Նրանք իրենց երկիրը անվանում են Տամիլնադ:

Հարավային Հնդկաստանը, քանի որ իր ժամանակին բիշ է տուժել արտաքին ներխուժումներից, իր անտեսությանը է մշակույթով համեմատաբար ավելի բարձր է, քան Հյուսիսայինը: Հարավում ավելի շատ կարելի է հանդիպել բարեկարգ, կանաչի ու ծաղիկների մեջ թաղված քաղաքներին: Ինչպես, օրինակ, ալգի-բադար Մայսուրը, արդյունաբերական և գիտական քաղաք Բանկալուրը, իսկ մասշտաբով և բարեկարգությանը եվրոպական շատ քաղաքներին չզիջող Մադասը և Քերակա նահանգի դեղնեղի մայրաքաղաք Տրիվանդրամը:

Ազգային սոցիալիզմները, ինչպես և կլիմայական առանձնահատկությունները ամենից լավ են դրսևորվում գաղափարական քաղաքներին ու բնակիչի տների հասակագծման մեջ:

Հարավի բնակիչի տների մեծ մասը սպիտակ են և կանաչի մեջ թաղված: Այդ տները սոցիալաբար ունենում են ներքին ոչ մեծ բակ, որը բնակչության կյանքի կենտրոնն է: Նա և՛ հաշարան, և՛ խոհանոց, և՛ հյուրերին ընդունելու տեղ է: Դեպի բակ են դուրս գալիս շրջապատում կառուցված ննջարանը, մատանը և կենցաղային այլ հարմարանքներ: Պատշաճ դամբները նույնպես հարավային Հնդկաստանի բնակիչի շենքերի անբաժանելի մասն են կազմում: Գյուղական բնակավայրերի տները նույնպես բարեկարգ են, բայց այստեղ շինարարները մեծ մասամբ կազմն ու բամբուկն է, իսկ ամառիկներն էլ ծածկված են արմավենու տերևներով կամ ծղոտով: Մադասուրյան ափի տները զարդարում են կոկոսյան արմա-

վենիները: Վաղ ժամանակից ի վեր գրավիդյան սոցիալիզմների գրավումներ եղել է կրթագործությունը, իսկ բրինձն էլ հանդիսացել է հիմնական կերակուրը: Նրա բերքը հարավում տարեկան երկու անգամ է հասնում: Հարավային Հնդկաստանի բնակչարի անբաժանելի մասն են կազմում արմավենիների տարբեր տեսակները, ինչպես, օրինակ, կոկոսյան, սրեկայի և այլն: Արմավենիների պտուղը, նրանցից ստացվող հյութն ու յուղը անհրաժեշտ է, իսկ ծառի տերևներն ու փայտը արձանագործական գրավումների առարկա:

Անհրաժեշտ է մի երկու խոսք տան արմավենիների մասին: Արմավենիների հարյունից միծարակաբաններն ու արևվաղարածներն են, շնայած աճում են նաև բարեխառն դոստո տար շրջաններում: Ի դեպ, մեզ մոտ արմավենիները աճում են Սև ծովի կովկասյան ափերին, որոնք միայն զեկուրստիվ նշանակություն ունեն: Հայտնի են արմավենիների բազմաթիվ տեսակներ: Շատերին է ծանոթ փյունիկյան, սաղայան, կոկոսյան և այլ արմավենիներ: Մրանցից առաջինը՝ փյունիկյանը շատ քաղցր պտուղ է առյուծ, որին սոցիալիզմը համախոսորմա է ասում: Մյուսը՝ սաղայան արմավը, մշակում են Օվկիանիայում, որը սաղայն է սաղա կամ տարու կոչվող ուտելիքը, իսկ կոկոսյան արմավենին շատ է ապրածված Հնդկաստանում, Տնիլում, Հնդկայինում և այլն: Կոկոսյան արմավի ծառը իր տեսքով հիշեցնում է փյունիկյան արմավենին, բայց կոկոսյան արմավի բունը շատ հարթ է: Կոկոսյան արմավենու պտուղները կոչվում են կոկոսյան բնկուղը: Ի դեպ, բնկուղը բարձր նրան այնքան էլ սաղապան չի, բայց այդպես են անվանում: Կոկոսյան բնկուղը բավական խոշոր է, ամուր կեղևով, իսկ տեսքով էլ նման է փոքր, կլոր սերի: Քանի զեա միջուկը հասած չէ, բնկուղը լցված է շատ հաճելի հյութով, որը հիշեցնում է լավ հասած սերի հյութը և սովորաբար սառն է լինում:

Հնդկական շուկաների զարդ հանդիսացող այս պտղի աշխույժ վաճառքը շատ գնորդներ է գրավում: Գնորդը երբ ընտրում է համապատասխան բնկուղ, վաճառողը կեղի արագ շարժումով, վարպետորեն, կտրում է բնկուղի վերին մասը



և հրամցեում գերդին, որը հագեցնում է իր ծարավը: Այդ հյուսիսի հաճախ կոկոսյան ընկույզի կաթ են անվանում: Սակայն, դա իրականում կաթ չէ և ոչ մի նմանություն չունի կաթի հետ, բացի արտաքին տեսքից:

Կոկոսյան ընկույզից բացի էլ շարք բույսեր ևս կանթի տպավորություն թողնող հեղուկներ են արտադրում և հաճախ կոչվում են կաթ, սակայն ոչ մի բույս իսական կաթ չի արտադրում: Կոկոսյան ընկույզի հյութը շահահանիչ է և դովաջուցիչ: Երբ կոկոսյան ընկույզի միջուկը լիովին հասունանում է, ներսում եղած այդ հեղուկը թանձրանում է և առաջացնում կարծր միջուկ՝ կուպր, որից և ստացվում է կոկոսյան յուղ: Կուպրան արեղաքանդին երկրներից միջուկայ առաճանվող արեթեափոր հումքերից մեկն է: Կուպրայի յուղը շատ թանկ է գնահատվում և օգտագործվում է թե՛ խոհարարության և թե՛ արդյունաբերության մեջ: Երանից պատրաստում են լավ օճառ, որը հայտնի է «կոկոսյան օճառ» անունով: Երանից ստանում են նաև օճանիլիք:

Արեղաքանդային երկրներում կոկոսյան արմավենու խոշոր պլանտացիաներ կան: Այս ծառի բարձրությունը հասնում է մինչև քսանվեց մետրի: Ամեն մի ծառ տալիս է մինչև վաթսուս հաս ընկույզ: Երա բունն ուղիղ է և ճյուղերից զուրկ, միայն գագաթին գտնվում են հովհարաձև տերևներ: Այդ սղբուսակի վրա էլ աճում են պտուղները, որոնք կախվում են փրփրաբլուրից: Կոկոսյան արմավենիի ընդհանրապես շատ օգտավետ օճառ է: Երա պտուղներից համեղ ուսելիքներ և խմիչքներ են պատրաստում: Երա ծագիկները կոկոս վիճակում ծածկված են լինում կոշտ պատշանով: Այդ պատշանը ճեղգում են, քաղցրը հյութը հավաքում, եփում և սառնում: Են գինի, իսկ եթե երկար եփեն, կարելի է շաքար ստանալ:

Կոկոսյան արմավենու մատուց տերևները բանջարեղենի նման տապակում կամ խաշում են, իսկ հասուն տերևները օգտագործում տների կառույցները ծածկելու համար: Ընկույզի կեղևից անոթներ, քամակներ և զանազան առական ամանեղեն են պատրաստում, տերևների թելերից կաշվիներ, խաիրներ գործում, պողի արտաքին պատշանի նուրբ մանրաթելերը մա-

նում, ճուղանների ու կոշտ գործվածքներ պատրաստում և այլն: Բնաթելից խոզանակներ, շորեր, զորգեր, ցանցեր, պարան, թուղթ, զխարկներ, առաջատաներ և շահեր են պատրաստում: Փայտից՝ վառիլթ, թիեր, խրճիթներ, եզան լուծ, սեղաններ, նստարաններ, դանակի կոթեր, կարծր պատյաններ և այլն: Հաստ արմավենիների բնից էլ մակույկ են փորում: Կոկոսյան արմավենին այնքան օգտավետ է, որ նրա մասին ստում են՝ արմավից պատրաստված նախկեր բարձրած ամեն ինչով, ներառյալ հանդիմադրումն ու միներկները, բարձր պատրաստված են կոկոսյան արմավենուց և նրա ընկույզից: Հասկանալի է, թե ինչու տաք երկրների բնակիչները շատ են սիրում և խնամքով մշակում կոկոսյան արմավենին:

Հեղհաստանում արտադրվող կոկոսյան ընկույզի 82 տոկոսը բաժին է ընկնում Հարավային Հեղհաստանին: Դրանից 42 տոկոսը տալիս է Քեթայայի նահանգը, իսկ 40 տոկոսը՝ Մագրասի նահանգը: Լեռնայն 18 տոկոսը բաժին է ընկնում Հեղհաստանի մյուս մասերին:

Հեղհաստանը կոկոսյան ընկույզի արտադրանքով աշխարհում գրավում է երկրորդ տեղը, Ֆիլիպիններից հետո:

Կոկոսյան արմավենին ամենից շատ արտադրված է Հարավային Հեղհաստանում և իդուր չէ, որ նրան հաճախ «Արմավենիների Հեղհաստան» անուն են տալիս: Այստեղ նա անդառաջաի անփոփոխիրենի մասն է հանդիսանում և լրացնում նրա արեղաքանդային նրանցավորումը: Քանի որ կոկոսյան արմավենին շատ է սիրում խոնավ օդ և ամենից լավ աճում է արևադարձային երկրների ծովափնյա մասերում, այս և ինչ նույնը լինելը աշխարհի քոսականության բարունգին, կոնաններ, թե ինչպիսի է կոկոսյան արմավենին հեռուում ծովափի զճագրությունը: Նա ընդհանրապես աճում է զեպի ջուրը թեքված: Այս հանգամանքը չի փչացնում նրա արտաքին տեսքը: Հաճախ արմավենու պտուղները թափվում են ծովը: Նրա կեղևը այնքան ամուր է ու զիմացկուն, որ ամիսներով կարող է ծովի ջրում մնալ առանց փչանալու: Երբ այրները, վերջապես, նրանց դուրս են բերում հեռավոր կղզիներ, սպա այդ երկրի բնակիչներն են վաշխում բարեկց կամ էլ բարեհա-

չոզ պայմաններ են ստեղծվում, որ նա իր հայրենիքից հեռու  
անի ու արմավենի դառնա:

Այգուիտին է Հարավային Հնդկաստանի բնության բարիք-  
ներից մեկը՝ կոկոսյան արմավենին:

Քերալայում մշակում են նաև սուրճ, իսկ Նիլգիրի բար-  
ձունքներում՝ անճեղնում թխլ: Հարավային Հնդկաստանում մեծ  
տարածում ունեն դանդազան համեմունքների և դեփտերեկույզի  
մշակումը: Բնակչության զբաղմունքի մեջ զգալի տեղ է զբա-  
վում Ակեորտախյունը:

Հարավային Հնդկաստանը, հատկապես նրա Մալաբար-  
յան ափը Հնդկաստանի այն մասն է, որտեղից համեմունքնեռ  
և հատկապես սև պղպեղ էին բերում Եվրոպա: Սա այն Հրեդ-  
կաստանն է, որ իր ժամանակին այցելում էին արաբ-վաճա-  
սականները: Չէ՛ որ նրանք երկար ժամանակ միջնորդի դեր  
էին խաղալի Արևելքի և Արևմուտքի առևտրում:

Նրա ծովափին տարածված են արմավենիների փարթավ  
պուրակներ: Ամենուր բրնձի արտեր են ու արմավենիների տակ  
թարթված խրճիթներ: Նրա բնակավայրը լրացնում է վեր խոյա-  
ցող ու քանդակագարդ տաճարները: Այստեղի Հարդիկ հյու-  
սիսի մարդկանցից տարբերվում են նաև արտաբնիճով՝ թխա-  
ժորթ են: Հագուստի անսակեռից տղամարդիկ բալաբարվում  
են միայն ալմանդական դիտտիով, իսկ կանայք՝ ստրիճի:  
Նրանց խոսելու, արտասանելու ձևն էլ մեր ականչին շատ  
անսովոր է և զարմացնում է կոկորդաչին և քո՝ տառի սուան-  
ձին արտասանությամբ:

Հարավային Հնդկաստանի քաղաքներում շատ է տարած-  
ված արհեստ ու սովետարը: Ներկա արհեստավորները զար-  
դացնում են իրենց ալմանդական վարդեպետությունը: Մայրուրի  
վարդեպետների պատրաստած իրերը մեծ համբավ ունեն Հրեդ-  
կաստանում: Արդյունաբերական բանավորների տոկոսը մեծ է  
Մադրաս և Բանգալուր քաղաքներում:

Կրճեական տեսակետից զբաղվողյան ժողովուրդները հիմ-  
նականում հիբրուիստական են, մուսուլմանական կոնին հե-  
ստեղները ալիկի շատ են եսթիկին Հաջարաբադի իշխանու-  
թյունում, որը ներկայումս մտնում է Անգլո-Բարադելի կազմի

մեջ: Քրիստոնյաների տոկոսը մեծ է Մալաբարյան ափին (Քե-  
րալայի նահանգում):

Քանի որ Հնդկաստանը եվրոպացիները հայտնաբերեցին  
ծովով, հետևապես հենց այս մասում էլ կանգ առան առաջին  
գաղութարարները և ստեղծվեցին ստաջին գաղութները: Այց  
անցյալի տխուր հետքերից է պորտուգալական Գոան:

Պորտուգալական նախկին գաղութ Գոան զանվում է Բու-  
րիից 400 կիլոմետր հարավ: Նրա բնած տարածությունն է  
2750 քառակուսի կիլոմետր, իսկ բնակչությունը՝ մոտ 600 հա-  
զար: Վարչական կենտրոնն է Նոր Գոան (Պանջիմ) քաղաքը:  
Հին Գոան այժմ ավերակների քաղաք է, բացառությամբ ար-  
քայական պալատի ու այլ հնությունների:

Գոան պորտուգալացիները զբաղվել են 1510 թվականին:  
Նա համարվում է այսպես կոչված պորտուգալական Հնդկաս-  
տանի հիմնական մասը: Պորտուգալական Հնդկաստանի մեջ  
ևս մտնում եսև Գաման և Գիու գաղութները: Գաղութարարնե-  
րի վերջին հեծարանը՝ պորտուգալական Հնդկաստանը (Գոան,  
Գաման, Գիու) հնդկական զորքերի կողմից ազատագրվեց  
1960 թվականի դեկտեմբեր ամսին:

Հարավային Հնդկաստանի վարչական բաժանումը այս-  
պիսին է. նրա կազմի մեջ մտնում են Մալաբար, Անգլո-Բարա-  
դել, Քերալա և Մադրաս նահանգները: Ի դեպ, Հնդկաստա-  
նի ժամանակակից վարչական բաժանումը հասկանալու հա-  
մար անհրժեշտ է մտնել լինել անցյալում անգլիական տե-  
րապետության ժամանակ գոյություն ունեցող վարչական բա-  
ժանմանը: Անգլիացիների ժամանակ Հնդկաստանը կա-  
ռավարվում էր փոխարքայի կողմից: Հնդկաստանի փոխար-  
քա էր կոչվում անգլիական թագավորի փոխանորդն ու բրե-  
տանական թագի ներկայացուցիչը: Փոխարքան ունեյր բնագր-  
ձակ իրավունքներ. նա հենվում էր իրեն նեթական անդիական  
բարձրատեղեան պաշտոնյաների և տեղական իշխանավորնե-  
րի՝ մահատաշաների ու քաջաների վրա: Վարչական առու-  
մով Անգլիան Հնդկաստանը բաժանել էր երկու մեծ մա-  
սի՝ Բրիտանական նահանգներ, որոնք մի բնդհանուր ակու-  
նով կոչվում էին Երիտասանական Հնդկաստանն և հեղկա-



կան առանձին իշխանություններ: Գա, Խճարկն, չէր բր-  
խում ո՛չ Տեղիական կյանքի կարիքից ու շահերից, ո՛չ էլ  
Տեղիկ ժողովրդի ցանկություններից ու ձգտումներից: Բրիտա-  
նական Տեղիկատան անունը կրող մասը, որի մեջ մտնող  
Բենգալյան, Ասամը, Բիհարը, Օրիսան, Մադճիա-Պրազեշը,  
Բամբեյի գլավոր, Փենջաբը, Ուտար-Պրազեշը անմիջականո-  
րեն կառավարվում էր անդլիսիական իշխանությունների կող-  
մից, Ինչ վերաբերում է Տեղիկական իշխանություններին, ապա  
նրանք կառավարվում էին տեղական մեծ և փոքր Ֆեոդալ իշ-  
խանների կողմից, լծայած, վերջին Տաշվոզ, այդ իշխանները  
նույնպես ենթարկվում էին անդլիսիական փոխարքային: Տեղիկա-  
կան իշխանների թիվը հասնում էր ավելի քան հինգ հարյուր  
հետևի, որոնք կրում էին առջա տեղություն: Առավել մեծ իշխա-  
նությունների գլուխ կանգնածները, որոնց երբեմն ենթարկ-  
վում էին փոքրերը, կոչվում էին մահառայա: Հարյուրավոր  
առյուների մահառայաների տիրապետության առկայությու-  
նը մեծ խոչընդոտ էր հանդիսանում երկրի փոփոխման հա-  
մար: Այդ կեսաֆեոդալական իշխանությունների մեծ մասը  
ձևավորվել էր բրիտանական տիրապետության ժամանակա-  
շրջանում: Նրանք Բրիտանական կայսրության համար հենա-  
րան էին ծառայում: Սակայն Տեղիկական իշխաններից ոչ բո-  
լորեն էին հյու-հնապանող ենթարկվում անդլիսիական գաղութային  
իշխանություններին: Նրանց մեջ կային նաև այնպիսիները,  
որոնք փորձեր էին անում կանգնել իրենց ժողովրդի կողմը և  
զանազան բարեփոխումներ անցկացնել, բայց անդլիսիական  
գերագույն իշխանությունը միշտ ստորել էր հանդիսանում  
նման ձեռնարկումներին: Ի վերջո, Տեղիկական առյուները ոչ  
մի կերպ չէին կարող հանդուրժել որևէ դեմոկրատական իշ-  
խանության գոյությունը Տեղիկատանում: Այսպիսով, տեղական  
իշխանությունների հետ հանրապետության կենտրոնական  
կառավարությունը իր հաշիվները պետք է անսպասման փա-  
կեր: Հանրապետության ամբողջ կյանքի վերակառուցման  
հետ մեկտեղ ստիճանաբար վերացվեց նաև երկրի Ֆեոդա-  
լական մասնատվածությունը: Տեղիկական հանրապետության  
հռչակումից և իշխանությունների տերիտորիաները նրա կազ-

մի մեջ մտնելուց հետո ամբապնդվեց երկրի բազարական  
միասնությունը, Գրա հետ մեկտեղ փոխվեց նրա վարչական  
բարակը: 1956 թվականին ուժի մեջ մտավ Տեղիկատանի  
վարչական նոր բաժանումը, որի հիմքում դրված է առանձին  
լեզվով խոսող ժողովուրդներին վարչական մի միավորի մեջ  
համախմբելու սկզբունքը: Այլ խոսքով, Տեղիկական գաղա-  
նները և իշխանությունները վերակազմվեցին հիմք ընդգնելով  
լեզվական միասնականությունը:

Վարչական բաժանման հիմքում ընկած են նահանգները  
և տերիտորիաները: Նահանգներն են՝ Գուջարատ, Մահարաշտ-  
րա, Մաջաստան, Փենջաբ, Ջամու և Քաշմիր, Ուտար-Պրա-  
զեշ, Մադճիա-Պրազեշ, Բիհար, Ասսամ, Արևմտյան Բենգա-  
լյա, Օրիսա, Անդհրա-Պրազեշ, Մալուր, Փերալա և Մադ-  
րաս:

Տերիտորիաներն են՝ Հիմալայ-Պրազեշ, Մանիպուր, Տրի-  
պուրան, Տեղիկական օվիկանոսում գտնվող Անդամանյան ու  
Նիկոբարյան կղզիները և Լակադիվյան կղզիները: Տերիտո-  
րիաների թվում էլ դասվում նաև հանրապետական ենթակա-  
յության Դեյվ բաղաբը և Գոան:

Լեզվական միասնականության սկզբունքը չի պահպանվել  
միայն երեք նահանգում՝ Փենջաբում, Քաշմիրում և Ասսա-  
մում, որոնց բնակիչները խոսում են մի քանի լեզուե-  
րով:

Այսպիսով, Տեղիկատանի ներկա վարչական գույնզգույն  
բարեկցին նախկին պետք է հիշել, որ այնանոց սրված ամեն  
գույն մի նահանգ կամ տերիտորիա է ներկայացնում: Այդ  
գույնզգույն վանդակացանցի հետք մարդիկ են՝ տարբեր  
լեզուներով ու սովորություններով, բայց մի ընդհանուր պատ-  
մություններ, բարխավ, մշակույթով և հայրենիքով:

Այսքանով, վերացնենք մեր ընդհանուր ժանկությունը  
Հարավային Տեղիկատանի հետ:

## ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀՆԳԿԱՍՏԱՆՈՒՄ

հայկական գաղութով, այլև նրանով, որ առաջին հայ պարբերականը՝ «Ազգաբարը» լույս է տեսել այս քաղաքում<sup>1</sup>:

Նախքան Մաղբասյան մեր ճանապարհորդությունը ավարտելը այցելեք Հարավային Հեղհաստանի հրաշալիքների կենտրոններից մեկը՝ Մահարալիպուրամ, որը գտնվում է Մաղբասից 65 կիլոմետր հարավ: Այստեղ պահպանվում են համաշխարհային համբավ ստացած ժայռակերտ ասճարները, որոնք կերպվել են հազար հինգ հարյուր ասորի առաջ:

Մահարալիպուրամը եվրոպացիները անվանում են «Ճոթ տաճարների քաղաք»: Այս կոթողների կառուցողները ընտրել են յոթ ժայռ և ամեն մեկը վերանվել մի չքնաղ միակտոր ասճարի: Մահարալիպուրամում ժայռակերտ քանդակներից մի խմբում արված է հեղհական այն ավանդությունը, թե ինչպես սրբազան Գանգեսը երկնից վայր է իջել: Եվ այն ժայռն սնա, որի տակից ջուր է ժայթքում, կերպված են մարդիկ, որոնք հավաքվել են սրբազան ջրում լվացվելու: Կերպված են նաև փղեր, սապատավոր եղևիք, ինչպես նաև այլ կենդանիներ ու թռչուններ, որոնք հավաքվել են այստեղ ջուր խմելու: Ամենուրեք կան բույսերի ու պտուղների քանդակներ:



Տամիլների երկրի կամ Մաղբասի նահանգի մյուս քաղաքներից հիշատակության արժանի են Մադուրան, Տրինիպուլին, Տանջուրը և Կանչիպուրամը: Ընչոտ է Մադուրան իր մեծությամբ Մաղբասից հեռու Տամիլանդի երկրորդ քաղաքն է, բայց նրանից շատ հին է և գոյություն է ունեցել դեռևս երրորդ դարում, մեր թվականությունից առաջ:

Մադուրան Հարավային Հեղհաստանի հնագույն քաղաքն է և հարավային Հեղհաստանի հնագույն մշակույթի կարևոր

<sup>1</sup> Մաղբասի հայոց անցյալն ու ներկան, ինչպես նաև այնտեղ հրատարակվող առաջին հայ պարբերականը՝ «Ազգաբարը»-ի պատմությունը արված է «Հայերը Հեղհաստանում» վերնագրեր կրող գլխում:

կենտրոնը: նա հռչակված է իր հմուտ արհեստավորներով: Մադուրան Հնդկաստանի այն քաղաքներից է, որի ջուլհակները միշտ էլ աչքի են ընկնի իրենց բարձր արվեստով: Ըս ժամանակին եվրոպական խոշոր մայրաքաղաքների արբունի տիկիները կուսում էին հնդկական, այդ թվում և Մադուրայի վարպետների պատրաստած գործվածքներից կարված զգեստներ:

Քաղաքի անցյալ փտորից մեզ են հասել դարմանալի կոթողներ, որոնք տիպիկ հնդկական ոճով են կառուցված:

Մադուրան ունի մոտ 400 հազար բնակիչ: Վաճառահաշ քաղաք է, հայտնի է թելի, սուրճի և կարգամոնի առևտրով: Հռչակված է իր հին ճարտարապետական հուշարձաններով:

Մադուրան հայտնի է Շիվայի հույակապ տաճարով, որը կառուցվել է 17-րդ դարում: Այդ տաճարը իրականում մի ամբողջ քաղաք է՝ շրջապատված պարիսպներով, սյունաշարերով, ջրավազաններով ու բազմամիջի, այսպես կոչված, զրպուրաներով: Գարբանների վրա բարձրացված քառանկոտ բուրգերը հեռվից շատ պատկանելի տեսք ունեն: Նրանք հիմքից մինչև զագաթը զարդարված են զանազան բանդակներով: Մեծ վարպետների սքանչելի ձեռքերը բարդ վեր են ածել ժանյակի և քրգանի բարձրացրել դեպի ամպերը:

Մադուրայում առանձնապես նշանավոր է սշազար սյուների գահչիճը: Գահչիճի սյուներից յուրաքանչյուրը, վերելից ներքև, դարձրված է դիցաբանական զանազան բանդակներով: Գրանիտային սյուններից յուրաքանչյուրն ունի այնպիսի հատկություն, որ կիև նրանց խփենք փայտե սուրճիկներով, ապա ամեն մեկը համապատասխան տոնի ձայն է հանում: Տեղացիներն էլ դրանց «Քարի կրկնհնչ» են անվանում: Մադուրան միշտ լիքն է ուխտավորներով: Այն վայրում, որտեղ

1 Գոադուրան մեծ կոթողների, հատկապես տաճարների ու վանքերի զարդաների վերջ կառուցված հակա քրգանև աշտարակ է, որը զարդարված է անթիվ ու անհամար բանդակներով: Այլ «հե հասուկ է Հարավային Հնդկաստանին:

հավաքվում են ուխտավորները, մեծ աշխուժություն է տեսում: Տաճարի բակում մի կատարյալ տոնավաճառ է, ուր ծախում են ամեն տեսակի սովորական ապրանքներ ու արձանիկներ: Վաճառում են նաև ծաղիկներ, բրինձ, սրահների հավասացյալները դրանք մատուցեն կուսիքին: Վաճառքի են հանվում ուխտավորների բերած ամանեղևեր, կոտորեղևեր, ազմուկ-աղաղակով հրավիրում են զենելու կոնոսյան ընկույշ, սիգարեթի և այլն: Այս բոլորը սրբաշուն գահչիճների ֆոնի վրա մի տեսակ աններդաշնակ երևույթ է ստեղծում: Եթե դիտողը այլ սրբավայրերում էլ է եղել, այդպես չի դարմանա, որովհետև նույն պատկերն ունեն Արևելքի շատ ուխտանդիկներ:

Մադուրան եղել է Պանդյան թագավորության մայրաքաղաքը, որը լայնածավալ ժողային առևտուր է ունեցել Հռոմի և Հունաստանի հետ: Քաղաքը վերստին իր փառքն ստացավ նայակ թագավորների օրոք, որոնք մեծ գործ են կատարել նրա ճարտարապետությանը գործաջանելու ուղղությամբ: Աչքի ընկնող կոթողներից է նաև Մենակշի տաճարը իր ինը բրդանև աշտարակներով: Տաճարը ամենից լավ դիտվում է Ոսկե Հասուս կուլյուղ ջրավազանը շրջափակող սյունաշարի տանիքից: Այս ավազանի հետ կապված է մի հետաքրքիր ավանդություն. ասում են, որ շատ հին ժամանակներում ջրավազանը հանդիսացել է գրական սանկձագործությունների փորձադաշտ: Գրողները իրենց գործերը գնում էին ջրի մեջ: Այն ձևազիրք, որը իրենից ոչ մի արժեք չէր ներկայացնում ստեղծվում էր, իսկ կիև իրոք արժանի գործ էր լուղում էր ջրի երեսին:

Մյուս քաղաքներից նշանավոր են Տրիվեմպուլին (Տրիվեմպուլյապուլի) և Տանչուրը, որոնք միմյանցից ընդհանրը 32 կիլոմետր հեռավորության վրա են գտնվում: Տրիվեմպուլին գտնվում է Կավերի գետի աջ ափին և ունի մոտ 250 հազար բնակիչ: Այս քաղաքը հայտնի է սրբուհու երկամբուլային և առևտրական խոշոր կենտրոն: Նա աչքի է ընկնում ոսկյա իրերի արտագրությունը և մեկաբարձործությունը: Նրա տաճարներից հիշատակուիքյան արժանի է Գանեշի՝ իմաստության



և արվեստի աստծու տաճարը, Տրիչիդրավիդների Սրիբանգամ կոչվող վաղեմի կոթողը:

Տանջուրը ևս գտնվում է Կավերի գետի վտակներից մեկի վրա, ունի ավելի քան 100 հազար բնակիչ: Նշանավոր է իր տնայնագործական արդյունաբերությամբ: Այստեղ պատրաստում են զոհարեղեն, մետաքսի վրտ զեղեցիկ ասեղնագործություններ ևն կատարում, ճաշակավոր զորդեր պատրաստում և այլն:

Տանջուրը հնդկական մշակույթի վաղեմի կենտրոնն է: Այստեղ կան մի շարք վարպետորեն դարդարված տաճարներ, մի քանի բարձրագույն ուսումնական հաստատություններ, բժշկական դպրոց:

Մադրասից յոթնասուն կիլոմետր հարավ-արևմուտք գտնվում է Կանչիպուրամ քաղաքը: Կանչիպուրամ անունը թարգմանաբար նշանակում է «Ոսկե քաղաք», նա համարվում է Հնդկաստանի «սրբազան» քաղաքներից մեկը:

Այսպիսին է դրավիդյան ամենամեծ ժողովուրդներից մեկի՝ տամիլների հայրենիքը, որի ծայր հարավում է գտնվում Կոմորին հրվանդանը՝ Հնդկաստանի ժայռակետը: Այստեղ են միախառնվում Քենգալյան ծոցի, Արաբական ծովի և Հրնդկական օվկիանոսի ջրերը: Կառակասեր մարդիկ ասում են, որ այստեղ կարելի է մի ստրով կանգնել Քենգալյան ծոցում, մյուսով՝ Արաբական ծովում և ձեռքերը չփշվացնել Հնդկական օվկիանոսում:


Կոմորին հրվանդանը մարդկանց հրապուրում է նաև այն բանով, որ այստեղից բացվող ընդարձակ հորիզոնից մարդիկ զրտում են աշխարհի ամենասքանչելի տեսարաններից մեկը՝ արևի ժազումը: Գա, ինչպես հայտնի է, միշտ էլ հանդիսանում է զրոսաշրջիկների ամենատարածված հանույրներից մեկը:



Հարավի նշանավոր տաճարներից մեկը, որի մոդելը Մադրասի հայ ակադեմիկներ նվիրեցին ուսական աբուսեյին



Նոր Քեյի:  
Կառավարական տունը



Պողոսյան պարտէզի մէջ Քեյիում:  
Կողմից՝ Բուրք-Միհրապ  
պաշտարանը

## ԱՐՄԱՎԵՆՆԵՐԻ ՀՆՊԿԱՍԱՆՈՒՄ

Հնդկաստանի հարավ-արևմտյան մասը, որը Մալարարյան ափի շարունակութիւնն է կազմում, հանդիսանում է Մալարալի ժողովրդի հայրենիքը՝ պատմական Քերալան:

Այդ անունը վերականգնվեց 1956 թվականին՝ Հնդկաստանի նոր վարչական բաժանումից հետո: Նրա կազմի մեջ մտան Տրավանկուր-Պոշինի և Մալարարյան շրջանի մի մասը: Ճիշտ է, Հնդկաստանի մասշտաբներով վերցրած, Քերալան մեծ նահանգ չէ, բայց նա իր տարածութիւնը ունի հազար քառակուսի կիլոմետրով մեծ է Քելզիպից, իսկ բնակչութիւնը էլ հավասար է Հարավսլաւիային:

Քերալայի «Արմավենիների Հնդկաստան» բանաստեղծական անվանումը շատ սազական է այդ վայրի համար, որովհետև արմավենիները նրա բնութիւնը անբաժանելի մասըն են կազմում: Հենց Քերալա անունն էլ «բերաս» բառից է, որ նշանակում է կոկոսյան ընկույզ: Չէ՛ որ այս նահանգում զարմանալի առատ է կոկոսյան արմավենին: Հաշվում են, որ զրանց թիվը հասնում է յոթնասուունհինգ միլիոնի:

Քերալան հյուսիսից հարավ ունի 500 կիլոմետր ձգվածութիւն: Նա զբաղեցնում է 38 հազար քառակուսի կիլոմետր տարածութիւն: Չնայած նա մեծ չի, բայց խիտ բնակեցված նահանգ է: Բնակչութիւնը մոտ 17 միլիոն է: Մեկ քառակուսի կիլոմետրին ընկնում է 446 մարդ, որը երկրի միջին խտնութիւնից ավելի բան երբեք և կես անգամ բարձր է: Նահան-



զի պիտոյոր բաղար բ է վարչական կենտրոնը Տրիփանգրա-  
մըն է:

Քերալայի նահանգում շատ լինելու գետեր կան: Նահան-  
գը ամբողջապես կտրտված է ջրանցքներով: Կլիման արևա-  
գարծային-մուսսոնային է. միշտ կանաչ, հազիքով ամառ: Տե-  
ղումների առատության պատճառով ջրանցքները միշտ լիքն  
են ջրերով, որոնք այստեղ նույն դերն են կատարում, ինչ  
խոնավային ճանապարհները: Քրանցքով անվերջ անջուրաս  
են անում մարդկները՝ կոկոսյան բնիտը բարձր:

Ջարմանայի հարուստ է այտեղի բնությունը: Նա Հրեդ-  
կաստանի փայրթում արևադարձային բուսականության շնաշ-  
խարհիկ մի անկյունն է: Քերալայում շատ է աարածված  
բամբուկը, հացի ծառը և արծեբալորը այլ ծառեր: Բամբուկը  
արագ աճող և շատ օգտավետ բույս է, որը հիշեցնում է մեր  
կղզիներ, նրա բարձրությունը շատ մեծ է, հասնում է անկամ  
մինչև 30 մետրի: Նրա բունը, կամ ավելի ճիշտ ցողունը,  
շատ ուղիղ է, սղորկ և խոնավությունից չի փչանում ու չի  
փտում, Բամբուկից պատրաստում են տներ, կահկարասիներ,  
անային զանազան իրեր:

Բամբուկի մասին Գոնչարովը իր «Ճերեզատ Փայլազա»  
գրքում գրել է. «Սա լպիտեմ, բամբուկը մեզանում ինչի հետ  
համեմատում օգտակարության անակնելից: Ինչպիսի՞ ծո-  
ւայություններ է նա մատուցում մարդուն, Ինչի՞ր շնն պատ-  
րաստում նրանից: Ծանկապատեր, հյուսվածքներ, տների  
պատեր, մակույկներ, շիկում են ամաններ, զանազան մաե-  
րութներ, հովանոցներ, եղեգնացույցներ և այլն, նրանով կրթ-  
կախող են խփում, վերջապես նրա զույգը ճյուղերից պատ-  
րաստած անուշը նման է ինրի՞ր համեմունքին»:

Հացի ծառը մեծ տարածում ունի հասարակածային եր-  
կրքներում, որը տեղի բնիկների կյանքում մեծ դեր է կատա-  
րում, Հացի ծառը նրանց համար ոչ միայն սննդի աղբյուր  
է, այլև ծառայում է որպես ծածկի փայտ: Հացի ծառի պտուղ-  
ները աճում են ոչ թե ճյուղի վրա, ինչպես խնձորը կամ տան-  
ձը, այլ ծառի բնին: Այդ ձևով են աճում նաև կակաոյի պտուղ-  
ները: Այս բանը բուսաբանության մեջ հայտնի է կաույի-

Պորիա անվան տակ: Բուսաբանները բացատրում են, որ դա  
պտուղների համար ինքնապաշտպանության միջոց է: Պատ-  
ղը պաշտպանվում է արևադարձային հորատատ անձրևնե-  
րից, ինչպես նաև հեշտացնում ծաղիկների փոշոտումը:

Հացի ծառի պտուղները, որոնք նման են փոքր սևիխ,  
շատ օւլա են պարունակում. պտուղները հասկնուց հետո  
համաբուսում ու պհնում են ճառուկ հորեբում, այսպես աստիճա-  
նաբար զույգ բնույթում այնտեղից (այդ ժամանակ պտղի մի-  
շուկը խմորի տեսք է ստացած լինում) և բլիթեր են թխում:  
Նա բնիկների համար փոխարինում է հացին: Այստեղից էլ  
երա հացի ծառ անունը:

Ճիշտ է ամված, որ Քերալան գերազարկան աստիճա-  
ների նահանգ է: Նա Հեղկաստանի ամենագեղեցիկ, ամենա-  
խիտ բնակեցված վայրն է: Նահանգում անզորագիտությունը  
գրեթե վերացած է: Հիշեք որ գրագիտությունը այստեղ հաս-  
նում է ինեսուն տոկոսի:

Դիլիի կապակցությամբ մենք առիթ ունեցանք մեջ բե-  
րելու այն խոսքերը, որոնք փորագրված են կարմիր ամրոց  
Ռանդ-Մահալ զա՛րիճի պատի վրա: Այդտեղ գրված է. **Վեթև**  
աշխարհում դրախտային երանություն կա, այսպես նա այ-  
տեղ է: Ետո սազական են այդ խոսքերը վերագրել նաև Քե-  
րալային, Հեղկաստանի այդ գեղեցիկ նահանգին: Քերալայի  
փարթամ բուսականությունը, բնական մեծ հարստություննե-  
րը նրան զարծել են Հեղկաստանի ամենահարպուրիչ ան-  
կյուններից մեկը: Քերալային հաճախ անվանում են նաև  
Արևելքի գանձերի երկիր: Քերալա այցելողներին միշտ  
գրավում են նրա շնաշխարհիկ բնակարանները: Նրանք արտո-  
սվոր են և հեթիաթային գեղեցիկություն ունեն: Բարձրահա-  
սակ ու գեղաշար արմատիկներին արտացոլում են կապույտ  
չբի մեջ, սակզույն բանանը խուրճ-խուրճ ծախրանում է  
վիթխարի թփուտների վրա, իսկ համեմունքներն էլ իրենց  
բուրմունքով լցնում են օդը: Հեղկաստանում հազիվ գտնվի  
մի հատված, որ իր գեղեցկությամբ հավասարվի Քերալա-  
յին: Հենց Եվրոպայում Հեղկաստանի համարվող այստեղից է  
տարածվել:

Քերական միշտ էլ գրավել է օտարների ուշադրությունը Գարեբ առաջ փյունիկեցիների նավերը, բեռնված ոսկով ու թանկարժեք իրերով, կորում էին Հնդկական օվկիանոսի շրջերը և Քերական էին գալիս նրանք իրենց սպիտակ թանկարժեք իրերը փոխում էին և հայրենիք վերադառնալով՝ տանում էին փղոսկր, պղպեղ և դանազան համեմունքներ:

Քերական նահանգում գոյություն է ունեցել համանուն նավահանգիստ, որը հին հռոմեական գիտնական Պլինիոսը նկարագրել է որպես առևտրական կենտրոն:

Քերականի ափերն են այցելել նաև հույները, հռոմեացիները, ինքացիները, իսկ նոր ժամանակներում պորտուգալացիները: Առաջինը հարթությունները, մշտադալար անտառապատ Արևմտյան Գառերը, համաշափ կլիման, առատ անձրևները, կապույտակ ծովը Քերական դարձնում են Հրեդեկաստանի մարզաբերդ:

Երբ 1498 թվականին վասկո դա Գաման վերադարձավ հայրենիք և պատմեց Մալաբարյան ափի հարստություններին՝ մասին, դա ավելի զգուցե նվրուպացիների ուսուրժակը նրանք հետազոտում հիմնովեցին այս ափերին և Պորտուգալիան մինչև վերջերս համար կերպով պահում էր Գոս գաղութը:

Քերականի բնակիչները տարբերվում են Հյուսիսային և կենտրոնական Հնդկաստանի բնակիչներից: Նրանք խոսում են դրավիդյան խմբին պատկանող Մալայալի լեզվով: Ինչպես հայտնի է Մալայալի ժողովուրդը հիմնականում բնակվում է Քերականի նահանգում: Այստեղ բնակվում են նաև տամիլները: Քերական, մշակույթի տեսանկյանից երկրի մյուս մասերի հետ համեմատած ավելի զարգացած է: Այստեղ երիտասերի իննսունհինգ տոկոսը զարդ է հանձնարում: Հնդկաստանի դաշմաններում դա մեծ առաջադիմություն է: Գրագիտության տակուր այստեղ միջին հնդկականից երեք անգամ բարձր է:

Քնակուլայան՝ դիվալոր զբոսայտները երկրագործությունը և ձկնորսությունն էլ Քերականի նահանգում պլանտացիան բույսերի մշակումը շատ կարևոր տեղ է զբաղում: Հասակապես կոկոսյան բնկույզի, ինչպես նաև Հնդկաստանում անող

կոկոսյան արմավենիների մաս կերբ բաժին է բեկնում Քերականին:

Գլխավոր եկամտաբեր բույսերից են **Յիքը**, որը մշակվում է լեռնային մասերում, սորճը, կաուչուկը, պղպեղը և այլն: Առատորեն մշակում են բանակ և նարինջ:

Քերական է ստացվում Հնդկաստանում մշակվող կաուչուկի իննսունութ տոկոսը: Քերական ապիս է Հնդկաստանում մշակվող շատ արժեքավոր համեմունքների Չի՝ որ Հնդկաստանը վաղուց էլ փեր հռչակված է իր համեմունքներով, որոնք անցյալում շատ թանկ էին գնահատվում: Միջին դարերում համեմունքների առևտուրը Հնդկաստանին հսկայական օրոտ էր տալիս: Համեմունքները եղան այն դիվալոր ձող ունեցից մեկը, որոնց համար նվրուպացիները երկար ժամանակ ձգտում էին գնայի այս երկիրը: Հնդկաստանում մշակվող համեմունքներից նշանավոր են սև պղպեղը, մեխակը, հիլը (կարդամոն), գարշինը, խմբիրը, շոֆրանը, Զերկայումս պղպեղի արտադրության իննսուն տոկոսը բաժին է բեկնում Քերականին: Նրա եկամտուն այլևս չի գնում ոչ Պորտուգալիա և ոչ էլ Անգլիա: Պղպեղը դարձել է օտարերկրյա վալյուտայի ներմուծման հիմնական աղբյուրը, որը այնքան անհրաժեշտ է երիտասարդ Հնդկական հանրապետությանը:

Հարավային Հնդկաստանում մշակում են նաև շաքարեղեգ: Եարարեղեղը, որի հայրենիքը Հնդկաստանն է, իր արտաբերումով շատ նման է սովորական եղեղին, միայն թե շատ ավելի բարձր է: Ցողունն իր ամբողջ երկարությամբ հանրույցներ ունի և ներսից դատարկ չէ, ինչպես սովորական եղեղը, այլ հյութալի, քաղցր միջուկով, որից և ստացվում է շաքարը:

Եարարեղեղից շաքարը առաջին անգամ ստացվել է Հնդկաստանում, այդ Չինաստանի և Իրանում: Եարարի ծագման մասին է վկայում նաև նրա անունը: Հնդկերեն

1 Նիք կամ կարգամեղ հաննի համեմունք է, որի հայրենիքը Մալաբարյան ափն է, հասկապես այն լեռները, որտեղ հենց այդ համեմունքի անունով էլ կոչվել են Գարգամոնյան լեռները:



ստակարար խտրից են առաջացել ուսուրնն սասխարք, հայերեն ոչաբարք, արարերնն ստակարար բուսերք:

Երկար ժամանակ եվրոպայում գործածական էր միայն շաբաբեղիզից ստացվող շաբաբը և միայն 1747 թվականին շեմիկոս Մարկղրաֆը հայանարեց, որ ճակղիզը նույնպես շաբաբ է պարունակում: Դրանից հետո շաբաբ սկսեցին ստանալ նաև շաբաբի ճանկղիզից: Հնդկաստանում, ինչպես նաև առք երկրներում շաբաբը ստացվում է հիմնականում շաբաբեղիզից:

Քերալան ունի ծաղկող տնայնագործություն: Նրա վարդաններ կոկոսյան արմավենու տերևներից, փաշտից և քեհայի կեղևից, ինչպես նաև թելից պատրաստում են պահազան իրեր, այդ թվում խոբներ, ներքնակներ, պաշտասկներ և այլն:

Քերալայի մայրաքաղաքը Տրավանդորամն է: Տրավանդորամը մոտ 200 հազար բնակչություն ունի: Քաղաքն ունի էր համալսարանը:

Այստեղ դարգացած է տնայնագործությունը, մանավանդ կեղևյան արմավենու թելերից ու տերևներից պատրաստվող իրերի արտադրությունը: Արտաքին առքերով Տրավանդորամը այնչով չի տարբերվում հնդկական շատ քաղաքներից. կըզմիթթև, տանիքներով ոչ մեծ տներ, հին տաճարներ, ծայրամասերում արևադարձների տիպիկ շինություններ: Տրավանդորամը կառուցված է բյուրեղների վրա և ամբողջովին պատված է ալյուրներով:

Քերալայի մյուս քաղաքներից նշանավոր են Կոչինը և Կոմիկոցեն: Երկուսն էլ համահանգիստներ են, կառուցված քիական շատ հարմար ծովախորշում, որը կարծես թե բնության կողմից է սակզծված՝ նավերը ընդունելու համար: Նրանք միջնադարյան Հնդկաստանի այն երեկելի նավահանգիստներն էին, որտեղ կանց էին առնում Արաբական ծովով կեղևի նավերը:

Կոչինը իրականում կազմված է երկու քաղաքներից, մեկը՝ բուն Կոչինն է, ուր կանգուն է պորտուգալացիների հիմնադրած բերդը, մյուսը՝ Մատտանշերին, որն ավելի մեծ է

Կոչինից: Ի դեպ, երկու քաղաքների բնակչության թիվը հասնում է մոտ հարյուր հազարի:

Կոչինի նավահանգստի դռների մոտ այսօր էլ կանգուն է մավրիսական ռեզի կառուցված Վասկո դա Գամայի գամբարան-կեղևիցին:

Կոմիկոզեն գտնվում է Կոչինից հյուսիս. դա պատմական Կալիկոտն է, այն երեկելի նավահանգիստը, որտեղ 1498 թվականի մայիսի 20-ին մոտեցան Վասկո դա Գամայի նավերը: Այդ նշանավոր տարիքի հետ անմահացավ ոչ միայն Վասկո դա Գամայի, այլև Կալիկոտ քաղաքի անունը: Կալիկոտը այն ժամանակ շատ ծաղկած ու վաճառաչա՞ քաղաք էր: Պորտուգալացիներից զարմացում էր նրա այբուբենների առատությունը, հատկապես բամբակյա նուրբ գործվածքների, միտակ կտորի, որի անզիտական սկայիկոս անունը եվրոպացիները ավելցին այդ քաղաքին: Այգոտից էլ՝ Կալիկոտ անվանումը:

**ՀՆԳԿԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ԿԵՆՑԱՂՑ  
ՈՒ ՄԵԱԿՈՒՅԹԸ**

Երկիրը նրա ժողովրդի սակզման է  
Յ. Տադր

Հնդկաստան սակայն մենք նկատի ենք ունենում մի կողմից Երկիրը, իսկ մյուս կողմից ժողովուրդը Երկիրը Հընդկաստանի աշխարհադրական էությունն է, այսինքն՝ նրա գիրքը, սեղը աշխարհի բարեզգի վրա, տարածությունը, բնությունը, հարստությունները ժողովուրդը Երկիր բնակչությունն է՝ մարդիկ, որոնք իրենց աշխատանքային հմտությունները և աշխարհական փորձով ստեղծում են նյութական բարիքներ, կերտում նրա պատմությունը, վերափոխում բնության պատկերը, պահպանում, զարգացնում անցյալի հուշեր ու նյութական մշակույթի մասնադրությունը:

Հնդկաստանի և Պակիստանի հիմնական ժողովուրդը անկախ կրոնական, դասային և լեզվական տարբերությունների կռուցում են հնդկի նրանք կապված են իրար հետ պատմական արժանանքով, մշակույթի ընդհանուր ժառանգություններ, կենցաղի ու սովորությունների ընդհանրություններ, իհարկե, չբացահայտված աշխարհադրական ու լեզվական տանձնահատկություններից բխող որոշ տարբերությունների առկայությունը:

Ինչպես տեսնում ենք Հնդկաստանի բնակիչները կրում են սհնդկիչ ընդհանուր անվանումը: Եվ եթե դուք դիմեք հըն-

դիկին և նրան հարցնեք թե որ ազգից է նա, անմիջապես կը պատասխանի, որ ինքը սհնդիկ է, այսպե՛ս նոր արդեն կարիք եղած դեպքում կասի, թե ինքը փենդուրցի է կամ ուրաաստանցի, կամ մադրասցի և այլն:

Օտարները բուրբին հնդիկ են անվանում անկախ նրանց կրոնական պատկանելիությունից: Եթե մուսուլման հնդիկը Արաբիա կամ Իրան է բնակել, նրան միևնույն է հնդիկ կանվանեն:

Հնդիկները Ասիայի հնագույն ժողովուրդներից են: Նրանց պատերը պատմական վաղ անցյալում բարձր մշակույթ և արվեստ են ստեղծել: Հնդկական ճարտարապետության հիմնավորցը Տուշարձանները դրանց լուռ վկաներն են:

Հնդիկները բնդհանուր անունը պատկանում են սպիտակ ցեղին, բացառությունը երկրի հարավում բնակվող դրավիդներին: Ժիշա է, հնդիկներից շատերի մաշկը արևի ուժեղ ճառագայթների ազդեցության տակ այրվել է ու սևացել, բայց դա իրավունք չի տալիս նրանց սև ցեղի շարքը դասելու:

Հնդկաստանի բնակչությունը 1961 թվականի մարդահամարի տվյալներով կազմում է 436 միլիոն 400 հազար մարդ, այսինքն՝ մարդկության 1/7-ը բնակվում է Հնդկաստանում: Ըստ այդ մարդահամարի տվյալների 225 միլիոնը աղամարդիկ են, իսկ 211 միլիոն 400 հազարը կանայք են: Չիտասանից հետո բնակչության թվով Հնդկաստանը աշխարհում երկրորդ երկիրն է: Բացի դրանից հնդիկներ կան նաև Ցեչոնում, Բիրմայում, Հարավ-Աֆրիկյան Միությունում և այլ երկրներում:

Բնակչության միջին խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա 130 մարդ է: Առավել խիտ է բնակեցված Գանգեսի հարթությունը, Օրիսա և Բենգալիա նահանգներում մեկ քառակուսի կիլոմետրի վրա խտությունը հասնում է մինչև 500 մարդու: Երկրի հարավային մասում ամենախիտ բնակչությունն ունի Փենջաբի նահանգը: Համեմատաբար նուր են բնակեցված կիսանապատային և բարձրալեռնային շրջանները: Հնդկաստանի բնակչության անհավասարաչափ սեռաբաշխման գործում մեծ դեր է խաղացել կլիմայական պայ-



մաների և հողաժառկույթի բազմադասնությունը, Հայասնի ևս որ Լնդկաստանը մեր մուրաբի այն անկուններից է, որտեղ սրտովն ուժեղ է արտահայտված մասսանային կիրման Այստեղ մարդկոնց կյանքը խիստ կախման մեջ է գտնվում անձրեւաբեր մուսոններից, բնդհանրապես՝ ջրից: Ընտեսայն սրբապաշտօ հնդիկ միշտ էլ ձգտում է զիպի այն վայրերը որտեղ խոնավութունն ավելի շատ է կամ զեա է հոսում:

Ընդկաստանը հիմնականում գյուղատնտեսական երկիր է: Նրա ազգային եկամտի կեսը գյուղատնտեսությունն է տալիս: Ընդկաստանում կա 558 հազար գյուղ, որտեղ բնակվում է երկրի բնակչության 80 տոկոսը: Այսպիսով, ընայած Լնդկաստանի բնակչության յուրաքանչյուր տասը մարդուց միայն երկուսն են բնակվում քաղաքներում, այնուամենայնիվ 436 միլիոն բնակիչ ունեցող այդ հսկայական երկրում քաղաքային բնակչության քանակը դարձյալ մեծ թիվ է կազմում: Թափական է ասել, որ այդ թիվը մեկ և կեն անգամ գերազանցում է Մեծ Բրիտանիայի ամբողջ բնակչությանը: Թայց բնդհանուր առմամբ քաղաքային բնակչությունը գյուղի հետ համեմատած թիչ է: Քաղաքային բնակչության անձան ասյ զանգաղ պրոցեսը հետեանք է նրա արդյունաբերական թուլլը արագացման, մի բան, որը գաղութային վիճակի պատճառով է: Այն ժամանակ, երբ նվթուպայում գյուղական բնակչությունը արդյունաբերության զարգացման հետևանքով բազմաք էր անդադրվում, Ընդկաստանում կատարվում էր հասակակր: Տնայնագործության անհումը և անդիլական զործաբանային ապրանքների առատությունը կրճատում էր քաղաքներում կենտրոնացած հնդկական արհեստարտերի թիվը:



Հարավային Ասիայի այս ամենամեծ ու բազմաբնակ բնակչություն ունեցող երկրի ու նրա ժողովրդի մասին մի քանի տասնամյակ առաջ շատ թիչ բան գիտեինք, ավելի ճիշտ գիտեինք ոչ այնպես, ինչպես նրա իրականում կա:

նվթուպիան ժողովուրդները, հատկապես գաղութատեր երկրների վերախաղվի մոտ ժամանակի ընթացքում Արևելքի մարզկանց, այդ թվում նաև հնդիկների մասին ստեղծվել էին ոչ ճիշտ, ոչ ընդվ շեմնավորված պատկերացումներ: Արևելքի ժողովուրդները պատկերվել են որպես սղանդաշարած, ախտիվ ստեղծագործություն անընդունակ մարդիկ:

Նման բնութագիր տալիս, գաղութարարները մտածում էին, որ այդ բուրբի հետևանք հիմնականում Արևելքի երկրների իրենց կողմից խրախուսվող գաղութային գոյավիճակն ու Ֆեոդալական կարգերի պահպանումն էին:

Այսօր, երբ Արևելքը արդեն ապրում է իր զարթոնքը, այսօր, երբ մարդիկ ինչպես հարկն է ծանոթանում են այդ երկրների ու ժողովուրդների հետ, նրանց ոչ միայն ներկայի, այլև անցյալի ստեղծագործ աշխատանքի հետ, հասկանալի է դառնում թե որքան անազարտ են եղել գաղութարարները Արևելքի ժողովուրդներին, այդ թվում հնդիկ ժողովրդին բնութագրելու հարցում:

Չնայած այդ բոլորին, հնդիկ ժողովուրդը մեաց սզով բարձր, պահպանեց իր բարոյական վեհությունը և իր հաբարամյա հոգեոր ու նյութական մշակույթի ժառանգությունը, նա զարբերի միջով սերունդներին փոխանցեց իր աշխատասիրությունը, հմտությունն ու փորձը և ազգային այլ սովորությունները:

Հնդիկ ժողովուրդը իր զարուր մշակույթի ամբողջության մեջ անի նաև ներքին տարբերությունները Այդ հանգամանքը պայմանավորված է նրանով, թե տվյալ հնդիկը ո՞ր նահանգից է, ինչպիսի՞ բնական պայմաններ ունի այդ նահանգը, նա քաղաքի՞ բնակիչ է, թե՞ գյուղի, եթե քաղաքից է, ապա ո՞ր քաղաքից է (որովհետև հնդկական քաղաքները իրարից շատ են տարբերվում), վերջապես ո՞ր կրոնին հետևող մարդ է, ո՞ր խավին, ի՞նչ գրաի է պատկանում:

Հյուսիսում բնակվում են քրիստոնեական ու զեդեցիկ կաշմիրցիները, ձեռներեց փեղաբացիները և ասպետական ուշադասանքները, հարավում սրամիտ տելուգաները, ասամիլները, մալայալիները և կաննարները, արևելքում և հյու-

սիս-արևելքում՝ արվեստագիտ րենգալացիները, սասամցիները և օրխոսները, արևմուտքում՝ համարձակ մարտահրեհները և գործունյա գուշարացիները, իսկ միջին մասում այս բոլոր հատկությունները մարմնավորող մի մեծ խումբ, որը խոսում է հինգի լեզվով:

Այսպիսի բազմազանությունն է, որ Հնդկաստանը դարձնում է հետաքրքիր: Առանձին մասերում բնակվողները, տարբերություններ ունենալով հանդերձ, ունեն շատ ընդհանուր գծեր: Սաարակահներն միշտ էլ հրացնում է նրանց խաղող ու համբերատար բնավորությունը և մշակութային ընդհանուր ժառանգությունը:

Հնդկաստանում օտար աշխարհից եկած մարդու համար շատ բաներ անսովոր են ու անհասկանալի: Հնդկական կյանքի շատ կողմեր պարզ պատկերացնելու համար անհրաժեշտ է կանգ առնել մի շարք հարցերի վրա, որոնք կհենչառանցեն հասկանալու այս երկիրը:

Ազգի մասին.— Ենթադրում Հնդկաստանում բնակվող ժողովուրդները փոխադարձաբար ազդելով իրար վրա, միմյանց հետ քաղաքական, անտեսական և մշակութային ամուր կապեր ունենալով, ստեղծել են մի հիանալի ձուլվածք՝ ընդհանուր շատ գծերով: Այդ ընդհանրությունն հետ մեկտեղ նրանց մեջ պահպանվել են որոշ ներքին առանձնահատկություններ, որոնք զրևտարում են նաև լեզվական տարբերության մեջ:

Ազգան կարևոր միջոց է, որի օգնությամբ մարդիկ հագորդակցվում են միմյանց հետ, ձևավորում և արտահայտում իրենց մտքերը: Ազգուն է այն կարևոր միջոցը, որով ամեն մի ժողովուրդ ոչ միայն զրևտարում է իր ազգային առանձնահատկությունները, այլև դարացնում է իր մշակույթը:

Հնդկաստանում լեզուներ շատ կան, բայց ոչ այնքան շատ, որքան հաշվում էին անգլիական պաշտոնյաները: Հրեդակաստանի անգլիացի կառավարողները աշխարհով մեկ համասարեն առաժմում էին, թե իբր Հնդկաստանում գոյություն ունի մի բանի հարյուր լեզու, թե իբր Հնդկաստանը մանր ժողովուրդների մի խառնուրդ է, որը կարծիք է զգում սեովա-

Կալիդասը: Գա իր ժամանակին խիստ ձեռնառու էր անգլիական ժողովարարներին, որպեսզի մեկուսացնենին Հնդկաստանի մտղովուրդներին, արգելակեն նրանց անտեսական ու մշակութային զարգացումը, խանգարեն նրանց միասնությունը, նրանց միջև ազգային ու կրոնական երկպառակություն սերմանենին: Գաղութարարների նպատակն էր պառակտել Հնդկաստանի ժողովուրդներին, հակադրել միմյանց և այդ բոլորը առթիվ ծառայելուն իրենց իրեն միջնորդ գտառվոր հանդես գալուն և դրանով Հնեց արդարացնել իրենց սակայությունը Հնդկաստանում:

Հնդկաստանի բնակչության 95 տոկոսը խոսում է 14 հիմնական լեզուներով՝ հինգուստանի, փենջաբի, ուշաստանի, բենգալի, մարատհի, գուջարատի, սասամի, քաշմիրի, օրիսյի, բիհարայի, կաննարայի, տելուգուի, տամիլի, մալայալի: Այդ հիմնական լեզուները պատկանում են լեզվական երկու տարբեր բնույթների՝ հնդեվրոպական և դրավիդյան: Այդ երկուսից հիմնականը հնդեվրոպականն է, որի մեջ մտնող լեզուներն են՝ հինգուստանի, փենջաբի, ուշաստանի, բենգալի, մարատհի, գուջարատի, սասամի, քաշմիրի, օրիսյի, բիհարայի, որոնցով խոսում է մոտ 250 միլիոն մարդ: Այդ լեզուների հիմքում ընկած է սանսկրիտը, որը եղել է հին հնդկական զրգական լեզուն: Սանսկրիտով են գրվել հնդկական սրբազան գրքերը, կղանները: Սանսկրիտի գոյությունը մեկ անգամ ևս հաստատում է դեռևս վաղ սոցցյալում եղած Հրեդակաստանի միասնությունը:

Հնդեվրոպական բնույթի բնակչության լեզուները սանսկրիտական ընդհանուր հիմք ունենալով, իրենց կառուցվածքով շատ մոտ են կանգնած միմյանց: Բենգալի, մարատհի, գուջարատի լեզուները այնքան մոտ են հինգուստանի լեզվին, որքան անգլիացի, ուկրաինները կամ բելուսուսները՝ սուսերենին: Սրանք ամենատարածված լեզուներն են: Իսկ ամենից շատ տարածված է հինդուստանին, որով խոսում է 150 միլիոն մարդ (գլխավորապես Հյուսիսային Հնդկաստանում՝ Փենջաբից մինչև Բիհարը): Հինդուստանին ծանոթանում է որպես խոսակցական լեզու Հնդկաստանի քաղաքային բնակչության



զգալի մասի համար Այստեղ անհրաժեշտ է հիշել այն, որ հինգուստանի լեզուն լինելով ժողովրդական խոսակցական լեզու, գործազրկելով գրականության մեջ, ենթարկվել է գրական որոշ մշակման ու հզիման և ստացել ոճական սրոշ երանգավորում:

Հինգուստանի լեզվի հիման վրա ժամանակի ընթացքում զարգացան գրական երկու լեզուներ՝ հինգրիս և ուրղուն: Հինգրիս Հինգուստանի ասեկերիտարանությանը հարուստ ձևն է, եւ ներկայումս Հնդկական Տանրայտությունյան պետական լեզուն է:

Ինչ վերաբերում է ուրղու լեզվին, ապա այն ժամանակի ընթացքում մայր լեզվից (հինգուստանի) ածառովից և ընդունելով պարսկական ու արաբական բառեր, փաստորեն զարձակ առանձին լեզու Ուրղու լեզուն տարածված է Հըրդհաստանի Փեհլար, Սուտար-Պարաշ և Անհրա-Պարաշ կանանգներում: Իսկ Պակիստանում նա համարվում է արդեն պետական լեզու Ուրղու լեզվի ձևավորումը ունի բավական հետաքրքիր պատմություն: Նա ձևավորվել է 12-րդ դարում Հյուսիսայտան Հնդկաստանում, երբ Իրանի և Աֆղանստանի վրայով այդ մասը սկսեցին ներխուժել մոնղոլական ցեղերը: Ուրղու անունը գաղտնի պարսկերեն լեզվից՝ «զարանի ուրղու անունը», որը վրանի կամ ճարտարի լեզու է նշանակում: Նվաճողները իրենց վրաններում գործածելով հինգուստանի լեզուն, ավելացրեցին պարսկերեն բառեր: Ժամանակի ընթացքում նրան ավելացան նաև արաբերեն բառեր և ուրղուն ձևավորվել որպես ստանձին լեզու:

Հինգրի համահնդկական լեզու, ավելի ճիշտ հաղդհգակցման հիմնական միջոց և պետական լեզու դառնալը աշխարհն էլ հեռա լինի նախ որ համալսարաններում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հինգրի լեզվով դասավանդելու համար անհրաժեշտ եղավ ստեղծել գիտական բազմաթիվ ածրմիներ, որոնք անհրաժեշտ էին այնպես առարկաներ անցնելու համար, ինչպիսիք են բարձրագույն մասնագիտական, առումային ֆիզիկոսի, փիլիսոփայությունը և այլն: Հինգրի լեզուն շատ բառեր ընդունելով սանսկրիտից,

շարունակում է հարստանալ նաև միջազգային երաճող տեքմիներով:

Հինգրի պետական լեզու դառնալը հյուսիսում մեծ զբվարությունների շեր կարող հանդիպել, որովհետև այնտեղ իշխող լեզուներ, ինչպես ասվեց, ազգակից են իրար: Գրվարությունները հարավում էին, որտեղ տարածված են գրավիզյան լեզուները:

Դրավիզյան ընտանիքի մեջ մտնող լեզուների հիմք ուրիշ է: Այդ լեզուները տարածված են Շուպուր քաղաքի լալուությունը հարավը, ընդգրկելով Մալուրի, Անհրա-Պարաշի, Մաղաբի և Քերալայի նահանգները:

Իր կուլյաներից մեկում Հնդկաստանի պրեմիեր-մինիստրը Ջավահարլալ Ներուն հայտարարել է, որ Մեներ շեր կարող հինգրի հարավային հնդկներին վզին փաթաթել, մեք կարող ենք փորձել նրանց համոզել ամբողջ Հնդկաստանի միասնական լեզվի առավելությունը:

Հինգրի լեզվի զարգացումն ու տարածումը չի կարող և չպետք է խանգարի հնդկական մշակ մեծ լեզուների՝ ընկալի, զուգարառի, մարտահի, օրիսի, իսկ հարավում տամիլի, տելուգուի և մալայալի զարգացմանն ու հարստացմանը, որոնք շատ կենսունակ ու գրական տեսակետից էլ մշակված են: Այդ լեզուները իրենց տարածման շրջաններում մեծապես նպաստում են լուսավորությունն ու մշակույթը ժողովրդական լայն զանգվածներին հասցնելու գոծին: Հնդկական Տանրայտությունյան կոստավորությունը բաշ գիտակցում է ստանձին ժողովուրդների լեզվական մշակույթի զարգացման անհրաժեշտությունը: Այդ է ապացուցում քա լեզվական հասկանիչի կոստավորված Հնդկաստանի վարչական նոր բաժանումը: 28՝ որ Հնդկական Տանրայտությունյան կազմի մեջ մտնող 15 նահանգներից 12-ը կազմվել են լեզվական միասնակության սկզբունքով:

Հնդկական դեմոկրատական կուսակցություններն ու կողմակերպությունները, այդ թվում առաջին հերթին Հըրդհաստանի կոմունիստական կուսակցությունը հավանություն են տվել ինչպես հինգրիս պետական լեզու դարձնելուն (այն





միահյուսվում են նրա ապագա ժիշկի հետ: Ճիշտ է ասված, որ Հնդկաստանը նման է մի ծովի, որքան նրանով երկար եւ գեղում նա այնքան խորն է դառնում:

Մինչև վերջերս Հնդկաստանի մասին մարդիկ թիչ գիտեին կամ թիչ էին խոսում: Հաճախ բավարարվում էին բնօգնանոր գնահատականով, որ «Հնդկաստանը Բրիտանական գաղութ է», եւ «Նմալուքների ու փղերի աշխարհ է» եւ նման բաներ: Հնդկաստանի գաղութի լինելու հանգամանքը նրան երկար ժամանակ դուրս էր թողել հումադարձային թասերարեմէից: Սակայն անկախություն նվաճելուց հետո Հնդկաստանը այժմ իր պատշաճ տեղն է գրավում մարդկության բնօգնանոր բնասանիքում եւ հնդկի ժողովրդի դարձավ ու հարուստ մշակույթը հայտնի է դառնում աշխարհին:

Ճաշկուտի մշակույթի հետ մարդիկ ծանօթանում են գեղես դպրոցական նստարանից: Գեռ ոչ վաղ անցալում, դպրոցականները ծանօթանում էին միայն հին Հունաստանի եւ Հռոմի հետ:

Այդ դասընթացներից դուրս էին մնում մարդկության չաղաքակրթության երկու խոշոր օրրաններ՝ Չինաստանն ու Հնդկաստանը: Այդպիսով, համաշխարհային մշակույթի օբյեկտների ուսումնասիրությունը մի տեսակ թերի էր մնում: Սերունդները անտեղյակ էին մնում Կոնֆուցիոսի ուսմունքին, Բուդդային, սրտելեի Վեհաբժշարատաւ եւ Ռեմադայանա՝ պոեմներին, անմահ Կալիդասայի «Մակուտայային»: Գեռ դպրոցական հասակից մարդկանց հիացրել է իտալացի անվանի ստուղղական եւ ֆիլիսոփայ Փալիլեյի իր ժամանակին արտահայտած խիզախ միտքը՝ «Այնուամենայնիվ նա պարտավորում է»: Բայց չէին սովորեցնում, որ դրանց հազար տարի առաջ, հինգերորդ դարում, հնդկի մեծ աստղաբանչա եւ

մաթեմատիկոս Երարհատան գրել է, որ երկիրը գունդ է եւ պտտվում է իր առանցքի շուրջը:

Մեր թվականությունից մի քանի դար առաջ Հնդկաստանում երևան է գալիս հնչյունային այբուբենը: Այն ժամանակվա գրական լեզուն անսկիբուն էր: Քանի որ անսկիբունը եղել է հին հնդկական եւ միջնագարյան Հնդկաստանի գրական լեզուն, ապա դրանով է գրված դասական, կրոնական եւ գիտական գրականությունը: Առեսկիբուն հետագայում ասարածվեց նաև Հնդկաստանի սահմաններից դուրս եւ լավ ընդունելություն գտավ մասնավորապես Ինդոնեզիայում: Այստեղ նա մտավորապես այն գերը խաղաց, ինչպիսին արեւմտյան քաղաքակրթության մեջ չափերին:

Հնդկական գրականության հնագույն շրջանի լավագույն հուշարձանները համարվում են վեղաները եւ էպոսները:

Նախ մի քանի խոսք վեղաների մասին: Վեգա քառացի նշանակում է գիտելիք: Գրանք ստեղծվել են մեր թվականությունից երկու հազար տարի առաջ, որպես այդ դարաշրջանի գիտելիքների ժողովածուներ: Նրանք ստեղծման գործին մասնակցել են քանաստեղծներ, քմեր եւ փիլիսոփաներ: Վեղաները բազմադան գործեր՝ հիմների, աղթքների, դժարերություն միանակապատկերներ, հմայությունների, բնության մասին զրված ձևերի խոստուրդ են: Նրանք համարվում են մարդկության պատմության մեջ մեզ հասած ամենահին գրքերը:

Վեղաներին հաջորդում է էպիկական ժամանակաշրջանը, որը բացվում է հնդկական մշակույթի եւ գրականության զագաթնակեւը համարվող Վեհաբժշարատաւ եւ Ռեմադայանա՝ պոեմներով:

Նախ՝ Վեհաբժշարատաւի մասին, որը հնդկական երեւելի էպոսներից մեկն է: Պատմը ստեղծվել է ժողովրդական այն պատմվածքների հիման վրա, որտեղ նկարագրվում է բժարատաների (ներկա հնդկների նախորդների) հերոսական պայքարը: Սկզբում էպոսը գրվել է ժողովրդական լեզվով, հետագայում թարգմանվել սանսկրիտերեն: Մահաբհարատայի ստեղծմանը մասնակցել են շատ սերունդներ: Նրա

1 Փալիլե Փալիլեր ինդիկոստրների կողմից ասեղուից հարութորթի ժամանակ, լծայած քայք էր առախ, որ երկրի պատման մասին կարծ իր տեսակից հրամարում է, բայց, բառ ովանորթյան, գրանց հետո ոտքի կանգնելով ասում է, «Նմանանակիվ նա պտտվում է»: Ժամանակի բնագրում այն արտահայտությունը գարծավ թեւալը խոսք եւ իտրցրակելի եղարտության անասան հանգամանի:

սկիզբը համարվում է մեր թվականությունից առաջ 6-րդ դարը: Պոեմը վերջնական ձևավորում է առաջել մեր թվականության 4-րդ դարում:

Մահարճարատան մարդկությանը հայտնի մեծագույն գրքերից է Այս հակայական աշխատանքը ավանդությունների, առասպելների, փաստերի հանրագիտարան է: Պոեմի սուղերի բնգհանուր թիվը հասնում է հարյուր առաջ հազար երկտողանի ոտանավորի: Այնպես որ, է՛քն Մահարճարատան սովորական մեծությունը որքանով հրատարակվում, այպ կդառնա ավելի քան 20 հազար գիրք՝ յուրաքանչյուրը 500 էջից բաղկացած:

Մյուսը՝ Ռամայանան՝ մի շքեղ պոեմ է, որը իր չափով «Մահարճարատա»-ից փոքր է մոտ չորս անգամ:

Ննդական հնագույն էպիկական պոեմներից են նաև մեծածավալ պոլուրաները, որոնցում գեանդված են ու՛թ հարյուր հազար երկտող: «Պուրաններ» թիվը հասնում է տասնութի, որոնց մեջ նշանավորն է Թհավա-պուրան, ուր հավաքված են հնդկական Աիշու աասծուն նվիրված ավանդություններն ու առասպելները:

Ննդական երկու հերոսական պոեմները՝ «Մահարճարատան» և «Ռամայանան» հանախ համեմատում են Հոմերոսի «Ոդիսական» և «Իլիական» հետ: Պոեմները անկասկած աչ ժողովուրդների հոգևոր մշակույթի լավագույն հուշարձաններն են, սակայն իրենց ժափալով գրանք շատ են գերազանցում հունականին: «Մահարճարատան» ու՛թ անգամ գերազանցում է ամբողջ Հունիստին:

Ննդական, ինչպես և համախոսրճային գրականության զանաճերից են «Փանչատանտրան» և «Շակունտալան»: Առաջինը՝ «Փանչատանտրան» (բառացի «հինգ գիրք» է նշանակում) մեր թվականության այն սակոածասրծություններից է, որի հեղինակը անհայտ է: Այս հրանալի առակների գրքում ծագրի են ենթարկվում հիմարությունը, պատությունը, նախանձը և մարդկային այլ արատներ: Առակները երևում են հնդիկ ժողովրդի արդարաստությունը: Այս առակների գիրքը շատ հետարբրի բախտ է ունեցել: Գաերը առաջ թարգմանա

վել է արաբերեն, հետո արաբերենից լատիներեն ու հունարեն և այդպիսով անցել Եվրոպա: Երկար ժամանակ նրանք ուարածվել են մերթ որպես արաբական, մերթ որպես հունական, մերթ էլ որպես լատիական աասինք: Մարդիկ չեն իմացել, որ գոյություն ունի նրա իսկականը, հնդկականը, երևելի «Փանչատանտրան»:

«Շակունտալան» միջնադարյան Ննդկաստանի գրականության փայլուն ներկայացուցիչներից մեկի՝ Կալիդասի խոշորագույն դրամաներից է: Կալիդասային իրավամբ «հրեդկական Շերսայիք» են անվանում: «Շակունտալան» գրված է «Մահարճարատան» նկարագրած դեմքերից մեկի՝ սյունուով և պատկերում է Շակունտալայի սիրո պատմությունը: Կալիդասան վարպետորեն նկարագրում է Շակունտալայի՝ հնդիկ սուղիս զգացմանքները:

Ննդական մշակույթի լավագույն ստեղծագործությունների մեծությունը կապանում է նրանում, որ նրանք վեր են բարձրացել իրենց սզգային սահմաններից ու դարձել բուրբի համար հասկանալի ու սիրելի, անկախ այն բանից, թե որտեղ են նրանք ծնվել կամ ինչ լեզվով են կարդում: Չնայած հազարամյակներ են քածանում մեզ այդ ստեղծագործությունների ժամանակաշրջանից, բայց նրանք այսօրվա բնթերցողի արժեք մտն են և հուզում են նրան:

Գրավել է նաև հնդկական երաժշտությունը, այն թուվել է ինչպես նրանց հայրենիքի վատ արևն ու կանաչը: Նա գործել է հնդկական կինոների գործի ու փառքը: Ննդական երգերը լսելիս մարդ կրկին անգամ համոզվում է, որ հնդիկները իրոք երաժշտաաեր ժողովուրդ են: Երգը ու պարը պատկերում են հնդիկ ժողովրդի կյանքը, երազանքը, սպասելիքը: Երգերի բովանդակությունը գալիս է նուն «Մահարճարատան» և «Ռամայանան» նպաներից ու վեպաներից:

Կռնի մասին. — Կրոններն ու կրոնական դանազան ուղղությունները մեծ գեր են խաղացել և շարունակում են խաղալ հնդիկների կենցաղի, բարքերի, կյանքի ու իրերի նկատմամբ ունեցած հայացքների ձևավորման գործում, շնայած վերջիններս՝ հիմնականում պայմանավորված են այդ



երկրի զարգացման սոցիալ-պատմական պայմաններով: Ի վեպ, հնգիկի կյանքի վրա կրոնի ունեցած ազդեցությունը հաճախ շատ է ուռնացելու: Մարդիկ մտանում են և մի կողմ վազում Հնդկաստանի փիլիսոփայությունը, արվեստը, իրավունքը և ամեն ինչ բացառում են կրոնով: Մտանում են, որ փիլիսոփայությունը, վեդաները, էպոսն ու հին գրականությունը հնդկական մշակույթի համապատասխան հաստատվածներն են: Հնդիկների կրոնափրոջան մեջ ըստ բան կա, որ բխում է նրանց սովորություններից, շատ բան կա կյանքի փիլիսոփայությունից, շատ բան կա նախապաշարունակներից: Ահա թե ինչու շատերի մոտ է, թե հնդիկները հարյուր տեղումով հավասարյալ են:

Հնդկաստանում չկա պետական կրոն, ինչպես Պակիստանում: Պակիստանը, ինչպես հայտնի է, պաշտոնապես կոչվում է Իսլամական հանրապետություն:

Հնդկաստանում լայն տարածում ունեն հետևյալ կրոնական ուղղությունները՝ հինդուիզմ (ներկայումս Հնդկաստանում ամենատարածված կրոնն է), բուդդայականությունը, բրիտանականություն և մահմեդականություն: Տեղական նշանակություն ունեցող և հինդուիզմից անջատված կրոնական ուղղություններից հայտնի են շայնիզմը և սիկիզմը: Կրոնական այդ ուղղությունները իրենց խիստ և յուրահատուկ կենթն են դրել հնդկական կյանքի շատ կողմերի վրա: Հնդկական առասպելների, էպոսների, գրական ստեղծագործությունների հիմքում նույնպես բնկած է կրոնը, մասնաժողովրդական բուդդայականությունը: Այդ կապակցությունը մի քանի խոսք բուդդայականության մասին, որը ծնունդ է առել հին Հնդկաստանում: Բուդդայականությունը ժամանակի ընթացքում տարածում գտավ նաև Հնդկաստանից դուրս՝ հասկապես Հնդկաստանում ու Չինաստանում և խոր արմատներ բողոք այդ երկրների մոդուլուդների մշակույթի մեջ:

Բուդդայականությունը հիմնվել է Գաուտամա Բուդդայի կողմից, որը, ըստ ավանդության, իր առաջին բարոյք կարգացել է Սաոնաթում (Բենարսի մաս) մեր թվականություն-

ներից վեց դար առաջ: Բուդդայի ուսմանը հիմքը բարոյախոսական գաղափարներն են, որով նա հակադրում էր այն ժամանակի իշխող դանազան ծիսակատարություններին: Բուդդայականության վարդապետության հիմքում բնկած է ներվանան, այսինքն՝ երանելի հանգստությունը: Ըստ այդ ուսմանը, մարդը պետք է ձգտի կենցաղային հոգսերից հեռու բարձրագույն երանելիության:

Բուդդայականության տարածումը Բրիտանում, Տանջանդում, Ցինլեում, Չինաստանում, Ճապոնիայում նպաստեց այն բանին, որ Հնդկաստանը այդ երկրների հետ սերտ կապեր հաստատեց:

Իհարկե, բուդդայականությունը հարմարվեց հիշատակված երկրների տեղական կրոնների հետ և իր պաշտամունքը լրացրեց նրանց ծիսակատարություններով:

Իր հայրենիքում՝ Հնդկաստանում, յոթերորդ դարից սկսած բուդդայականությունը գնում է դեպի անկում: Տանջանդը դարի սկզբին նա տրվեց հնդկական պայմաններում գաղարեց ժառանգական կրոն լինելուց: Ներկայումս ամբողջ Հնդկաստանում բնդամներ 100 հազար մարդ է հետևում բուդդայական կրոնին: Բուդդայականությանը եկավ փոխարինելու մի նոր կրոն, որը ավելի հարմարվեց վաղ միջնադարում Հնդկաստանում հանդես եկող ֆեոդալական կարգերին: Նոր կրոնը ստացավ հինդուիզմ կամ հինդուիստական անունը: Ժամանակի ընթացքում այն դարձավ ամենատարածված կրոնը: Ներկայումս Հնդկաստանի բնակչության մոտ 85 տոկոսը, այսինքն՝ 350 միլիոնը հետևում է հինդուիզմին: Հինդուիզմը մի առեակ կենսաձև է և հավատների ամբողջություն: Հյուսիսում արեալների հանդես գալու հետ միասին նա սկզբնաժողովից որպես բնության պաշտամունքի ձև և ստեղծանարար իր մեջ առավ սեղոական պաշտամունքներն ու աստված-աստվածուհիները, զանազան հավատներն ու պաշտամունքի ձևերը:

Հինդուիզմը օգոստոսից նաև հնդիկ մոզովրդի մեծ աչք եղած մշակույթի ժառանգությունը՝ հարուստ գրականու-

թյունը, ստանձնապես «Վերաձեր» և «Ռամայանա» ու «Մահարճարատա» էլ պոստերը:

Հինգրոստակյան կամ հնդկական կրոնը, շեռյաժ ընդունում է մեկ աստված, բայց իրականում այն եռամիասնական աստվածություն է, աստվածը երեք կերպ ունի՝ Բրահմա, Վիշնու, Երիվա պահակերումներով. նրանց արձանները հենց այդպես էլ կերտվում են: Այս երրորդությունը հայտնի է տրինություն անվան տակ:

Աստվածներից Բրահման աշխարհի ստեղծողն է, Վիշնուն՝ պահպանը, Երիվան՝ քանոթը: Ժողովրդական երկրպագություն ստորկա հնդկականում են միայն Վիշնու և Երիվա աստվածները: Ինչպես ասեմում ենք, հինգրոստակյան հետեղները նախապատվություն են տալիս այն աստծուն, որից անմիջապես կախման մեջ են և որով իրը թե պայմանավորված է իրենց գոյությունը: Վիշնուին դիմում են, որ իրենց պահպան լինի: Երիվայից վախենում են, որպես բանաջող, կործանող աստծու և սիրաշահում են, որ նա չզայրանա: Ինչ վերաբերում է Բրահմա աստծուն, ապա, ըստ ուփանդության, նա արդեն ստեղծել է աշխարհը: Վիշնու և Երիվա աստվածներին են նվիրված վանքերի ու տաճարների, արձանների ու այլ բանդակների մեծ մասը, Բրահմա աստծուն նվիրված վանքեր չկան: Բացի նշված աստվածներից կան այլ մանր-մունր աստվածներ, ինչպես նաև աստվածների կանայք, որոնք նույնպես աստվածային պատվի են արժանացել: Աստվածներին մարդկային հատկանիշներ տալու հարցում հնդկները շատ բանով հիշեցնում են հին հույներին: Այսպես, օրինակ, ամեն մի աստծու համար (այժույդ դեպքում ամեն մի արձանի համար) ստանձնացվում է հատուկ ծառայող, որը պարսպալոր է: Նրա մասին հող տանելի լինչպես կենդանի արարածի: Աստվածայն նրան արթնացնում է, լվանում է, պտուղներ և բրինձ բերում: Հավատացյալները նույնպես բրինձ ու մրգեր են բերում: Իսկ օրվա որոշ ժամերին էլ նվազով, երբով ու պարով վզարձացնում են նրանց:

Հինգրոստակյան կրոնական զոգմաներից է նաև անասուն-

ների, գետերի և բույսերի պաշտամունքը: Անասունների պաշտամունքը մարմնավորող կոմն է, գետերինը՝ Գանդեար, իսկ բույսերինը՝ հնդկական լուսու ծաղիկը: Կովը գարձել է հնդկիկի համար պաշտամունքի ստորկա, նրա հովանավորողը և ըստ հինգրոստակյան կրոնի՝ կով մորթելն ու նրա միսը ուտելը ծանր մեղք է: Ընդհանրապես մարդու և կենդանու միջև խաղաղություն պահպանելը հինգրոստակյան հետեղ հնդիկներին կյանքի կանոններից մեկն է:

Հինգրոստակյան սկրիպտորիվ է մի հերձվածք՝ ջայնիզմը: Վերջինիս հանդես գալը կապված է Բուդդայի ժամանակակից ՄահաՎիրայի հետ: Ջայնիզմի հետեղների թիվը Հնդկաստանում հասնում է մոտ երկու միլիոնի: Եթե հինգրոստակյան հետեղները չեն ուսում կովի, եզան, գոմեշի միս, ապա ջայնիստները ընդհանրապես կենդանի էակ չեն մորթում, հետևապես նրանք ոչ մի տեսակ միս չեն զորածում:

Հինգրոստակյան մյուս կարևոր հերձվածքը սիկհիզմն է, որը հիմնադրվել է Գուրու Նանակի կողմից (ծնվել է 1469 թվականին)՝ Փենդարում: Նախապաշարումներից և զոգմաներից մղված, նա քարոզում էր սեկեղծ նվիրվածություն ու սեր մերձավորների և իր նմանների հանդեպ, ազնվություն ստորյա կյանքում: Նրա ուսմունքը ամփոփված է Աղիդրանտիանում՝ սիկհների սուրբ գրքում: Այն պահվում է Ամրիտասար քաղաքում, սիկհների կրոնական կենտրոնում:

Հնդկաստանում կան նաև զրադաշտական կրոնի հետեղները: Գրաթե ֆալսեթն են, որոնք թվով մեծ չեն և հիմնականում բնակվում են Թանդի քաղաքում:

Հնդկաստանի կյանքում մեծ փոփոխություններ մտցրեց իսլամը՝ մահմեդականությունը, որը ութերորդ դարում ներթափանցեց այս երկիրը՝ արաբների միջոցով: Գրանից հետո «հինգուս տևրիթեր» ստորագրվում է այն հնդիկներից վրա, որոնք չեն հետևում իսլամին:

Մահմեդականությունը հնդիկ ժողովրդի միասնականության գործում բացասական դեր խաղաց և հետագայում էլ



հիմք ծառայեց Լրկրի բաժանմանը և Պակիստանի ստեղծմանը:

Քրիստոնեությունը Հնդկաստան է թափանցել եվրոպացիների միջոցով, բայց հնդկիկների շրջանում մեծ տարածում չի ստացել: Քրիստոնեությունը հնանում են գիրավորապես Հնդկաստանում բնակվող եվրոպացիները:

Կաստաների մասին.— Հնդկաստանում մասին որոշ բան իմացողը լսած կլինի անզուգումն անև կաստաների մասին: Ի՞նչ ենք հասկանում կաստա ասելով: Կաստա ասելով մենք նկատի ենք ունենում հասարակության անդամների բաժանումը առանձին դասերի, բոս նրանց գրադոնները: Կաստաների պատմության արմատները մեզ շատ հնուտ են ասելում և հասցնում այն ժամանակները, երբ արիացիները հյուսիսից նվաճում են Հնդկաստանը և հսկայական քանակությամբ ոչ արիական մաղում ունեցողները գերվում ու ստրկության են մասնակում: Այդ ժամանակ ստեղծվում են չորս խոշոր կաստա (հնաագյուտ, սակայն, նրանց թիվը շատանում է):

Հին հնդկական օրենքի համաձայն այդ չորս կաստաներից առաջինը բրահմանների (քրմերի) կաստան էր, երկրորդը՝ կշատրիներինը (գինձորականների և կառավարողների), երրորդը կըշվում էր վաշյա (ստորակականների և արհեստավարների դաս) և վերջապես չորրորդը՝ շուդրա (Ֆիզիկական աշխատանք կատարողների, հիմնականում՝ գյուղացիական դասը): Առաջին երեք կաստաները համարվել են արտոնյալ, իսկ վերջին կաստան՝ շուդրան եղել է ստորին, ճնշված և համարյա իրավազուրկ:

Աշխատանքի բաժանման պրոցեսի ուժեղացման հետ մեկտեղ կաստաների ներքում կատարվել է կրց մասնագիտությունների ստորաբաժանում և ստեղծվել են իորանոց կաստաներ:

Մեզ ամենից շատ հետաքրքրում է վերջին կաստայն՝ շուդրայի վիճակը, որովհետև այս կաստայի մեջ էին մտնում աշխատավոր զանգվածները: Կաստաների կարգում շուդրան ամենացածր խավն էր: Ժամանակի ընթացքում շուդրան

ստորաբաժանվելով իր ներքում ստեղծեց սոցիալական երկ կարգ, որտեղ ամենացածր տասիանի վրա կանգնած էր այսպես կոչված «պարիաների» կաստան: Այդ մերժված, թշվառ մարդկանց դասը ամենատարածարվածն էր: Ահա այդ խավի շահերից, եր, որ այնքան ընդմտին պաշտպանում էր հնդիկ ժողովրդի պատմության բարոյիչ Գանդին:

Հնդկական մի կաստայի պատկանողը չէր կարող շփվել մյուսի հետ. նրանց նույնիսկ արգելված էր ամուսնանալ արիչ կաստայի երկպաշույցիչ հետ: Կաստաների գոյությունը մեծ շարիք էր և վնասում էր հնդիկ ժողովրդի ազգային անկախության համար մղված միասնական պայքարին: Բայց այժմ, ոչ միայն օրենքի ուժով, այլև կանքի թելադրանքով վերանում է կաստայական բաժանումը: Այժմ արգեն ամենուրեք՝ թե՛ երկաթուղային վագոնում, թե՛ արածվալում, թե՛ ազգային շքերթներում կողմ-կողքի նստում ու բալլում են տարբեր կաստաների պատկանող մարդիկ: Հնդկական արհմիությունները չեն ընդունում կաստաների բաժանումը: Աստանը թե՛յի պլանացիաններում, Բոմբեյի և Կալկաթայի գործարաններում կատարվում է Հնդկաստանի համար նույն մերձեցման պրոցեսը, որն ուղղված է ազգային, կրեական և կաստայական խարակետության դեմ:

Կաստաների գոյությունը, անկասկած, ավելի էր վնասաբարցնում հնդիկ աշխատավոր ժողովրդի կյանքի պայմանները՝ նրան բաժանելով հարյուրավոր մեկուսացած խմբերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր հատուկ օրենքներ, իրավունքներ, սովորություններ և այլն: Բնական է, որ այդ երևույթը չէր կարող համատեղվել Հնդկական հանրապետության գոյության հետ:

Կաստաների գոյությունը հնդիկ ժողովրդի պատմության թերևս ամենատուր ու ամոթային երևույթներից էր: Այս կամ այն կաստային պատկանելի որոշում էր մարդու դիրքն ու լինակը հասարակության մեջ, անկախ նրա անձնական արժանիքներից: Ահա թե ինչու Հնդկական հանրապետության սահմանագրության մեջ տեղ գտած կաստաների վերացման օրենքը դեռվում է որպես կարևոր և առաջադիմական բայց:

Մազրասի գաղութի պատմության մեջ անմահացավ նրա որդի Հակոբ Եանամիրյանը, որը և եղավ Եանամիրյան տպարանի հիմնադիրն ու ստերիկը: Մազրասի հայերը բնորում են եղզու և գրազվոր միջոց Գուսեներեղի գյուղը՝, տպագրական գործը՝ ազգը լուսավորելու, ազգային ինքնագիտակցությունը լիակատար պահելու համար հրատարակել հայ լեզվով գրված գրականությունը:

Եանամիրյան տպարանից է առաջին անգամ 1772 թվականին լույս տեսնում Մովսես Բագրամյանի «Նոր տետրակ», որ կոչի Հորդորակի գիրքը:

Այդ աշխատությունը կոչ էր անում լինելու հոգեպես արի, սթափվել ծուլությունից, ստիճիկ ազգի պատմությունը, որն ինքնագիտակցության հիմնական միջոցն է:

Գրքի հանդես գալը մի կարևոր իրադրություն եղավ և իրավամբ համարվում է հայ առաջին հրատարակատական երկը:

Նրանք իրենց աճույսի և լույսի փարոսը համարել են զիրն ու գրականությունը: Տպագրական գործին զարկ տալը և աճույց մանկանց դեր ուսուցանելը: Հայ լեզվով գրականություն ստեղծելը էլ է Նեղիկաստանի կշանարանը: Այդ է ապացուցում և՛ նրա անցյալի պատմությունը, և՛ այ-

1 Գերմանիայի Մայն քաղաքում 1440 թվականին Իսահան Գուսեներեղը կուսարեց կրթական եղանակով տպագրության գյուղը, Իսկ 1450 թվականին էլ հիմնեց առաջին տպարանը:

սօրվա Մարգարեական հեմարանի և Բազմյան վարժարանի զոյնվելու: Այս պահանջը իշխատությունների արժանի փաստ էր նաև սեփական Ազգայնագիտական հաստատությունների:

Ահա թե ինչու հեղինակը գաղութի պատմության մեջ առանձնակի տեղ էր զբաղում և դարակազմիկ երևույթ համարվում էր նաև Մարգարեականի տպարանի հիմնադրումը և Հարություն Եմալունյանի կողմից ստաշին հայ պարբերականի՝ «Ազգայնագիտական» ստեղծումը:

Արժի վերջինիս մասին ծանոթանալ թիշ մտախից: «Ազգայնագիտական» հիմնադրումը Հարություն Եմալունյանը Երրանգեղի էր: Նա երիտասարդ հասակում ապրում էր ծանր սղորհրդություն: Մեկ շարքում կորցնում է իր երկու դեռահաս որդիներին Այս սղորհրդությունը խախտում է նրա հոգեկան առողջությունը և վշտացած սրտով նա բաշխում է Երրանգի մոտակա Բարբառու հողված սարը, որտեղ իր ժամանակին պարտիկ անվանի բուսաստեղծներ Մաազին և Հաֆթըն էին ապրել: Եմալունյանը այստեղ յոթը տարի ճշմարտական կյանք է վարում: Նրան ընկերակցող պարտից զերվիլներին լավ պարսկերեն և արաբերեն է սովորում: Ուսումնասիրում է Արևելքի իմաստասիրությունը: Վերջ է վերջը նա սրբում է թողնել հայրենի Երրանգը: Նա տխուր-տրտում բանում է պանդխտության ճանապարհը և 1784 թվականին հասնում է Հեղինակառանի Մարգարե քաղաքը: Հարություն Եմալունյանին սիրով է ընդունում Մաղղասի հայ դպրոցը և նրան նշանակում է վիճակագիր (Քաղաքի) քահանա՝ նույն քաղաքի հայոց եկեղեցու համար: Դա, իհարկե, Հարություն Եմալունյանի համար նախադրյալ է հանդիսանում Մաղղասի հայ դպրոցում իր իշխանությունների գործը ծավալելու համար:

Ինչպես հայտնի է, դեռ 1772 թվականից Մաղղասում աղքեն գոյություն ունեւ Հակոբ Երանաբերյանի տպարանը, որը մի ընդարձակ ասպարեղ էր բացում Հարություն Եմալունյանի առաջ:

Նա 1786 թվականից սկսած ձեռնարկում է մի շարք հայերեն գրքերի հրատարակումը: Նրա մոտ ծնվում է հա-

յերեն պարբերական ամսագիր հրատարակելու գաղափարը: Նա այդ ամսագիրը «Ազգայնագիտական» է անվանում:

Նախքան «Ազգայնագիտական» ամսագրի համարի լույս ընծայելը Հարություն Եմալունյանը շատ երբազանց մի շրջանակում էր գիտնում և ջարակազմող պարտից և մարգարեական սղորհրդագրի հետ: Նա բացատրում է իր նպատակը և գրանով ուղում է նախօրոք իմանալ բաժանորդներին: «Նա, թե՛ Մարգարեի հայ դպրոցի ընդառնում է Հարություն Եմալունյանի նախանկերությունները, Այս հանգամանքը մեծ վստահություն է ներշնչում Եմալունյանին եւս սեղնում է գործի: «Ազգայնագիտական» ամսագրի համարը լույս է ընծայում 1794 թվականի հոկտեմբերի 16-ին:

«Ազգայնագիտական» պարբերականը էր հասարակական, դրական, պատմական, քաղաքական բնույթի հոգվածները: Նա ապագրում էր նաև անտեսարան անգլիկոսություններ և հայաստանյայտություններ: Իսկ վերին էջի վրա առաջին ամսվա օրացույցը: Այն ժամանակվա պահանջներին էր ներկայացնում զուրա կարեւոր էր. այնպես էին վարվում նաև անգլիկոսական թերթերը և ամսագրերը:

«Ազգայնագիտական» խմբագիր Հարություն Եմալունյանը Մաղղասի հայոց եկեղեցու դեպիպատան պատին մի նամակատու էր ամբարձրում, որպեսզի «Ազգայնագիտական» վերաբերյալ թղթակցությունները և նամակներն այնտեղ պցեն: Այդ տուփը հայտնի էր սեղանի տեղանի տակ: Եմալունյանը համարյա ամեն օր բաց էր անում անտուփը, ուսումնասիրում հոգվածներն ու նամակները և որտեղ արժանի էին տպագրության՝ ընդունում էր, իսկ ընդունված հոգվածների հեղինակներին տալիս պատշաճ պատասխան:

Հարություն Եմալունյանը «Ազգայնագիտական» տպագրություն և հրատարակչության ամեն մի հոդու իր ուսերին է վերցնում: Նա պետք է կատարեր նաև փորագրելի, նաև ձուլողի, նաև դրաշմի, նաև թուղթի հայաթայկելու գործը: Այս տեսակետից Հարություն Եմալունյանի կատարած գործը, հայ պարբերական ամսագրի պատմության մեջ կզգա էր նրա ջանքերով, հնդկահայ դպրոցի հրատարակչական համեստ պայման-



ներում մեզանից հարցրե՞լ յոթանասուն տարի առաջ ձեռնեց  
տալ «Աղգարար»-ը և արժանացավ «Հայ Անդրանիկ պար-  
բերական» անվանը:

«Աղգարար»-ը գրարար էր Այսպիս էր «ժամանակի  
գրականության նիւն ոչ պահանջը, զոտն սովորութիւնը»: Եր-  
ժամանակնի «Աղգարար»-ը շատ շատ է գուրա գալիս Մաղ-  
բատի սահմաններեց և տարածվում ավելի հեռավոր հայաշատ  
վայրեր. հասնում Կ. Պոլիս, Ե. Նախիջևան, Էջմիածին: Նա  
սակեր նաև Քղթանիցինը գրայց, ինչպէս, օրինակ, Ռուսաս-  
տանից՝ Հովսեփ Արզումանը, Երևանից՝ Ստեփան Փոլյա-  
միրյանը:

«Աղգարար»-ը հրատարակվել է մինչև 1796 թվականի  
մտքտ ամիսը, բավական լավ թղթով և բազկացած էր 48 էջից:  
Եր գլուխքան քննացրում լուր է տեսնում սասնութ հատար  
կամ ինչպէս ասում են տանուտ թեալը:

Ներկայումս պահպանվել է «Աղգարար»-ի լրիվ չորս  
կոմպլեկտը, որից մեկը՝ Հայաստանում, Երկրորդը՝ Երուսա-  
ղեմում, երրորդը՝ Կապիթալի Հայոց նազարեթաց Եկեղեց-  
ցու գրադարանում, իսկ չորրորդը գտնվում է Վիեննայի Միխ-  
այրյան գրադարանում (վերջինս լրիվ չէ):

Հայ լրագրության հայր Հարություն Եմավոնյանը վախ-  
ճանվել է 1824 թվականի փետրվարի 9-ին, 74 տարեկան  
հասակում: Քաղված է Մաղբատի հայոց Եկեղեցու բակում:  
Փերզմանարարի վրա փորագրված տառերը գրեթե մաշված  
են և կարճ ժամանակից հետո համանական է անըրթնակելի  
գաճաւ: Տուպանադիրն սպադիսին է, սկսա հանգի Տեղ-Հա-  
րություն Եմավոնյան, բարեկերտ, ավագրեց Մաղբատիս հա-  
յոց, ձեռալ ի Երուզ, վախճանեցիվ լամի տեառն 1824 փե-  
տրվարի 9-ի հասակի 74 ամալ...»:

Մաղբատի հայ գաղութի պատմության մեջ անմահ է  
մնում նաև Սամվել Մուրադի (Մուրադյանի) անունը: Նա մի  
պատկանիցի գումար է տրամադրել կրթական նպատակներին  
համար Այդ գումարը նա կտակել է Վենետիկի Միխայրյան  
Միարանությանը՝ նվիրույալում հայկական զգացը հիմնելու  
և հայ պատանիներին կրթություն տալու նպատակով: Հետա-

գալում Միխայրյան միարանությունը այդ գումարով 1834  
թվականին մի վարժարան հիմնեց Փասաշայում (Պաղատ), որը  
հետագայում Փարիզ տեղագիտիցից: Սամվել Մուրադի աչ-  
գանից էլուարդ Ռաֆայելյանը բացեց Նույնպէս մի վարժա-  
րան՝ Վենետիկում, որը կոչվում է Մուրադ-Ռաֆայելյան վար-  
ժարան:

Մաղբատի հայերը մեծ զիւր են խաղացել նաև հայ ժո-  
ղովրդի թուրք բռնակալության դեմ մղած պայքարում, լինա-  
ցելով իրենց ունեցվածքը և հողերը, Եր ժամանակին Մաղբա-  
տի հայ ոսկերիչները հաշկազմոր Բուդղա-Փայա տաճարի  
մողելը նվիրեցին ուսանալու արտերիբին: Մաղբատի հայ գա-  
ղութի ավանդը մեծ է թե՛ հեզգահայ կյանքում և թե՛ նրանից  
զուրս: Մաղբատի հայերը զգրոցացական գործում օգնել են նաև  
Նոր Զուղայեցիներին:

Տասնիններորդ դարի առաջին կեսից հայերի թիվը Մաղ-  
բատում սկսում է պակասել: Գնալով Մաղբատի գաղութը  
տկտրանում է: Ետհամիրյանների ընտանիքն էլ արդեն Մա-  
լանկա էր տեղագիտիվել: Մաղբատի հայերի մի մասը անց-  
նում է Հեղկաշին և Ինզոնեզիս: Հայերը Բիրմայում բնակու-  
թյուն են հաստատում Ռանգուն, իսկ Ինզոնեզիսում էլ Քա-  
տալիս (այժմ Զակալան) և Սուրաբայա քաղաքներում:

Քորզում Գուշակյանի ավալանեղով Մաղբատի գաղութ  
1916 թվականին կազմված էր 5 քնտանիքից, որը բազկացած  
էր 36 անձից: Իսկ ներկայումս մեր ունեցած տեղեկություն-  
ներով 1961 թվականին Մաղբատում մնացել է ինց հայ:

Մաղբատի Եկեղեցու գույրն ու հողային ունեցվածքի գոր-  
ծերը, որպէս անժողատոջ նոր գործիք, Երկար ժամանակ վա-  
րում էր թիկն և Փատրիշ ընկերությունը, որը խնամուպի  
դեր էր կատարում: Այդ վիճակում մնաց մինչև 1963 թվա-  
կանի սկզբները, երբ նորից այն հանձնվեց հեզգահայ գա-  
ղութի անօրինությունը:

Հայկական կառուցմաներից առաջին նշանավորներն են  
Մաղբատում շուգայեցի խոշա Պետրոսի կամ Պետրոս Ոսկանի  
կամուրջը, նրա Երկարությունը մոտ 400 մետր է, իսկ կա-  
մարների թիվը 29-ը: Ինչպէս նաև Մայրաբուրի Ս. Քովմատի

մայր եկեղեցին՝ Մադրասից ոչ հեռու և Ս. Քոլմաս լեռան վրա եղած հուշարձանները: Մադրասի արևելյան ամենագեղեցիկ հատվածում է գտնվում Հայոց փողոցը, որն այսօրև հայտնի է Արմենիան սփրիթ անվան տակ: Այս փողոցի վրա է գտնվում նաև Հայոց Ս. Աստվածածին եկեղեցին և նրան պատկանող 112 համար տունը: Ինչպես տեսնում ենք Մադրասում հայերը թողել են շատ լուսա վիաներ. Մարզիկ լըսած են այնու հոն, բայց քարերը կը խոսին տավալիս: 1

(Պուշկյան):  
Հնդկահայության ազգային ու մտավորականության ուսան Մադրասը կամայ-կամաց սկսում է իր տեղը զիջել Կալիաթային: Ժամանակի ընթացքում մեծ տեղ է սկսում զբրավել նրա ճեմարանը: Նոր Զուղայեցիների հոսքը այս անգամ ուղղվում է դեպի Կալիաթա:

Այսպիսով աշխարհի վիթխարի քաղաքներից մեկում՝ Կալիաթայում պահպանվեց Հնդկահայության ազգային և մտավոր կյանքը: Կալիաթան գործավ Հնդկահայության ուսանը:

Բենգալիայում, որի մայրաքաղաքը ներկայումս Կալկաթան է, հայեր եղել են զեռ այց քաղաքի հիմնադրումից սուտը: Եղած անդեկուսությունների համաձայն, հայերը Բենգալիայում հաստատվել են 1646 թվականին: Սկզբնական զառույթը եղել է Սախարազում, որը Մուսլիմաբադի մտերքն է: Իսկ վերջինս էլ գտնվում է Կալիաթայից հյուսիս՝ մոտ 200 կիլոմետր հեռավորության վրա: Ժամանակի ընթացքում, կըր հիմնվում է Կալիաթան, հայերը սկսում են բնակություն հաստատել այստեղ: Կամաց-կամաց Սախարաբադի հայ զառույթը սկսում է բայթայվել:

Կահաթայի հայ զառույթի խոհական պատմությունը սկսվում է արդեն 1707 թվականից, այսինքն՝ քաղաքի հիմնադրումից 17 տարի հետո: Ժամանակի ընթացքում ոչ միայն Սախարաբադից, այլև Զիլայի գաղութից (Կալիաթայից 50 կիլոմետր հեռու) հայերը աստիճանաբար անցնում են Կալիաթա: Այդ ժամանակ է, որ կառուցվում է հայկական Ս. Նազարեթ եկեղեցին: Այս քարաշեն եկեղեցին կանգուն է

ճինել այսօր 1957 թվականին մեծ շարավ տունից Նազարեթ եկեղեցու հիմնադրանք 250 ամյանը: Երանական տարությանը ներկա գտնվեց նաև Բենգալիայի կառավարիչ օրիորդ Փաստապա Նայզուն:

Հնդկահայ կյանքում մեծ իրադրություն էր Կալիաթայի ճեմարանի հիմնադրումը: Դա տեղի ունեցավ 1821 թվականի ապրիլի 2-ին և այժմ էլ գործում է: Իհարկե, մինչ այդ Կալիաթայում կար հայկական վարժարան, որը բացվել էր Հարություն Քալոսաթը 1798 թվականին նրա աշակերտներից է Հովհաննես Ավզալանը, որը իր ժամանակի հայտնի մտավորականներից մեկն էր: Հայկական վարժարանը 1825 թվականին միացավ ճեմարանին: Ճեմարանի պաշտենական անվանումն է ՍՀայոց Մադրասիական ճեմարան: Նա Կալիաթայում հայտնի է ուղղակի Հայկական Քոլեջ անունով: Ճեմարանը մի քանի հին շենքերից բաղկացած հաստատություն է, որը 143 տարի է, ինչ գոյություն ունի: Ինչպես հայտնի է, այդ ճեմարանի նպատակն է հնդկահայերի մեջ հայոց լեզվի, գրականության և բնշահարպպես ազգային մշակույթի պահպանումը: Նա սկզբից ի վեր այդ նպատակին է ծառայել: Այս ճեմարանում դասավանդել են հայ նշանավոր մտավորականներ՝ Հ. Ազատուրյանը, Է. Ավզալանը, Մ. Քաղիաթյանը և ուրիշներ:

Հուսագրում, 1846 թվականին, Մեծուրդ Քաղիաթյանը բացում է Սանդիսայան վարժարանը: Այստեղ արդեն հայ ազգիկներն ու տղաները ստանում են ազգային կրթություն, սովորում են նաև անգլերեն: Բայց այդ զարոցը իր գոյությունը կրկար պահել չկարողացավ:

1797 թվականին Կալիաթայում հիմնվում է այսպեսու Ընդհանրապես տասնիներորդ դարը, հասկապես 1822—1874 թթ. միջև րեկած ժամանակաշրջանը հնդկահայոց և մասնավորապես Կալիաթայի հայության մտավոր գործունեության ամենարգիմավոր շրջանն է:

1845 թվականին ստեղծվում է ՍԵրաբուտյան ընկերությունը, որի նպատակն էր քարկ սույ զբքի ու պարբերական մամուլի գործին: Այս կազմակերպության անօրինոջ






նաշված է Մաք Ջոն անունով՝ «Նոր Ազգաբարձ»-ի առաջաբանում գրված է, որ այդ անունը ամսագրին ապրիլ, ցանկացել են վերապրեցնել Մազրատում հրատարակվող անդրանիկ հայ պարբերականի՝ «Ազգաբարձ»-ի հիշատակը:

Բայց նրանց սկսած գործը հենշ չէր: Ինչպե՞ս լույս բնծայել մի պարբերական այն զեպրում, երբ ոչ մի ապարանում հայերեն լրիվ տառեր չէին մնացել: Հնից մնացածներն էլ գտնվում էին նազարեթա եկեղեցու մոտ՝ նկուղներից մեկում, իսկ զրոհց բերել ապել էլ այնքան հեշտ չէր: Մտիզվում եղան հայերեն նոր տառեր ձուլել: Այդ գործը ձեռնարկեց Ջեքերդա Հանանյանը: Նա ութ ամիս աշխատեց անվերջ հզվելով, համբերությամբ բացահայտելով մեր բուզմազան տառերի նրբութունները: Եվ վերջապես 1950 թվականի օգոստոսին, առաերի առաջին շաբաթ ու ապա՝ օրինակը ներկայացրեց հանձնախմբի անհամներին և նույն տարում էլ լույս տեսավ «Նոր Ազգաբարձ»:

«Նոր Ազգաբարձ» նյութերի հիմնական մասը հեղկահայ կշանքն է:

Ուշագրավ է ամսագրի այն մասը, որ կրում է «Աշակերտական և մանկական բաժին» անունը: Այդտեղ լույս տեսած նյութերը պատմում են մեր նշանավոր մանկավարժ-գրողների կյանքի մասին: Չտեղզվում են նմուշներ ինչպես Սերովյանի, Դավարոս Աղայանի, Հովհաննես Քումանյանի պատմվածքներից և ոտանավորներից, իսկ երբեմն էլ զբոսբացականների շարագրություններն ու բանաստեղծությունները: Տպագրվում են նևաբրբիր հանկուկներ, զվարճախոս խաղեր, իսալատներ:

Այս բաժինը սփյուռքահայ մամուլի եզակի երևույթներից է: Չնայած մեր հեռավոր հայրենակիցները շատ թերթեր և ամսագրեր են հրատարակում, բայց օփտոտնքով պետք է հիշել, որ զրանցում փոքրերի համար քիչ բան են տպագրվում: Իսկ դա անհրաժեշտ է այն տեսակետից, որ Սփյուռքում մայրենի լեզվով փոքրերի համար մանկական թերթեր և ամսագրեր համարյա չկան, իսկ մանկա-պատանեկան զբաղանքություն էլ շատ քիչ է լույս տեսնում:



Հաւարյուն Շմափոնյան. «Ազգաբարձ»՝ առաջին հայ պարբերականի հիմնադիրն ու խմբագիրը





Հնդկանայեի ծախճով հիմնադրած Կենտրին Մուսղ-Ռաֆայելյան վարժարանը



Կալկաթայի հետ կապված են ոչ միայն Սափղարազի, այլև Չիրաչի հայ գաղութի պատմությունը: Այժմ էլ այդ քաղաքում կան Հնդկաստանի հայ գաղութի հուշարձաններ: Չիրան, որ իր ժամանակին կոչվել է նաև Չինսուրա, հետո՛, սուլտանական տեսակետից, բավական կարևոր վայր է եղել: Բայց ժամանակի ընթացքում կորցրել է իր դիրքը, տեղի տալով Կալկաթային: Այժմ նա զովտական քաղաք է, ուր հայկական գաղութ չկա, բայց կա եկեղեցի և այլ հետաքրքրանքներ: Հրնսուրայի հայոց սուրբ Հովհաննես եկեղեցին, որը հիմնադրվել է 1695 թվականին և ավարտվել 1967 թվականին, Բենդալթայի երկրորդ ամենահին բրիտանական տաճարն է:

Հնդկահայ գաղութներից ամենից զիմացելու՜ր Կալկաթան զուրս եկավ, որտեղ իրենց գոյությունը պահպանում են հնդկահայության կենտրոնակ տարրերը: Կալկաթա քաղաքի շատ փողոցներ կապված են եղել հայերի անվան հետ: Այսօր էլ Կալկաթայի հայտնի փողոցներից մեկը կոչվում է Արմենիան սթրիթ (Հայոց փողոց): Այդ փողոցներում դեռ կանգուն են հայերի կողմից կառուցված շենքերը: Կալկաթայում ներկայումս ապրում է մոտ հազար հայ:

Այժմ ծանոթանանք հնդկահայ գաղութի զբոսայգական կյանքի պատմության հետ, որը կապվում է Կալկաթայի անվան հետ: Կալկաթան է դառնում ուսման զիսավոր կենտրոնը: Այդտեղ տասնիններորդ դարի վերջին հրապարակ են գալիս նոր սերնդի ուսման, կրթության և առաջադիմության վե՛հ՝ զազափարձներով համակված լավագույն մանկավարժների մի խումբ: Գրանցից էր Հովհաննես (Յարություն) Գալուստյանը, որն ուներ դասական կրթություն և իր կյանքի նպատակը համարում է մանկավարժական գործը՝ նա Կալկաթայում հիմնում է իր սեփական զբոսոցը:

Բայց տասնիններորդ դարի սկզբին հնդկահայ ուսումնական գործի պատմության մեջ տեղի է ունենում մի կարևոր իրադրություն: 1821 թվականին հնդկահայ հարուստ վաճառականներ Աստվածատուր Սուրադյանյանի, Մնացա-

կան Վարդանյանի կտակները ու Կալկաթայի հայ հասարակության նյութական միջոցներով և զանազան անհատներին խոշոր նվերներով բացվում է Կալկաթայի «Հայոց Մարդասիրական ճեմարանը»:

Ճեմարանում դասավանդել են հայ մշակույթի նշանավոր ներկայացուցիչներ և մանկավարժներ: Գրանցից է շիրազցի Հովհաննես Ավդալանը կամ Ավդալը: Նա եղել է Գալուստյան վարժարանի սաներից մեկը: Միաժամանակ եղել է լավ հայագետ, տիրապետել է անգլերենին: Նա Մարգասիրական ճեմարանում վարել է նաև տեսչի պաշտոնը: Իր կյանքի և գործունեության քառասուն տարում փայլում էր հմուտ ու բարեխիղճ մանկավարժական արդյունավետ գործունեությունը:

Նա հայերենից անգլերեն է թարգմանում Միքայել Չամչյանի «Հայոց պատմություն»-ը, իսկ անգլիական գրականությունից զրար է թարգմանում «Անգիտաց անպետք», «Ատալա»-ն և այլն:

Ճեմարանի սաներից է Մկրտիչ էմինը, որը հետագայում Մոսկվայի կազարյան ճեմարանում այնքան հայաճի դարձավ:

Քաղես Ավետուճը՝ բացի թարգմանությունից գրել է «Արամայիտ» անունով պատմական վեպ, որը տպագրվել է Կալկաթայում 1846 թվականին: Հարություն Հովանը գրել է «Պատմություն նոր Հուդայի» երեք հատրանոց աշխատությունը, որը տպվել է նոր Ջուղայում 1880 թվականին:

1853—1904 թվականներին Մարդասիրական ճեմարանում հայերենի ուսուցումը հանձնվում է հայտնի գրականագետ Քաղես Ստեփանին: Քաղես վարժապետին փոխարինում է նրա արժանավոր աշակերտ Վաղարշակ Գալուստյանը, որը դասավանդել է մինչև 1919 թվականը: Նա այժմ բընակվում է Ամերիկայում: Ճեմարանը ունեցել է նաև որիշ շատ հայագետներ, բայց բոլորի անունը հիշել հնարավոր չէ:

<sup>1</sup> Հեղինակուհի Հեղինակները շատ հաճախ իրենց ազգանունները անգլերեն գրելիս այնու վերջավորությունը կրճատել են:

Ճեմարանը ունի հին գրադարան, որը կոչվում է «Արատյան գրադարան»: Ժամանակին գրադարանում եղել են շատ ձեռագրեր, որոնք հիմա չեն պահպանվել: Ճեմարանը ունեցել է իր սեփական տպարանը:

Սանդղատյան վարժարանի փակվելուց հետո, Կալկաթայում հայ իրական սեռը զրկվում է մարդկանց լեզվով կրթություն ստանալու հնարավորությունից, որովհետև Մարգասիրական ճեմարանը միայն տղաների համար էր: Սանդղատյան վարժարանի փակվելուց 70 տարի հետո, այն է 1922 թվականին, Գավթի Գավթյանի ծախսով Կալկաթայում բացվում է «Գավթյան օրիորդաց վարժարանը»: Հետագայում Գավթյանը իր ամբողջ ունեցվածքը կտակում է վարժարանին: Ժամանակի ընթացքում Գավթյան օրիորդաց վարժարանի և Մարգասիրական ճեմարանի ծրագրերը նույնացվում են և փաստորեն մեկ է դառնում ուսուցչական կազմը: Որոշում են թողնել վարժարանը որպես ինքնուրույն միավոր, բայց դասեր անցվածքին Մարգասիրական ճեմարանում: Թև՝ Մարգասիրական ճեմարանը և թե՛ Գավթյան վարժարանը ունեն նաև գիշերօթիկ ուսանողներ: Կան քիչ թվով ցերեկօթիկներ, որոնց ծնողները քնակում են Կալկաթայում:

Մարգասիրական ճեմարանի և Գավթյան վարժարանի սովորողների ընդհանուր թիվը կազմում է հարյուր երեսուն հոգի: Գրանք և՛ տեղացի են, և՛ Իրանից ու Իտալից, ինչպես նաև հնդկահայ գաղութի հետ կապված այլ վայրերից:

Հայոց Մարգասիրական ճեմարանը գտնվել է Կալկաթայի Չայնարազար փողոցում՝ հայկական Ս. Նազարեթյան եկեղեցուց ոչ հեռու: Հետագայում (1883 թ.) ճեմարանը տեղափոխվել է Ֆրի Մըջո սթրիթ կոչվող փողոցը, ուր և գրտնրվում է ներկայումս:

Ճեմարանը իր գոյության հարյուր քառասուններկու տարիների ընթացքում կրթություն է տվել ու դաստիարակել աշխարհի բոլոր մասերից եկած հազարավոր ուսանողներին: Այդպիսին է Կալկաթահայ գաղութի ազգային կրթության այդ ստանալը՝ Հայոց մարգասիրական ճեմարանը:

Կալկաթայի հայկական ճեմարանում ավանդվող առար-



կաները բաժանվում են երեք խմբի. առաջին՝ լեզուների, երկրորդ՝ հայագիտական առարկաներ, վերջապես երրորդ՝ հանրակրթական կամ, ինչպես իրենք են ասում, գիտական առարկաներ: Աշակերտները անցնում են չորս լիցեո՝ հայերենը որպես մայրենի լեզու, բնագավրենն ու անգլերենը որպես պետական լեզուներ և գրաբարը, որպես դասական լեզու: Հայագիտական առարկաներից են. գրաբարից բացի, հայոց պատմություն, հայոց լեզու, հայ գրականություն (արևելահայ և արևմտահայ): Ճեմարանում ավանդով հանրակրթական կամ, ինչպես ասացինք, գիտական առարկաներից են՝ բիմիա, ֆիզիկա, հանրահաշիվ, երկրաչափություն, աշխարհագրություն, կենսաբանություն, ժողովուրդների ընդհանուր պատմություն: Ճեմարանում սովորողների առաջագիմությունը զնահատվում է հայտուր միալեզուների (բալեի) սխտեմով: Այնպես, որ հայտուր միալեզուը համազոր է մեր գերազանց թվանշանին: Լիտունը զու մեր միջակում է հավասար ճեմարանի ավարտական դասարանի աշակերտները անցկացնում են երկու տեսակ քննություն: Առաջին տիպի քննությունը ունի ավելի տեղական կամ ճեմարանական բնույթ: Գաջուց է տալիս աշակերտի ընդհանուր առաջադիմությունը: Ըստ այդ քննության արդյունքների, ուսուցչական ժողովը հանձնարարում կամ մերժում է ուսանողի մասնակցությունը պետական քննությանը: Երկրորդ տիպը և կարևորը պետական քննությունն է: Աշակերտները մասնակցում են քրաթարգմանչ երկրորդական քննությանը: Պետական քննության հանձնաժողովի անդամները լինում են գրսիք: Այս քննությունը հանձնելը դիտվում է որպես կարևոր իրադրություն:

Ճեմարանը պահվում է թողած կտակների, Ս. Նազարևի կեղեցուր եկամտի, ինչպես նաև այլ եկամտանների հաշվին: Դրանցով են հոգում ճեմարանի համետա ծախսը, որը, ինչպես ասվեց, պետությունը չի հոգում: Այս բոլորը վկայում են ճեմարանի լուսավորչական դերի մասին: Այդ առթիվ Ք. Գուշակյանը գրում է. «Ճեմարանը, որ ոչ թե միայն հնդկահայոց այլ բովանդակ Հայություն այս վերջին դարերու ամենեն հին և բազմարդյուն կրթական հարկերն

մին է, արդարև արժանի է ամեն հարգանքի և հոգածության: Անկիա հնդկահայոց սպառաչյին համար կենսական նշանակություն ունեցող ամենեն կարևոր հաստատությունն է»:

Հիշատակություն արժանի է նաև Ս. Նազարևի կեղեցուր սպարանը, որը եղել է Կալկաթայում հիմնված հայերեն առաջին սպարանը: Այստեղ էլ 1796 թվականին լույս է տեսնում Զեղրկասանում հրատարակված առաջին հայերեն գիրքը: Գա Սերբուհում Կաթողիկոս Կրնասացի՝ խորաբարով երկի էր Ընդհանրապես Ս. Նազարևի սպարանն էլ իր գործունեությանը հնազույններից է:

Բացի Ս. Նազարևի սպարանից Կալկաթայի հայ սպարանների շարքում պատվավոր տեղ է գրավում նաև Մարգարիտյան ճեմարանի սպարանը: Այս սպարանում լույս են տեսել վնպիր, պատմվածքներ, օրացույցներ, բառարաններ, ստակներ, թերթեր, մանկավարժական գրքույկներ, որոնց հնդկահայ գրականության պատմության մասին մեզ լավ զազախար են տալիս:

Ներկայումս միայն Կալկաթայում է որ գոյություն ունի հայկական համայնք: Ենորհիվ Հայոց Մարգարիտյան ճեմարանի գոյությունը, Կալկաթահայ գաղութը կարողացել է իր կենսունակությունը պահել: Ինչպես արդեն տեսանք, հաստատությունն ունի 142 տարիա պատմություն: Այս մտա մեկ և կես դարվա ժամանակաշրջանում Պարսկաստանից բազմաթիվ ուսանողներ են եկել ճեմարան և շեն վերադարձել իրենց ծննդավայրը, մասնավորը որ ներկա անցադրային դժվարությունները գոյություն չեն ունեցել այդ ժամանակ: Ներկայումս նույն դուրբությունները չկան, բնդհակառակը, պարսկական կառավարությունը խոչընդոտներ է ճարուցում այն ուսանողների համար, որոնք ուղում են արտասահմանյան երկրներում ուսում ստանալ:

Հայոց ակումբը գտնվում է Պոլ Մենշընդում և ունի բնկերային բնույթ: Այստեղ են հավաքվում առհասարակ հին սերունդի ներկայացուցիչները: Ակումբը, երբ կազմակերպում է հրապարակային երեկույթներ կամ բնկերային հավաքույթներ, կալկաթահայության մեծ ծասը գալիս է այստեղ:

Մյուս կազմակերպություններից է Հայոց մարզական ակումբը, որի շուրջն են հավաքված հայ երիտասարդներ: Ակումբն ունի ֆուտբոլի, բասկեթբոլի, ռազգրիի և հրեյի խմբեր: Կազմաթայի ռազգրի հայկական խումբը մի քանի անգամ նվաճել է Կալիֆոռնիա մրցման գավաթը: 1961 թվականի խաղաշրջանում Կալիֆոռնիայի ռազգրիի հայկական խումբը բացառիկ հաջողության է հասել:

Հիշատակության արժանի է նաև Հայկազյան մշակութային միությունը: Սա միակ հայկական մշակութային կազմակերպությունն է ոչ միայն Հնդկաստանում, այլ ամբողջ Հեռավոր արևելքում: Հիմնվել է մոտ 40 տարի առաջ: Իր գոյության ընթացքում նա կալիֆոռնիայի համար ներկայացրել է բազմաթիվ օպերաներ և ներկայացումներ, այդ թվում «Անուշ», «Զար ոսփ», «Օթելլո», «Պատիկ համար» և «Էջմիածին» ներկայացումները: Հայկազյան մշակույթի միությունը վերջին շրջա տարիներին վերակազմակերպվել է և պարբերաբար կազմակերպում է դասախոսություններ, ցուցահանդեսներ, երաժշտական, լրատու և ընկերային հավաքույթներ: Հիշյալ միությունը սերտ կապ է պահում «Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերության հետ», որը մեծապես նպաստում է միության գործունեության՝ իր ուղարկված գրքերով, լուսանկարներով ու այլ նյութերով: Հայկազյան միությունը ընդունում է Հայաստանից կիզը հայ արվեստագետներին ու մտավորականներին և հրապարակային հավաքույթներով ծանոթացնում նրանց տեղի հայ համայնքին:

Մյուս կազմակերպություններից է Կանանց բարեգործական միությունը: Այն կազմակերպվել է Վահան Կոստանյան օպերայահայտի ջանքերով: Այս միությունը կազմակերպում է պարահանդեսներ, տոնավաճառներ և հասոթաբեր այլ ձևանարկներ, հավաքում է գումար, որը ծախսում է կրթական ու բարեգործական նպատակներ համար: Հաջորդ հասարակական կազմակերպությունը Մարդասիրական ճեմարանի շրջանավարտների միությունն է, որը կազմվել է մոտ 50 տարի առաջ, շրջանավարտների ջանքերով: Գոյություն ունի

նաև Հայկական ընկերություն: Չնայած նա գոյություն է ունեցել և անցյալում, բայց դանազան պատճառներով դադարել է գործելուց: Վերջին երկու տարվա ընթացքում մի խումբ հայեր վերակազմել են այդ ընկերությունը, որի նպատակն է պաշտպանել հնդկահայերի ազգային եկեղեցական իրավունքները:

Ներկայումս հայերը Կալիֆոռնիայում ունեն երկու գործող եկեղեցի, մեկը Ս. Նազարեթյան եկեղեցին, երկրորդը Ս. Գրիգոր լուսավորչը եկեղեցին, որը առաջինից ավելի փոքր է և արարողությունները կատարում են միայն շաբաթ օրերը: Ս. Գրիգոր լուսավորչը եկեղեցին կառուցվել է 1910 թվականին: Այս եկեղեցու մոտ է գտնվում հայկական ծերանոցը, որը կառուցվել է Պողոս Մատուրյանի կտակներից մեկի մասի հասույթներով և կրում է նրա անունը: Եռահարկ մի շենք է սա, որտեղ պարում են տնտեսական աննպատ վիճակ ունեցող հայեր:

Ս. Նազարեթյան եկեղեցին, որը գտնվում է քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում, գոյություն ունի երկու և կես դարից ավելի: Նրա դռան վրա գրված է «Հայկական եկեղեցի. 1707 թիվ», որը նրա կառուցման տարեթիվն է: Եկեղեցին թև դրսից և թև ներսից լավ օպավորություն է թողնում: Կառուցել է Ադա Նազարեթյան, այստեղից էլ եկեղեցու ներկա անվանումը: Ժամանակի ընթացքում հնդկահայերը այս եկեղեցու անունով մեծ կտակներ են թողել: Նրա ներկա եկամուտը այլ խոտով կտակների տոկոսը ամսեկան կազմում է քսանհինգից երեսուն հազար հնդկական ուսլի, որը հավասար է մոտ երկու հազար անգլիական ֆունտ ստերլինգի: Բավական մեծ գումար է կտակել 18-րդ դարի վերջում Կալիֆոռնիայում բնակվող համալսող Մասեհ Բարբաքանը, որը մեծ գումար է թողել ոչ միայն Նազարեթյան եկեղեցուն, այլև նոր Նախիջևանի հայկական հաստատություններին: Սակայն իր ժամանակին կտակի եկամտի գումարները նոր Նախիջևան տեղափոխելը ղեկավարությունների հետ է կապված եղել և Միսրայել Նաբանդյանը, որն այնչեղ է Հնդկաստան, մեծ ջանքեր է գործադրել և նրան հաջողվել է նոր Նախիջևան փո-



խաղրել միայն ուրիշներն հազար ուսուցի: Այժմ այդ կտակը հնդկական բանկում հասել է ութ հարյուր հազար ուսուցի: Ի դեպ, Կալվաթայի Ս. Նազարեթյան եկեղեցին դա սովորական եկեղեցի չէ, նա որոշ շարժով հիշեցնում է Հին Լուսնաստանի եփեսոս քաղաքի Արտանիդայի տաճարը, ուր մարդիկ պահում էին իրենց հարստությունները: Ս. Նազարեթյան եկեղեցում էլ նույնպես հնդկահայերից շատերը պահել են իրենց ունեցվածքը, բայց կտակի ձևով և բանկի միջոցով: Դա միակ էրևել էր, որպեսզի օտար աշխարհում իրենց միջոցները օգտագործեին ազգասիրական նպատակների համար: Կալվաթայի Հարություն Արզաբյանը 1843 թվականին Նոր Զուղայում հիմնել է հայկական վարժարան:

Հայերը Կալվաթայում աչքի են ընկել նաև հասարակական կյանքի այլ ասպարեզներում, հատկապես իրավաբանական գործում: 1855 թվականից մինչև 1893 թվականը հայտնի են եղել թվով քառասուն հայ իրավաբաններ: Նրանցից մեկը Քրիզոր Պողոսյանը իր նախնական կրթությունը ստացել է Կալվաթայում և այլա Քենդրիջի համալսարանի իրավաբանական բաժնում: Մեծ անուն է շահել նաև Մելքոն Գասպարյանը, որը մահացել է քառասունեակ տարեկան հասակում: Կալվաթայում է ապրել նաև էմի Աբգարը, Հովսեփ էմինի ազգականուհիներից մեկը, որն իր հարստությունը առատորեն նվիրել է ազգային հաստատություններին: Այս հայրենասեր հայուհին իր ծախսերով 1918 թվականին հրատարակել է Հովսեփ էմինի ինքնակենսագրությունը: էմի Աբգարը եղել է լավ երաժշտագետ: Նա հրատարակել է նաև «Հայ եկեղեցու արարողությունները» խորագրեր կրող գիրք: Նրա ձայնագրած պատարագը մինչև այսօր էլ ամիսը մեկ անգամ կատարում են Կալվաթայի Ս. Նազարեթյան եկեղեցում: Նա հիմնել է «Աբգար» դրամական ֆոնդ, որի եկամուտը հատկացվում է Ս. Նազարեթյան եկեղեցուն:

Կալվաթայի Հայոց Մարզաֆիզիկական ճեմարանի կապակցությամբ խոսենք հնդկահայ ակնավոր մտավորականների մասին: Գրանցից է Մեսրոպ Սեթյանցը, որը եղել է Երջանավոր պատմաբան և հեղինակ բազմաթիվ պատմա-րա-

նասիրական աշխատությունների: Մեսրոպ Սեթյանցը ծնվել է Նոր Զուղայում 1871 թվականի մարտի 15-ին: Եղել է Հայոց Մարզաֆիզիկական ճեմարանի սան: Նա իր ամբողջ կյանքը նվիրել է հնդկահայ գաղութի հոգևոր ու նյութական մշակույթի բեկորների հավաքման շատ կարևոր ու շնորհակալ գործին: Մեսրոպ Սեթյանցը անձամբ շրջել է Հնդկաստանի բոլոր այն շրջանները, ուր ասցյալում բնակվել են հայեր: Նա բացի եկեղեցիներում պահված արխիվներից, որոնք ուսումնասիրել է, գրել է առև գոյություն ունեցող բոլոր գամբանագրերը: Մեծանուն պատմաբանը ուսումնասիրել է նաև շատ օտար աղբյուրներ: Այս բոլորից հետո նա գրել է «Տասպանագրեր» և «Հնդկահայոց» և «Հնդկահայոց պատմությունը» ծավալուն աշխատությունները, որոնց վրա նա աշխատել է շուրջ քառասուն տարի: Մեսրոպ Սեթյանցը կարևոր աշխատանք է կատարել նաև հայ մշակույթը հնդկական և անդլիական շրջաններին ծանոթացնելու, ինչպես նաև Հայ և հնդկի ժողովուրդներին զարավոր բարեկամության կապը ուսումնասիրելու ասպարեզում: Այդ նպատակով էլ նրա նշանավոր աշխատությունը «Հնդկահայոց պատմությունը», որն ամենարեղծակ և ամենաարժեքավոր գործն է հնդկահայ գաղութի ուսումնասիրության ասպարեզում, լույս է տեսել անգլիերեն, որի մեջ ամփոփվում են. «Հայերը և Արևելյան Հնդկաց ընկերությունը», «Գորգին խանը», «Հայերը Արզաթում», «Հայք ի Շանդագրո», «Մարաս ծննդավայր Հայ լրագրության»: Քաջ ծանոթ լինելով հայ ժողովրդի պատմությանը բնիհանրապես և մասնավորապես քառական թվականների նրա վիճակին, նա խանդավառությամբ է քնդունել Հայաստանի հարստացումը և մասնավորապես լույսը 1924 թվականին, երբ արտասահմանյան աշխարհը թերահավատ էր հանդեպ խորհրդային կարգին, նա հանդես է գալիս որպես խորհրդային Հայաստանի ջերմ բարեկամ: 1924 թվականին Հայոց Մարզաֆիզիկական դպրոցում հայ և օտար ունկնդիրների համար կարգացել է Հայաստանի մասին դասախոսություն: Նույն տարին իր դասախոսությունը առանձին գրքուկով լույս է տեսել անգլերեն (The Replc of Armenia):

Մերոպ Սեթյանը հնդկահայոց պատմության մեջ միակն էր, որ հետազոտական աշխատանքի շնորհիվ մոտոցություն խափարից լույս աշխարհ հանեց իր նախնիների կատարած գործերը և մեզ հասցրեց նրանց անմոռաց անունները։ Սակայն փոստասերով պետք է տեսլ, որ նրա աշխատությունները դեռ մեր ժողովրդի սեփականությունը չեն դարձել։

Այնպիսի պատմարանը իր կյանքի վերջին տարիներին, սեփական միջոցներով, վեներտիկից բերել տվեց հայերեն տառեր՝ տպագրական նպատակով։ Բայց նրա թե առողջությունը, թե տարիքը և թե «Հնդկահայ պատմությունը» աշխատությունը թույլ չտվին նրան տպագրական գործը իրականացնելու։

Սակայն Հայոց մարզախորական ճեմարանի աշակերտական միությունը օգտվելով Սեթյանի բերած տառերից, 1933 թվականին սկսեց հրատարակել «Զանգ» ամսաթերթը, որը մի քանի համար տպվելուց հետո զարգարեց։ Մերոպ Սեթյանցը վախճանվել է 1939 թվականի հոկտեմբերի 21-ին Կալիֆոռնիայում։ Նրա արժեքավոր արխիվը համարյա թե ցրտացան է եղել։



Սակայն տարիների ընթացքում Հնդկաստանի հայկական գաղութները աստիճանաբար քանակապես նվազում են՝ հիմնականում կենտրոնանալով Կալիֆոռնիայում։ Ամենից շուտ շարքից դուրս են եկել Սուրբաբի և Աբրահիմ գաղութները, այս Ասիդարգը։

Աբրար Մեծի օրվանից մինչև նոր ժամանակները քսան հազար հայ են եկել Հնդկաստանի հիմնվուրց երկրի հյուրընկալ արհրը։ Բնական օրերի համաձայն նրանք մի քանի անգամ պետք է աճեին։ Բայց այժմ այս երկրում ընդամենը 1000 հայ կա, ներառյալ Դարան, որը այժմ գտնվում է Պակիստանում։

Հնդկահայության հետ են կապված նաև Ինդոնեզիայի

գաղութը, այն էլ Սուրբարյայ, Զահարտա և Մակասար քաղաքները։ Բիրմայի հայերը հիմնականում կենտրոնացած են Խանգունում, հույր կան նաև Մինգապուրում, Չինաստանում, զլխավորապես՝ Խարբին բազարում թվով 50 հայեր, որոնք երկրորդ համաշխարհային պատերազմից հետո փոխադրվել են այլ վայրեր։

Ինդոնեզիայի, կամ ինչպես անցյալում ասում էին, Նիզերլանդական Հնդկաստանի հայ գաղութի պատմությունը սկզբում է տասնութերորդ դարի առաջին կեսից։

Հայերը այստեղ են գաղթել Հնդկաստանի Մադրաս բազարից, եկել են նաև Նոր Զուլայից։

Առաջին հայկական գաղութը հիմնադրվել է Բատավիա (ներկա Զահարտա) քաղաքում։ Ինդոնեզիայի գաղութի պատմությունը զրի է առնված առանձին ընտանիքների պատմության միջոցով։ Նրանք են եղել գաղութի կորիզը և նրանցից շատերը մեծ նվիրատվություններ են հատկացրել զբարոցի և եկեղեցու հիմնադրման, ինչպես նաև հայ մշակութի պահպանման համար։ Մեր օրհնված ու քարի պայպերը ազգի պահպանման և ազգի հետ կապի շահանիչը համարել են հայ ժողովրդի մշակութի պահպանման գործը։

Ժամանակի ընթացքում Ինդոնեզիայի հայ գաղութը զնալով պակասում է և այժմ ամբողջ Ինդոնեզիայում բնակվում է ընդամենը 60 հայ։ Այլ խոսքով տասը անգամ պակաս քան երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ։ Ինդոնեզիայի հայերի համար երկրորդ համաշխարհային պատերազմը շատ տխուր հետևանքներ ունեցավ։ Ճապոնացիները գրավելով Ինդոնեզիան և, հայերին էլ դատելով եվրոպացիների շարքը, մեծ վնասներ պատճառեցին։ Շատերը անցան Ավստրալիա, Հոլանդիա, Իրան և այլն։ Ներկայումս Սուրբարյայում կա 35 հայ, Մակարտայում 15 հայ, Բանգունում 6 հայ, Մակասարում 4 հայ։

Պատերազմի հետևանքով ցրտացան եղավ Զահարտայի Ս. Հովհաննես եկեղեցու հարուստ գրադարանն ու արխիվը։ Ինդոնեզիայի հայ գաղութի պատմությունը զրել է Հորդանան Հորդանանյանը, որը լույս է տեսել Երուսաղեմում



1937 թվականին, իսկ էլիսա էլիսայանը նրկար տարիննր նույնպես գրի է առել Բնգոնեղիաի հայ գաղութի պատմությունը, բայց արեստաննրով պետք է հիշատակել, որ 1963 թվականին նա մահացել է, իսկ նրա ձեռագրերի բախտը մեզ հայտնի չէ:

Հնդկահայության հետ շատ բանով է կապված նաև Ավստրալիայի հայ գաղութի պատմությունը, որը համեմատաբար նոր է: Չնայած սուաչին անգամ հայերը Ավստրալիայում բնակություն են հաստատել ղեռես տասնիններորդ դարի հիսունական թվականներին, բայց այս հեռավոր ամերում, օտարության մեջ, հաջողության չեն հասել և վերագործել են Հնդկաստան:

Գալով Ավստրալիա, հայերը բնակություն են հաստատում հիմնականում Մելբուռն, Սիդնեյ, Մաունթ-Քեմփեր և Ագիլաիդա բաղաբներում: Առկան հիմնական կենտրոնները դանում են Մելբուռնը և Սիդնեյը:

Հայերը մասնագիտացան անտեսության տարրեր ճյուղերում: Բնչպես, օրինակ, Արևելյան գորգավաճառության մեջ (Կայծքարյան բնանիրը), ժխախտի մշակման մեջ (Քյուրչյան բնանիրը), մուշտակի գործում (Շալճյան բնանիրը), իսկ Ակինյան բնանիրը արի բնկավ լինական ընտիր մետաքսի և ասեղնագործի ներմուծման մեջ:

Հայերը մասնակցում են նաև երկրի գիտական կյանքին: Այսպես, օրինակ, նշանավոր է Մելբուռնի համալսարանի ֆրանսիական գրականության պրոֆեսոր Նազարեթ Կարսկեզյանը:

Այստեղ հայերը ուշիմ և աշխատասեր մարդկանց համբավ ունեն Ավստրալիայի հայ գաղութի բնակչության թիվը հասնում է 1000 մարդու, որից Սիդնեյում բնակվում է 700 հոգի, Մելբուռնում 200, մնացածը այլ բաղաբներում:

Ավստրալիայի հայ գաղութը սերտորեն կապված է էլ-միածնի հետ և մտնում է Հեռավոր Արևելքի թեմի մեջ: Հայերը Սիդնեյում վերջերս սեփական կեղծիցի հիմնեցին:

Թե Արամայիս Միրզոյանը և թե բարերար Հարություն Ակինյանը կատարում են ազգօրուտ աշխատանք՝ սերտ կապ

պահպանելով հայրենիքի հետ, համախմբում են Ավստրալիայի հայերին և նպաստում ազգպահպանման գործին:

Ավստրալիայի հայ գաղութը հրատարակում է սեւյոս անունով պարբերական, որի խմբագիրն է Արամայիս Միրզոյանը: Փարբերականը հիմնադրել է Աստղիկ Սրբազանց 1955 թվականին:

Հնդկաստանի և նրա հետ կապված երկրների հայության շտեռակը գիտենալու համար բերում ենք Կալկաթայում հրատարակված «Նոր Աղաբարս»-ի 1951 թվականի երկրորդ համարում տրված աղյուսակը:

Քաղաք	տուն	արական	կցական	ընդհ.	կեղք.	բահ.	զոյրոց
Կալկաթա	200	506	409	915	3	2	2
Ասանուլ	39	54	48	102	—	—	—
Բոսիդեյ	25	31	22	53	1	1	—
Մազբաս	8	15	17	32	1	1	—
Խաջա	43	53	22	75	1	1	—
Ինանդուն	54	72	66	138	2	—	—
Սիդգապուր	6	12	10	22	1	—	—
Սուբաբայա	145	383	247	630	2	1	1
<b>Ընդամենը</b>	<b>520</b>	<b>1126</b>	<b>841</b>	<b>1967</b>	<b>11</b>	<b>6</b>	<b>3</b>

Այսպիսին է հնդկահայ գաղութը՝ պատմական և աշխարհագրական առումով: Փաստը մնում է փաստ, որ մեր հայրենակիցները կարողացան մինչև այսօր դիմանալ և կենտրոնացան հիմնականում Կալկաթայում: Նա է ոտատակ, ինչպես ասում են, Ինդոսից այն կողմ եղած հայ գաղութներին:

Հնդկահայ գաղութի պատմությունը ուսանելի է այն տեակետից, որ նա ապացուցում է, թե թվով չի որոշվում սվյալ ժողովուրդը, այլ դուրսիցում ունեն ուրիշ նորմաներ: Դրանց մեջ կարևոր են եղել նաև իմացական ու բարոյական կարողությունները: Հեռավոր Հնդկաստանում հայերը աշխատել են պահպանել իրենց գիրն ու գրականությունը, որոնք շողովրդին ապրիցեսող վճռական գործոններ են: Անչպես,

ինչպես ամեն մի մարդ ծնող ունի, նույնպես և ամեն մարդ ունի իր հայրենիքը: Ի՞նչա է. հեղհահայերը շատ հեռու են եղել իրենց հայրենիքից, բայց նրանք սերունդից սերունդ հաղորդել են իրենց պաճակներին այն փաստը, որ նրանց պապերը պատմական Հայաստանի Աշխարատ աշխարհից են, որ նրանք միշտ պետք է վառ պահեն իրենց հայրենիքի սիրը և նրա հետ կապեն իրենց երազներներն ու ցանկությունները: Դա անհրաժեշտ է բոլոր ժողովուրդներին, և առանձնապես հայրենիքից հեռու մարդկանց:

Հայրենիքի նկատմամբ այդ չեքոմ սերը այսօր էլ պահում է աշխարհում մեկ սփռված մեկ և կես միլիոն արտասահմանյան հայությունը:

Աղզերի ու ցեղերի այդ զիջխարի օվկիանոսում՝ սփյուռքահայությունն նալը իր փարոսն է համարում հայրենիքը՝ Հայաստանը, նրա հետ կապելով իր հույանն ու իղձերը:

## ՄՆԱՍ ԲԱՐՈՎ, ՀՆԴԿԱՍԱՆ

Ահա և Հեղկաստանի մասին դիրքն ավարտված է: Ջեր աչքի առնելով անցյալ այդ երկիրը իր կյանքի շատ կողմերով ու առանձնահատկություններով՝ իր մեծ ու աղմկալից քաղաքներով, նրանց «հազար ու մեկ գիշերներին» հեքիաթային թաղերով, իր հին քաղաքակրթության պատմական հուշարձաններով և, ինչպես ասում են, «հեղկական հրաշալիքներով»:

Փակելով այս գրքի վերջին էջը, սիրելի ընթերցող, համոզվեցիր, որ հեղինակը իր նկարագրած երկիրը գիտել է նախ և առաջ աշխարհագրագետի աչքերով: Նրան հարազատ են եղել այդ երկրի կյանքի այն բոլոր կողմերը, որոնց հետ առնչվում է աշխարհագրությունը, այդ թվում ոչ միայն երկիրն ու՝ մարդիկ, նրանց պատմական անցյալն ու ներկան, այլև նյութական մշակույթի հուշարձանները. չէ՞ որ դրանք նույնպես Հեղկաստան են:

Հեղկական կյանքի շատ կողմերի հետ ծանոթանալու, նրա «հրաշալիքները» տեսնելու համար ամեն տարի աշխարհի բոլոր կողմերից մեծ թվով մարդիկ են այցելում այդ երկիրը: Եվ միշտ նրանք լավ հուշերով են քաժանվում ոչ միայն մեծ անցյալ ունեցող, այլև մեծ ապագա խոստացող այդ երկրից:

Հեռանալով Հեղկաստանից, նրանք գնում են աշխարհում մեկ տարածելու այդ երկրի հմայքը, երկիր, որն իր մեծ հա-



բեանի՝ Չինաստանի նման այնքան պարզենք է մատուցել մարդկութեան բազմաբարձրության գանձարանին:

Ճիշտ է սոված, որ մարդը կզրի չի՝ նրան միշտ էլ հետաքրքրում է այլ երկրների ու ժողովուրդների կյանքը: Չէ՞ որ մարդկանց հայրենիքներն իրարից տարբերվում են թե իրենց բնութամբ, թե բնակիչների զբաղմունքով ու հոգևորով:

Մարդկանց կյանքի ու ապրուստի բազմազանությունը քիչ շարժով չի պայմանավորված նաև նրանց հայրենիքի բնական պայմանների առանձնատեսակությամբ: Այսպես, օրինակ՝ գրենլանդացի էսկիմոսն իր ամբողջ կյանքն անց է կացնում ձյան ու սառույցների վրա, միշտ փաթափված մուշտակի մեջ, մինչդեռ Կոնգոյի կենդրի համար անբրեւակայի կն հյուսիսի ցրտաշունչ ձմեռներն ու սառնամանիքները:

Սկանդինավյան թերակղզու ծայր հյուսիսում գտնվող Համմերֆենտ բազրիք մարդիկ զբաղվում են միայն ձկան որսով, այն ժամանակ, երբ Սառցալից տաթակեղ օտարների բնակիչների ապրուստի դիտավոր միջոցը փյունիկյան արմավենու մշակումն է: Ինչպես արդևս ասել ենք, Հնդկական թերակղզու վրա գանձող Դեկանի սարսափի բնակիչների ամենամեծ շարքը երաշտն է, մինչդեռ հյուսիսային դիտավոր հողեր իր երկրից ջուրը դուրս մղելն է: Կամ վերցնենք այսպիսի մի օրինակ. եթե Հյուսիսային Ամերիկայի «Մեյոլաջ հովտում» անձրև դալն արտաօվոր երևույթ է, այսա Չերասունչաշուն (Հիմնալայների հարավային լանջում), գրիթն ամեն օր շորդառատ անձրև է գալիս:

Այս բոլորի և շատ այլ առանձնատեսակությունների մասին մենք իմանում ենք ճանապարհորդների պատմածներից ու աշխարհագրությունից՝ այդ հրապուրիչ ու հետաքրքրական դիտությունների:

Սակայն, աշխարհագրությունը ոչ միայն բավարարում է մեր հետաքրքրասիրտությունը, որն անկասկած նորը ճանաչելու ուրախ զգացում է, այլև ունի կենսական արժեք: Աշխարհագրության սոված տեղեկություններով են ժողովուրդները իրար ճանաչում, իրար հետ տեսնակական ու մշակու-

թային կապ պահպանում: Առանց աշխարհագրական դիտության՝ երկրների, ժողովուրդների ու բազմաբնակիչ անունները, որոնց մասին մենք կարգում ենք զրականության մեջ, կմնային որպես սոսի հնչյուններ:

Մեր օրերում տեսնում ենք, թե ինչպես տեխնիկայի ու դիտության առաջընթացը հսկայական փոփոխություններ է մտցնում աշխարհում: Բայց դրանք հետ միասին պետք է տեսնել նաև այն տեղաշարժերը, որ տեղի են ունենում ժողովուրդների, հասկապես ասիական ժողովուրդների սոցիալական կյանքում: Մեր աչքերի առաջ ասիական երկրներում բնակվող միլիոնավոր մարդկանց կյանքում կատարվել են հիանալի փոփոխություններ: Չնայած տեղի ունեցած այդ առաջընթացին, համենայն դեպս, այդ երկրները պահում են իրենց բնորոշ, տիպական: Չինաստանը մնում է Չինաստան, Հնդկաստանը մնում է Հնդկաստան, Ժապոնիան մնում է Ժապոնիա իրենց ինքնատիպ մշակույթով, ուրույն պատկերներով: Այս տեսակետից էլ ամեն մի երկիր և ամեն մի ժողովուրդ հետաքրքիր ու մեծ է չլուրջի:

Այսպիսով, աշխարհագրությունը մարդուն օգնում է աշխարհը տեսնելուն, ճանաչելուն, որով մարդու մոտ առաջացնում է հիացմունքի զգացում, հիացմունք նկարագրած երկրների նկատմամբ և դրանք սեփական աչքերով տեսնելու մեծ ցանկություն: Այսպիսով, աշխարհագրությունը սեր է ստաշացնում դպի ճանապարհորդությունը, իսկ վերջինս էլ հնարավոր է դարձնում տեսնելու շատ հետաքրքիր երկրներ, նպաստում ավելի ու ավելի լայնացնելու մեր առաջ աշխարհը, օգնում է տեսնել նրան այնպես, ինչպես նա կա և սիրել այն:

Ուստ անվանի գրող Բ. Ա. Գոնչարովը իր «Փրեդաս Պայլաթա» ճանապարհորդական նշանավոր գրքում ասում է. «Ինչ գեղեցիկ է կյանքը, ի միջի այլոց նաև նրա համար, որ մարդ կարող է ճամփորդել»:

Ինչպես տեսնում ենք, աշխարհագրությունը իր մեջ

պարունակում է ոսմանտիկայի շատ տարրեր, իսկ ոսմանտիկան ազնվացնող մեծ ուժ ունի:

Ճիշտ է, ճանապարհորդությունը հաճելի բան է, բայց ոչ բոլորին է այն վիճակվում: Քացի այդ, աշխարհն այնքան մեծ է, որ մարդ ամենուրեք չի կարող լինել: Այս բացը մարդիկ լրացնում են կարողալով: Հեղինակն իր նպատակին հասած կլինի, եթե այս գիրքը, որի վերջին էջը պատրաստվում էք մտակել, որոշ չափով կարողանա օգնել այդ գործերին:

Քարի ճանապարհ եմ ցանկանում քեզ՝ սիրելի ընթերցող, քո հաջորդ ուղևորությունը:

Մնաս բարով «Արևելքի մարզարիտ», մնաս բարով, արձնացող Հնդկաստան:







պարունակը  
 տիկան ազ  
 ճիշտ  
 ոչ բուրբին  
 մեծ է, որ  
 դիկ լրացն  
 սած կլինի  
 եք փակել,  
 Քարի  
 քո հաշտը  
 Մնա  
 արժնացո

ԹԻՎԱՆԿԱԿՈՒՅՈՒՆ

Հեղինակի կողմից	3
Ներածություն	5
Հեղկաստանի արևմտյան դարբասը	17
Հեղկական հրաշայիթների աշխարհում	30
Հեղկաստանի արևելյան դարբասը	45
Հիմալայների պարզեք	62
Սրբազան բազարում	70
Ազրան և նրա Քաչ-Մահալը	80
Հեղկական Պամդելում	99
Ռաչպուսանների երկրում	93
Հեղկական հավերժ բազարում	103
Փենջարում	120
Հիմալայներում	135
Քաշմիրի հովտում	140
Աշխարհի ամենամեծընտ փայտում	144
Հարավային Հեղկաստանում	151
Եվրոպացիները Հարավային Հեղկաստանում	160
Մայսուրում	175
Արևոտ հարավի դարբասը	183
Արավելների Հեղկաստանում	193
Հեղկաստանի բնակչությունը, նրա կենցաղն ու մշակույթը	200
Հայերը Հեղկաստանում	238
Մնաս բարով, Հեղկաստան	271



Կամար Մեկնոնի Ավետիսյան  
ԱՐԵՎԵԼԵԻ ՄԱՐԳԱՐԻՏԷ

Խմբագիր՝ էդ. Ս. Ավագյան  
Գեղ. Խմբագիր՝ Մ. Սասոյան  
Տեխ. Խմբագիր՝ Կ. Սարգսյան  
Վերատուգող սրբագրիչ՝ Լ. Գլխոյան

ՎՅ 01038

Պատվեր 66

Տիրաժ 10000

Հանձնված է արտադրության 9/11—1964 թ.,  
Ստորագրված է տպագրության 25/IV—1964 թ.,  
Քուղթ՝ 84 × 1081/32՝ Տպ. 17,25 մամ. — 14,14 պայմ. մամ.,  
Հրատ. 11,8 մամ. + 11 ներդիր,  
Գինը՝ 61 կոպ.

ՀՍՍՌ Մեծատրեհերի սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆ  
արդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Սբեան,  
Ալավերդյան փող. № 65.

32(54)



32(54)

U-79

h2

